

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆԸ/ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքի բնորոշումը և փարափեսակները

Համաձայն Միջազգային հաշվարկների բանկի (BIS) կողմից սահմանված հասկացության և սույն փաստաթղթի իմաստով՝ **Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքը** (այսուհետ՝ ՖՇԵ) մասնակից կազմակերպությունների, այդ թվում՝ համակարգի օպերատորի, միջև բազմակողմանի հարաբերությունների համակարգ է, որն օգտագործվում է վճարումների, արժեթղթերի, ածանցյալ գործիքների (դերիվատիվների) կամ այլ ֆինանսական գործառնությունների քլիրինգի, վերջնահաշվարկի կամ հաշվառման ապահովման նպատակով: Ընդհանուր առմամբ ՖՇԵ-ն դիտարկվում է որպես բազմակողմանի համակարգ՝ ներառելով համակարգի մասնակիցներին, սակայն հասկացությունը կարող է դիտարկվել նաև որպես առանձին իրավաբանական կամ ֆունկցիոնալ մարմին, որը ստեղծված է կենտրոնացված ու բազմակողմանի վճարային, քլիրինգային, վերջնահաշվարկի և հաշվառման գործառնույթ իրականացնելու համար և որոշ դեպքերում կարող է չներառել մասնակիցներին, ովքեր օգտվում են այդ համակարգից: Ուստի կախված տվյալ ՖՇԵ-ի առանձնահատկություններից՝ սույն դրույթները կարող են տարածվել ինչպես ՖՇԵ-ի և իր մասնակիցների վրա որպես միասնական ամբողջություն, այնպես նաև՝ յուրաքանչյուրին առանձին: ՖՇԵ-ի սահմանման ներքո չեն դիտարկվում ֆինանսական կազմակերպությունների և իրենց հաճախորդների միջև երկկողմանի հարաբերությունները, ինչպիսին են, օրինակ, երկու բանկերի թղթակցային հարաբերությունները:

ՖՇԵ-ները կարող են էապես տարբերվել միմյանցից ինչպես կառուցվածքով ու հնարավորություններով, այնպես նաև ֆունկցիոնալությամբ (կատարվող գործառնությունների բնույթով) և կառավարման կառուցվածքով: ՖՇԵ-ները կարող են ունենալ տարբեր կազմակերպա-իրավական կառուցվածք, ներառյալ՝ ֆինանսական հաստատությունների միություններ, ոչ-բանկ քլիրինգային մարմիններ և մասնագիտացված բանկային կազմակերպություններ: ՖՇԵ-ները կարող են հանդիսանալ կենտրոնական բանկերի սեփականություն և վերջինս հանդիսանա համակարգի օպերատոր, կարող են նաև տնօրինվել և կառավարվել մասնավոր հատվածի կողմից: ՖՇԵ-ները կարող են լինել շահույթ հետապնդող և ոչ: Կազմակերպա-իրավական ձևից կախված ՖՇԵ-ների վրա կարող են տարածվել լիցենզավորման ու կարգավորման տարբեր պահանջներ (օրինակ՝ բանկ և ոչ բանկ), ինչպես երկրի ներսում, այնպես նաև տարբեր իրավազորությունների (jurisdiction) ներքո:

Այսպիսով՝ ՖՇԵ-ի տարատեսակ են հանդիսանում.

- վճարային համակարգերը (payment systems/PS, այսուհետ՝ նաև ՎՀ),
- Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաները (central securities depositories/CSD, այսուհետ՝ նաև ԱԿԴ),
- արժեթղթերի հաշվարկային համակարգերը (securities settlement systems/SSS, այսուհետ՝ նաև ԱՀՀ),
- Գլխավոր գործընկերները (central counterparties/CCP, այսուհետ՝ նաև ԳԳ),
- Առևտրի ռեպոզիտարիաները (trade repositories/TR, այսուհետ՝ նաև ԱՌ):

ՖՇԵ-ների վերոնշյալ տարատեսակների առանձնահատկություններին ծանոթանալու համար որպես հիմք կարող է հանդիսանալ Միջազգային հաշվարկների բանկի կողմից 2012թ. ապրիլին հրապարակված “Principles for Financial Market Infrastructures” փաստաթուղթը (էջ 8-9), որը Սկզբունքների էությունը սահմանող հիմնական փաստաթուղթն է (այսուհետ՝ ՖՇԵ Առանցքային Սկզբունքներ):

Հաշվի առնելով ՖՇԵ-ների վերոնշյալ տարատեսակների առանձնահատկությունները՝ վերջիններիս նկատմամբ ստորև ներկայացված 24 Սկզբունքները կարող են տարածվել դիֆերենցված՝ ինչպես ըստ սկզբունքների, այնպես նաև ըստ միևնույն սկզբունքի տարբեր առանցքային դրույթների: Յուրաքանչյուր Սկզբունքի դիտարկման համար նշված է, թե որ տեսակի ՖՇԵ-ների վրա է տարածվում տվյալ սկզբունքը, և եթե առկա են նաև տարբերություններ ըստ միևնույն սկզբունքի տարբեր Առանցքային դրույթների, ապա նաև՝ յուրաքանչյուր Առանցքային դրույթի սկզբում:

Տեղեկատվության բացահայտման անհրաժեշտությունը, բացահայտվող տեղեկատվության շրջանակը և ընդհանուր ցուցումներ՝ անհրաժեշտ տեղեկատվության լրացման ու տրամադրման համար

Համաձայն Միջազգային հաշվարկների բանկի կողմից սահմանված քաղաքականության՝ համաակրգային կամ հանրային նշանակություն ունեցող ՖՇԵ-ները պետք է համապատասխանեն ՖՇԵ-ների նկատմամբ սահմանված Առանցքային Սկզբունքներին: Սկզբունք 23-ի Առանցքային դրույթ 5-ին համապատասխանելու համար պետք է լրացնեն ու հրապարակայնորեն բացահայտեն CPSS-IOSCO-ի կողմից սահմանված ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին առնչվող հրապարակման ենթակա տեղեկատվություն, որն առնչվում է իրենց կանոններին, հիմնական ընթացակարգերին և շուկայական տվյալներին:

Տեղեկատվության բացահայտման նպատակն է բարելավելու ՖՇԵ-ի թափանցիկությունը՝ իր կառավարման ընդհանուր մատեցումների, գործառնությունների և ռիսկերի կառավարման մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տրամադրելով իր ներկա և հնարավոր ապագա մասնակիցներին, շուկայի այլ մասնակիցներին, տարբեր գերատեսչություններին և ընդհանուր հանրությանը:

Ստորև ներկայացվում է տեղեկատվության այն շրջանակը, որը պետք է բացահայտի ՖՇԵ-ի կողմից: Վերջինս պետք է լրացնի կից ներկայացվող «ՖՇԵ-ների կողմից հրապարակվող տեղեկատվության ձևանմուշը», որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

- ✚ բացահայտման/ հրապարակման ենթակա տեղեկատվության առանցքային դրույթների ամփոփումը,
- ✚ բացահայտվող տեղեկատվության վերջին թարմացումից հետո կատարված նշանակալի փոփոխությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,
- ✚ ՖՇԵ-ի գործառնությունների և նրա կողմից սպասարկվող շուկաների նկարագրությունը, իր կողմից մատուցվող ծառայությունների և կատարվող գործառնությունների վերաբերյալ ընդհանուր վիճակագրական տեղեկատվություն, ՖՇԵ-ի կազմակերպչական կառուցվածքի,

իրավական և կարգավորման դաշտի, համակարգի կառուցվածքի ու մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվություն,

- ✚ յուրաքանչյուր առանցքային սկզբունքի գծով հրապարակվող տեղեկատվության ամփոփ նկարագրություն, որը լինի բավարար մանրամասնությամբ և այնպիսի բովանդակությամբ, որ հնարավորություն տա ընթերցողին հասկանալ ՖՇԵ-ի դիրքորոշումը տվյալ սկզբունքը դիտարկելիս,
- ✚ հրապարակայնորեն հասանելի, այդ թվում՝ բացահայտված տեղեկատվության մեջ նշված հղումների վերաբերյալ տեղեկատվության/փաստաթղթերի ցանկը՝ հնարավորություն տալով ընթերցողին հասկանալ ՖՇԵ-ի դիրքորոշումը՝ յուրաքանչյուր առանցքային սկզբունքը դիտարկելիս:

Բացահայտվող տեղեկատվության մեջ պետք է ներառվեն նաև գրաֆիկներ և համապատասխան աղյուսակներ, որոնք հնարավորություն կտան ստանալու ընդհանուր պատկերը: Վերջիններս պետք է ուղեկցվեն տեքստային նկարագրությամբ: Բոլոր այն տեղերում, որտեղ հղում է արվում կարգավորող ակտերի կամ կանոնների վրա, պետք է պարունակվի տեղեկատվություն, թե որտեղ է գտնվում աղբյուրը և նշվի համապատասխան հղումը: ՖՇԵ-ն կարող է տեղեկատվությունը տրամադրել կոնկրետ հարցադրումների պատասխանի ձևով, որը չնայած պարտադիր չէ, սակայն ավելի համապարփակ է ներկայացնում, թե որքանով է ՖՇԵ-ն համապատասխանում նշված առանցքային դրույթերին և նվազեցնում է հետագա հարցադրումների անհրաժեշտությունը: Վերջիններս պետք է խմբավորված լինեն ըստ առանցքային դրույթների:

Բացահայտվող տեղեկատվության արդիականությունն ապահովելու համար պահանջվում է, որպեսզի ՖՇԵ-ն կատարի թարմացումներ՝ իր կանոններում կամ շուկայական պայմաններում ցանկացած նշանակալի փոփոխությունների դեպքում, և առնվազն՝ երկու տարին մեկ:

ՖՇԵ-ն պետք է ապահովի իր կողմից բացահայտվող տեղեկատվության հեշտ հասանելիությունը, օրինակ՝ համացանցի (ինտերնետի) միջոցով:

ՖՇԵ-ների կողմից հրապարակվող տեղեկատվության ձևանմուշ

Լրացնող հաստատություն՝

(համապատասխան ՖՇԵ-ի անվանումը)

Իրավագրություն(ներ), որոնց ներքո գործում է տվյալ ՖՇԵ-ն

(թվարկել իրավագրության երկրները)

ՖՇԵ-ի գործունեությունը կարգավորող, վերահսկող և հսկողություն իրականացնող մարմին(ներ)՝

.....

[նշել իրավասու մարմինները]

Հրապարակման ամսաթիվը՝

[ամսաթիվ]:

Սույն հրապարակումը կարելի է նաև գտնել՝

[նշել կայքի հասցեն]

Լրացուցիչ տեղեկությունների համար, կարող եք դիմել

[կոնտակտային տվյալներ]:

I. Ընդհանուր ամփոփում

Այս բաժնում պետք է ամփոփված լինեն հրապարակման ենթակա տեղեկատվության առանցքային դրույթները, այդ թվում՝ ՖՇԵ-ի և նրա գործունեության, մասնակիցների, իրավական և կարգավորման դաշտի, հիմնական ռիսկերի և ռիսկերի կառավարման արարողակարգերի մասին հակիրճ տեղեկատվություն:

II. Նշանակալի փոփոխությունների ամփոփում՝ վերջին հրապարակումից հետո

Այս բաժնում պետք է ամփոփ ներկայացվեն ՖՇԵ-ի կազմակերպչական կառուցվածքում, մատուցվող ծառայությունների շրջանակում, ենթակառուցվածքի սկզբունքներում, կանոններում, սպասարկվող շուկաներում և կարգավորման դաշտում նշանակալի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել նախորդ (վերջին) հրապարակումից հետո: ՖՇԵ-ն պետք է նշի հրապարակված տեղեկատվության այն բաժինները, որտեղ ներառված են այդ փոփոխությունները:

III. Ընդհանուր տեղեկություններ ՖՇԵ-ի վերաբերյալ

ՖՇԵ-ի և նրա կողմից սպասարկվող շուկաների ընդհանուր նկարագրությունը

Այս բաժնում ներկայացվում է ամփոփ նկարագրություն՝ ՖՇԵ-ի կողմից առաջարկվող ծառայությունների և նրա կողմից կատարվող գործառույթների վերաբերյալ: Այս բաժնում են արտացոլվում նաև ՖՇԵ-ի կողմից սպասարկվող շուկաների, ինչպես նաև այդ շուկաներում նրա կատարած դերի վերաբերյալ ամփոփ նկարագրությունը: Բացի այդ, այս բաժինը պետք է ներառի ՖՇԵ-ի ծառայությունների և գործառնությունների վերաբերյալ ընդհանուր վիճակագրական տվյալները, այդ թվում՝ յուրաքանչյուր մատուցվող ծառայության գծով ընդհանուր ծավալային և քանակային վիճակագրություն, միջին համախառն օրական վճարումները, և ՖՇԵ-ի գործառնական հուսալիության վերաբերյալ տեղեկատվություն:

ՖՇԵ-ի ընդհանուր կազմակերպչական կառուցվածքը

Այս բաժինը պետք է տրամադրի ՖՇԵ-ի կազմակերպչական և կառավարման կառուցվածքի մասին ամփոփ նկարագրություն, այդ թվում՝ ՖՇԵ-ի կառավարման քաղաքականության, կառավարչական մեխանիզմի և կառուցվածքի վերաբերյալ:

Իրավական և կարգավորման դաշտ

Այս բաժինը պետք է տրամադրի ամփոփ նկարագրություն ՖՇԵ-ի իրավական և կարգավորման դաշտի վերաբերյալ, այդ թվում՝ FMI-ի իրավական և սեփականության կառուցվածքի մասին, ՖՇԵ-ի գործունեության յուրաքանչյուր առանցքային ոլորտի համար իրավական հիմքերը, ինչպես նաև ՖՇԵ-ի կարգավորման, վերահսկողության և հսկողության շրջանակները:

Համակարգի կառուցվածքը և գործառնությունները

Այս բաժինը պետք է նկարագրի ՖՇԵ-ի կառուցվածքը և իրականացվող գործառնությունները: Այն պետք է ներառի գործարքների կատարման գործընթացի բնորոշ կենսացիկլի հստակ նկարագրությունը: Տեղեկատվությունը պետք է հստակ առանձնացնի/ընդգծի, թե ինչպես է ՖՇԵ-ն կատարում/մշակում գործառնությունները, այդ թվում՝ ժամանակացույցը, գործարքների վավերացման և ստուգման գործընթացները, ինչպես նաև ներգրավված կողմերի պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:

IV. Սկզբունք առ սկզբունք ամփոփ տեղեկատվության հրապարակում

Այս բաժինը պետք է ապահովի յուրաքանչյուր առանցքային սկզբունքի գծով հրապարակվող տեղեկատվության ամփոփ նկարագրություն, որը լինի բավարար մանրամասնությամբ և այնպիսի բովանդակությամբ, որ հնարավորություն տա ընթերցողին հասկանալ ՖՇԵ-ի դիրքորոշումը տվյալ սկզբունքը դիտարկելիս:

Սկզբունք առ սկզբունք հրապարակման ենթակա ամփոփ տեղեկատվություն

Սկզբունք X

Սկզբունքի նկարագրության տեքստը

Ամփոփում	Այս բաժինը պետք է ապահովի յուրաքանչյուր առանցքային սկզբունքի գծով հրապարակվող բավարար մանրամասնությամբ և անհրաժեշտ բովանդակությամբ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև ցանկացած այլ լրացուցիչ տեղեկատվության, որը հնարավորություն կտա ընթերցողին հասկանալ ՖՇԵ-ի դիրքորոշումը տվյալ սկզբունքը դիտարկելիս: Յուրաքանչյուր սկզբունքի հրապարակման ենթակա ամփոփ նկարագրության լրացման ժամանակ ՖՇԵ-ն պետք է առաջնորդվի ՖՇԵ-ներին ներկայացվող «Հարցադրումներ՝ ըստ ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին ներկայացվող սկզբունքների համար սահմանված առանցքային դրույթների» փաստաթղթով սահմանված դրույթներով: Առկայության դեպքում պետք է ներառվեն նաև համապատասխան հղումներ այն փաստաթղթերին կամ տեղեկատվության աղբյուրներին, որոնք հասանելի են հանրությանը, որպեսզի հիմնավորեն ներկայացված մեկնաբանությունը
Առանձին հարցադրումների պատասխաններ (ըստ ցանկության)	Այս մասը, որը պարտադիր չէ լրացման համար, կարող է մանրամասն տեղեկատվություն պարունակել՝ որպես վերոնշյալ կոնկրետ հարցադրումների պատասխան: Վերջիններս պետք է խմբավորված լինեն ըստ առանցքային դրույթների:

V. Հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության/փաստաթղթերի ցանկ

Այս բաժնում պետք է նշվի հրապարակայնորեն հասանելի, այդ թվում՝ ներկայացված տեղեկատվության մեջ նշված հղումների վերաբերյալ տեղեկատվության/փաստաթղթերի ցանկը՝ հնարավորություն տալով ընթերցողին հասկանալ ՖՇԵ-ի դիրքորոշումը՝ յուրաքանչյուր առանցքային սկզբունքը դիտարկելիս:

**ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ**

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 1. Իրավական հիմքեր

ՖՇԵ-ն իր գործունեության բոլոր էական ու առանցքային բնագավառների համար պետք է ունենա լավ հիմնավորված, հստակ սահմանված, թափանցիկ և գործուն/ազդեցիկ իրավական հիմքեր բոլոր իրավագործություններում:

Քանի որ բոլոր համապատասխան իրավագործություններում ՖՇԵ-ի գործունեության լավ հիմնավորված իրավական հիմքերը շատ կարևոր են ՖՇԵ-ի ընդհանուր կայունության համար, այս Սկզբունքը պետք է դիտարկվի այլ Սկզբունքների հետ համատեղ՝ որպես մեկ ամբողջություն:

Առանցքային դրույթ 1. Իրավական հիմքերը պետք է ապահովեն բարձր աստիճանի վստահելիություն ՖՇԵ-ի գործունեության բոլոր էական ու առանցքային բնագավառների համար՝ բոլոր համապատասխան իրավագործություններում:

Էական/առանցքային բնագավառներ և համապատասխան իրավագործություններ

Հ. 1.1.1 Որո՞նք են ՖՇԵ-ի գործունեության առանցքային բնագավառները, որոնք պահանջում են բարձր մակարդակի իրավական վստահելիություն. օրինակ՝ ֆինանսական գործիքների նկատմամբ իրավասություններն ու շահերը, վերջնահաշվարկի վերջնականությունը, զուտացումը, փոխգործունեությունը/համադրելիությունը, արժեթղթերի ապանյութականացումը և իմոբիլիզացիան (շրջանառությունից փաստացի հանելը և Կենտրոնական դեպոզիտարիայում սեփականատերերի հաշիվների վրա հաշվառումը), «առաքում վճարման դիմաց», «վճարում վճարման դիմաց» և «առաքում առաքման դիմաց» գործընթացների ապահովումը, ապահովվածության գործընթացները (ներառյալ հատուկ պայմաններով գործող «մարժինալ» կամ երաշխավորման դեպոզիտի համար նախատեսված հաշիվները) և սնանկության գործընթացները:

Հ. 1.1.2 Որո՞նք են ՖՇԵ-ի գործունեության յուրաքանչյուր առանցքային բնագավառի համապատասխան իրավագործությունները:

Իրավական հիմքեր յուրաքանչյուր էական/առանցքային բնագավառի համար

Հ. 1.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր իրավական հիմքերը (այն է՝ իրավական կարգավորման ակտերը և ՖՇԵ-ի կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը) ապահովում են բարձր մակարդակի իրավական վստահելիություն իր գործունեության յուրաքանչյուր առանցքային բնագավառի համար՝ բոլոր համապատասխան իրավագործություններում:

ա) Եթե ՖՇԵ-ն հանդես է գալիս որպես Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա, ապա ինչպե՞ս է այն երաշխավորում, որ իր իրավական հիմքերը ապահովում են արժեթղթերի

իմոբիլիզացիա կամ ապանյութականացում, և ինչպե՛ս է ապահովվում արժեթղթերի փոխանցումը էլեկտրոնային գրառումների (book entry) միջոցով:

- բ) Եթե ՖՇԵ-ն հանդես է գալիս որպես Գլխավոր գործընկեր, ապա ինչպե՛ս է այն երաշխավորում, որ իր իրավական հիմքերը թույլ են տալիս նրան հանդես գալու որպես ԳԳ, ներառյալ՝ պարտավորության նկատմամբ իրավունքի փոխանցման (novation), հրապարակային առաջարկի կամ նմանատիպ այլ իրավական մեխանիզմների համար իրավական հիմքերը: Սահմանվա՞ծ է արդյոք ԳԳ-ի կողմից պարտավորության նկատմամբ իրավունքի փոխանցման (novation), հրապարակային առաջարկի կամ նմանատիպ այլ իրավական մեխանիզմների չեղարկման կամ փոփոխման հնարավորություն, թե ոչ: Եթե այո, ապա ի՞նչ հանգամանքների դեպքում:
- գ) Եթե ՖՇԵ-ն հանդես է գալիս որպես Առևտրի ռեպոզիտարիա (այն է՝ տվյալների բազայի պահպանման կենտրոն/կազմակերպություն), ապա ինչպե՛ս է այն երաշխավորում իր կողմից վարվող տվյալների պահպանման իրավական հիմքերը: Ինչպե՛ս են իրավականորեն սահմանված մասնակիցների իրավասությունները այդ տվյալներին հասանելիության, գաղտնիության ապահովման և տեղեկատվության բացահայտման/ հրապարակման նկատմամբ:
- դ) Եթե ՖՇԵ-ն իրականացնում է զուտացման գործառույթ, ապա ինչպե՛ս է այն երաշխավորում այդ գործընթացների իրավական/դատական ուժը:
- ե) Եթե տվյալ ՖՇԵ-ն ինքն է իրականացնում վերջնահաշվարկը, ապա ինչպե՛ս է այն երաշխավորում, որ իր իրավական հիմքերն ապահովում են գործառնությունների վերջնականությունը, այդ թվում՝ մասնակցի անվճարունակության դեպքում: Եթե ՖՇԵ-ի գործունեության վերջնահաշվարկն իրականացվում է այլ հարակից համակարգում (ինչպիսին են, օրինակ, դրամական կամ արժեթղթերի հաշվարկային համակարգերը), ապա ապահովվո՞ւմ են արդյոք վերջնականության այդ իրավական հիմքերը նաև հարակից համակարգում:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է ունենա կանոններ, ընթացակարգեր և պայմանագրեր, որոնք հստակ են, հասկանալի և համապատասխանում են գործող օրենքներին և կանոնակարգերին:

Հ. 1.2.1 Ինչպե՛ս է ՖՇԵ-ն ներկայացնում, որ իր կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը հստակ են և հասկանալի:

Հ. 1.2.2 Ինչպե՛ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը համահունչ են համապատասխան օրենքներին և կանոնակարգերին (օրինակ՝ իրավական եզրակացություն ստանալով կամ համապատասխան վերլուծությունների միջոցով): Արդյոք բացահայտվե՞լ են որևէ անհամապատասխանություններ և ապահովվել դրանց շտկման հետ կապված համապատասխան փոփոխություններ: Դիտարկվո՞ւմ կամ գնահատվո՞ւմ են արդյոք կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը պետական կառույցների կամ արտաքին մարմինների կողմից:

Հ. 1.2.3 Հաստատվո՞ւմ են արդյոք կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը՝ նախքան ուժի մեջ մտնելը: Եթե այո, ապա ու՞մ կողմից և ինչպե՛ս:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է կարողանա հիմնավորել, հստակ սահմանել և ըմբռնելի ձևով ներկայացնել իր գործունեության իրավական հիմքերը համապատասխան պետական կառույցներին, իր մասնակիցներին և անհրաժեշտության դեպքում՝ իր մասնակիցների հաճախորդներին

Հ. 1.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հստակ ձևակերպում և ներկայացնում իր գործունեության իրավական հիմքերը համապատասխան պետական կառույցներին, իր մասնակիցներին և անհրաժեշտության դեպքում՝ իր մասնակիցների հաճախորդներին

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է ունենա գործուն կանոններ, ընթացակարգեր և պայմանագրեր, որոնք ունեն իրավական ուժ բոլոր համապատասխան իրավազորություններում: Պետք է ապահովվի բարձր մակարդակի վստահություն, որ ՖՇԵ-ի կողմից իր կանոնների և գործընթացների համաձայն իրականացվող գործունեությունը/քայլերը չեն կասեցվի, չեն չեղարկվի կամ ունենա հետադարձ ուժ:

Կանոնների, ընթացակարգերի և պայմանագրերի իրավական ուժը

Հ. 1.4.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ձեռք բերում բարձր աստիճանի վստահելիություն, որ իր գործունեությանն առնչվող կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը գործուն են և ունեն իրավական ուժ Առանցքային դրույթ 1-ում սահմանված իր գործունեության բոլոր իրավազորություններում (օրինակ՝ իրավական եզրակացություն ստանալով կամ համապատասխան վերլուծությունների միջոցով):

Կանոնների և ընթացակարգերի վստահելիության մակարդակը

Հ. 1.4.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ձեռք բերում բարձր աստիճանի վստահություն, որ իր գործունեությանն առնչվող կանոնները, ընթացակարգերն ու պայմանագրերը չեն կասեցվի, չեն չեղարկվի կամ ունենա հետադարձ ուժ: Կարո՞ղ են արդյոք առաջանալ ցանկացած բնույթի հանգամանքներ, երբ նման իրավիճակներ կամ դրանց ի հայտ գալու հավանականություն առաջանա: Եթե այո, ապա որո՞նք են այդ հանգամանքները:

Հ. 1.4.3 Եղել են արդյո՞ք երբևէ դեպքեր, երբ ՖՇԵ-ի կողմից իր կանոնների և ընթացակարգերի համաձայն իրականացվող գործունեությունը կամ գործընթացները որևէ իրավազորության դատարանում ճանաչվեն որպես իրավական ուժ չունեցող:

Առանցքային դրույթ 5. Տարբեր իրավազորություններում (իրավական դաշտերում) գործունեություն իրականացնող ՖՇԵ-ն պետք է բացահայտի և նվազեցնի այդ իրավազորություններում առկա տարբերությունների կամ առկա հակասությունների հետ կապված հնարավոր ռիսկերը

Հ. 1.5.1 Եթե ՖՇԵ-ն գործունեություն է իրականացնում տարբեր իրավազորության իրավական հարթություններում, ապա ինչպե՞ս է այն բացահայտում և վերլուծում հնարավոր իրավական հակասությունները: Եթե ՖՇԵ-ն վստահ չէ, առկա են արդյոք նման հնարավոր հակասություններ, թե ոչ, ապա ձեռնարկե՞լ է այն արդյոք արտաքին անկախ կազմակերպությունից իրավական խորհրդատվության ստացման քայլեր՝ հնարավոր հակասությունները գնահատելու և բացահայտելու համար: Ինչպիսի՞ նման հնարավոր տարբերություններ են մինչ այս պահը բացահայտվել և ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 2. Կառավարում

ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ և թափանցիկ կառավարման մեխանիզմներ, որոնք կնպաստեն ՖՇԵ-ի անվտանգությանն ու արդյունավետությանը, ֆինանսական համակարգի կայունությանը, կրթեն հանրության շահերից և շահագրգիռ բոլոր կողմերի նպատակներից:

Այս սկզբունքը դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ եթե ՖՇԵ-ն ամբողջությամբ պատկանում է կամ կառավարվում է այլ կազմակերպության կողմից, ապա վերջինիս կառավարման ընթացակարգերը պետք է նույնպես դիտարկվեն՝ վստահ լինելու համար, որ դրանք չեն կարող բացասական ազդեցություն ունենալ ՖՇԵ-ի կողմից այս սկզբունքին բավարարելու արդյունքի վրա: Հաշվի առնելով, որ կառավարչական կառուցվածքն է սահմանում բոլոր այն գործընթացները, որոնց միջոցով կազմակերպությունը ամրագրում է իր նպատակները, որոշում այդ նպատակներին հասնելու միջոցները և իրականացնում դրանց ապահովման մոնիթորինգը՝ այս Սկզբունքը պետք է դիտարկվի այլ Սկզբունքների հետ համատեղ՝ որպես մեկ ամբողջություն:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է սահմանի նպատակներ, որոնք առաջնայնություն են տալիս ՖՇԵ-ի անվտանգությանն ու արդյունավետությանը և անմիջականորեն նպաստում են ֆինանսական կայունության և հանրային այլ շահերի ապահովմանը:

Հ. 2.1.1 Որո՞նք են ՖՇԵ-ի նպատակները, և հստակ են դրանք արդյոք սահմանված: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում, թե որքանով է այն ապահովում այդ նպատակների կատարումը:

Հ. 2.1.2 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի նպատակներն ապահովում անվտանգության ու արդյունավետության առաջնայնությունը: Ինչպե՞ս են ՖՇԵ-ի նպատակները միանշակորեն նպաստում ֆինանսական կայունությանը և հանրային այլ շահերի ապահովմանը:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է փաստաթղթավորի իր կառավարչական արարողակարգերը, որտեղ հստակ և ուղղակիորեն պետք է սահմանված լինեն պատասխանատվության ու հաշվետվողականության շրջանակները: Այդ արարողակարգերը պետք է հասանելի լինեն սեփականատերերին, համապատասխան պետական կառույցներին, մասնակիցներին, և ավելի ընդհանուր ձևով՝ հանրությանը:

Կառավարչական արարողակարգեր

Հ. 2.2.1 Որո՞նք են այն կառավարչական արարողակարգերը, որոնցով առաջնորդվում են ՖՇԵ-ի տնօրենների խորհուրդը (կամ համարժեք մարմինը) և ղեկավար մարմինները: Ինչպե՞ս են ՖՇԵ-ի ներսում բաշխվում պատասխանատվության և հաշվետվողականության գործառույթները: Ինչպե՞ս և որտե՞ղ են այդ արարողակարգերը փաստաթղթավորված:

Հ. 2.2.2 Այն համակարգերի համար, որոնց օպերատոր է հանդիսանում կենտրոնական բանկը, ինչպե՞ս են կառավարչական արարողակարգերն ապահովում հնարավոր կամ առկա շահերի բախման բացառումը: Որքանո՞վ են կառավարչական արարողակարգերը հնարավորություն տալիս տարանջատելու օպերատորի և հսկողության գործառույթները:

Հ. 2.2.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաշվետու լինում իր սեփականատերերին, մասնակիցներին և այլ շահագրգիռ կողմերին:

Կառավարչական արարողակարգերի հասանելիության ապահովում

Հ. 2.2.4 Ինչպե՞ս են կառավարչական արարողակարգերը տրամադրվում կամ հասանելի դառնում սեփականատերերին, համապատասխան պետական կառույցներին, մասնակիցներին, և ավելի ընդհանուր ձևով՝ հանրությանը:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ի տնօրենների խորհրդի (կամ համարժեք մարմնի) իրավասություններն ու պատասխանատվությունը պետք է հստակ սահմանված լինեն, ինչպես նաև առկա լինեն փաստաթղթավորված ընթացակարգեր, որոնք կանոնակարգում են այդ մարմնի գործունեությունը, այդ թվում՝ վերջինիս անդամների միջև հնարավոր շահերի բախման աղբյուրների բացահայտման, դիտարկման և դրանց լուծման ու կարգավորման ընթացակարգերը: Խորհուրդը պետք է կանոնավոր կերպով ստուգի և վերահսկի ինչպես իր ընդհանուր, այնպես նաև՝ առանձին անդամների գործունեության կատարողականը:

Խորհրդի դերը և պատասխանատվությունը

Հ. 2.3.1 Որո՞նք են ՖՇԵ-ի տնօրենների խորհրդի (այսուհետ՝ Խորհրդի) դերը, գործառույթները և պարտավորությունները, և արդյո՞ք դրանք հստակ են սահմանված:

Հ. 2.3.2 Որո՞նք են Խորհրդի գործունեության ընթացակարգերը, այդ թվում՝ վերջինիս անդամների միջև հնարավոր շահերի բախման աղբյուրների բացահայտման, դիտարկման և դրանց լուծման ու կարգավորման ընթացակարգերը: Ինչպե՞ս են այդ ընթացակարգերը փաստաթղթավորված և ո՞ւմ են դրանք հասանելի: Որքա՞ն հաճախ են դրանք վերանայվում:

Հ. 2.3.3 Նկարագրել, թե ի՞նչ հանձնաժողովներ են Խորհրդի կողմից ստեղծված՝ իրենց գործունեությանն աջակցության համար: Որո՞նք են այդ հանձնաժողովների դերը, իրավասություններն ու պատասխանատվության շրջանակը, և ինչպիսի՞ն է անդամների կազմը:

Գործունեության արդյունքների դիտարկում/վերահսկում

Հ. 2.3.4 Ի՞նչ արարողակարգեր են սահմանված Խորհրդի՝ ընդհանուր և ըստ առանձին անդամների գործունեության կատարողականի վերահսկման համար:

Առանցքային դրույթ 4. Խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն համապատասխան որակավորում, հմտություններ և շարժառիթներ ունեցող անդամներ՝ իրենց առջև դրված բազմատեսակ պարտավորությունների կատարման համար: Որպես կանոն դա ենթադրում է գործադիր գործառույթ չիրականացնող անդամի (անդամների) ընդգրկում Խորհրդի կազմում:

Հ. 2.4.1 Որքանո՞վ է ՖՇԵ-ի Խորհուրդն ապահովում իր կազմում ահրաժեշտ հմտություններ և շարժառիթներ ունեցող անդամների առկայություն՝ իր առջև դրված բազմատեսակ դերակատարումների համար: Ինչպե՞ս է այն երաշխավորում այդ պահանջների ապահովումը:

Հ. 2.4.2 Ինչպիսի՞ շարժառիթներ է ՖՇԵ-ն ստեղծում Խորհրդի անդամների համար, որպեսզի կարողանա ներգրավել/ հետաքրքրել և իր կազմում պահել անհրաժեշտ հմտություններ ունեցող անդամների: Ինչպե՞ս են այդ շարժառիթներն արտացոլվում ՖՇԵ-ի կողմից իր առջև դրված երկարաժամկետ նպատակների ապահովման գործում:

Հ. 2.4.3 Ընդգրկված են արդյոք Խորհրդի կազմում ոչ-գործադիր և անկախ անդամներ: Եթե այո, ապա Խորհրդի քանի անդամ ունի նման կարգավիճակ:

Հ. 2.4.4 Եթե Խորհուրդի կազմում ընդգրկված է անկախ անդամ, ապա ինչպե՞ս է այդ անկախությունը բնորոշվում ՖՇԵ-ի կողմից: Բացահայտու՞մ է արդյոք ՖՇԵ-ն, թե Խորհրդի որ անդամին է (անդամներին են) այն դիտարկում որպես անկախ:

Առանցքային դրույթ 5. Ղեկավարների գործառույթները (իրավասությունները) և պատասխանատվությունը (պարտականությունները) պետք է հստակ սահմանված լինեն: ՖՇԵ-ի ղեկավար անձնակազմը պետք է ունենա համապատասխան փորձառություն, փարատեսակ հմտություններ և մասնագիտական ազնվություն, որոնք անհրաժեշտ են ՖՇԵ-ի գործունեության ապահովման և ռիսկերի կառավարման համար իրենց առջև դրված պարտականությունների կատարման համար:

Ղեկավարների գործառույթներն ու պատասխանատվությունը

Հ. 2.5.1 Ի՞նչ գործառույթներ և պատասխանատվություն է դրված ղեկավարների առջև, և հստակ սահմանված են արդյոք վերջիններս:

Հ. 2.5.2 Ինչպե՞ս են սահմանվում և գնահատվում ղեկավարների իրավասություններն ու պատասխանատվությունը:

Փորձառություն, հմտություններ և ազնվություն

Հ. 2.5.3 Որքանո՞վ է ՖՇԵ-ի ղեկավար անձնակազմում ապահովված ահրաժեշտ փորձառություն, տարատեսակ հմտություններ և մասնագիտական ազնվություն ունեցող ղեկավարների առկայությունը, որոնք անհրաժեշտ են ՖՇԵ-ի գործունեության ապահովման և ռիսկերի կառավարման համար: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում այդ պահանջների ապահովումը:

Հ. 2.5.4 Ի՞նչ գործընթաց է սահմանված անհրաժեշտության դեպքում ղեկավարներին աշխատանքից ազատման համար:

Առանցքային դրույթ 6. Խորհուրդը պետք է ունենա հստակ սահմանված և փաստաթղթավորված ռիսկերի կառավարման համակարգ, որում ամրագրված է ՖՇԵ-ի կողմից ռիսկի ընդունելի մակարդակը և քաղաքականությունը, ռիսկերի վերաբերյալ որոշումների կայացման համար պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և որոշումների կայացման գործընթացը ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում: Կառավարչական մեխանիզմները պետք է երաշխավորեն, որ ռիսկերի կառավարման և ներքին հսկողության գործառույթների ապահովման համար առկա են բավարար ռեսուրսներ, ինչպես նաև համապատասխան իրավասություններ ու անկախություն, և անհրաժեշտության դեպքում՝ Խորհրդին խնդիրներ կամ հարցադրումներ ներկայացնելու և քննարկելու հնարավորություն:

Ռիսկերի կառավարման համակարգ

Հ. 2.6.1 Ռիսկերի կառավարման ի՞նչ համակարգ է ներդրվել Խորհրդի կողմից: Ինչպե՞ս է այն փաստաթղթավորված:

Հ. 2.6.2 Ինչպե՞ս է ռիսկերի կառավարման համակարգը կարգավորում ՖՇԵ-ի կողմից ռիսկի ընդունելի մակարդակը/քաղաքականությունը, սահմանում ռիսկերի վերաբերյալ որոշումների

կայացման համար պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը (ինչպիսին են օրինակ ռիսկերի սահմանաչափերը), և կարգավորում որոշումների կայացման գործընթացը ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում:

Հ. 2.6.3 Ի՞նչ գործընթաց է սահմանված ռիսկերի կառավարման քաղաքականության/համակարգի մշակման, փոփոխությունների իրականացման և վերանայման համար:

Ռիսկերի կառավարման և ներքին հսկողության գործառույթների իրավասություններն ու անկախությունը

Հ. 2.6.4 Ինչպիսի՞ գործառույթներով, իրավասություններով, պատասխանատվությամբ, հաշվետվողականությամբ և ռեսուրսներով են օժտված ռիսկերի կառավարում և ներքին հսկողություն իրականացնող օղակները:

Հ. 2.6.5 Ինչպե՞ս է Խորհուրդը երաշխավորում, որ առկա են համապատասխան կառավարչական մեխանիզմներ ռիսկերի կառավարման մոդելների ընտրության և դրանց կիրառման համար: Ինչպե՞ս են այդ մոդելները և ուղեկցվող մեթոդաբանությունը վավերացվում/հաստատվում:

Առանցքային դրույթ 7. Խորհուրդը պետք է երաշխավորի, որ ՖՇԵ-ի կառուցվածքը, կանոնները, ընդհանուր քաղաքականությունը և հիմնական որոշումները պարզաճ ձևով արտացոլում են իրենց ուղղակի և անուղղակի մասնակիցների և այլ շահագրգիռ կողմերի օրինական շահերը: Հիմնական որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հստակ հասանելի լինի համապատասխան շահագրգիռ կողմերին, և այն դեպքում, երբ առկա է լայնածավալ ազդեցություն շուկայի վրա՝ նաև հանրությանը:

Շահագրգիռ կողմերի շահերի և հետաքրքրությունների բացահայտում և դիտարկում

Հ. 2.7.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում ու հաշվի առնում իր մասնակիցների և այլ շահագրգիռ կողմերի շահերը՝ կառուցվածքին, կանոններին, ընդհանուր քաղաքականությանը և հիմնական որոշումների կայացմանն առնչվող իր գործընթացում:

Հ. 2.7.2 Ինչպե՞ս է Խորհուրդը դիտարկում ու հաշվի առնում ուղղակի և անուղղակի մասնակիցների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի կարծիքը. օրինակ՝ ներառվա՞ծ են արդյոք մասնակիցները ռիսկերի կառավարման կամ օգտատերերի հանձնաժողովներում, ինչպիսին է օրինակ ձախողման/ դեֆոլտի կառավարման խումբը, թե՞ դա իրականացվու՞մ է հանրային քննարկումների միջոցով: Ինչպե՞ս են ՖՇԵ-ի և շահագրգիռ կողմերի միջև շահերի բախման հնարավոր իրավիճակները բացահայտվում և կառավարվում:

Տեղեկատվության բացահայտում/տրամադրում

Հ. 2.7.3 Ի՞նչ չափով է ՖՇԵ-ն իր Խորհրդի հիմնական որոշումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրում շահագրգիռ կողմերին, և որտեղ անհրաժեշտ է՝ նաև հանրությանը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 3. Ռիսկերի բազմակողմանի կառավարման համակարգ

ՖՇԵ-ն պետք է ունենա իրավական, վարկային, իրացվելիության, գործառնական և այլ տեսակի ռիսկերի բազմակողմանի կառավարման հստակ քաղաքականություն:

Այս սկզբունքի դիտարկման ժամանակ գնահատողը պետք է հաշվի առնի, թե ինչպես և որքանով են տարբեր ռիսկերը (որոնք կարող են առաջանալ ինչպես ՖՇԵ-ի կողմից, այնպես նաև մասնակիցներից և արտաքին աղբյուրներից) փոխկապակցված և անդրադառնում մեկը մյուսի վրա: Որպես այդպիսին, այս Սկզբունքը պետք է դիտարկվի այլ Սկզբունքների հետ համատեղ՝ որպես մեկ ամբողջություն:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է ունենա ռիսկերի կառավարման քաղաքականություն, ընթացակարգեր և համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու, գնահատելու, հսկելու ու իրականացնելու մոնիթորինգ և կառավարելու ռիսկերի այն խումբը, որոնք կարող են առաջանալ ՖՇԵ-ի մոտ կամ ստեղծվել վերջինիս կողմից: Ռիսկերի կառավարման համակարգը պետք է պարբերաբար վերանայվի:

Ռիսկեր, որոնք կարող են առաջանալ ՖՇԵ-ի մոտ կամ ստեղծվել վերջինիս կողմից

Հ. 3.1.1 Ի՞նչ տեսակի ռիսկեր կարող են առաջանալ ՖՇԵ-ի մոտ կամ ստեղծվել նրա կողմից:

Ռիսկերի կառավարման քաղաքականությունը, ընթացակարգերը և համակարգերը

Հ. 3.1.2 Ի՞նչ քաղաքականություն, ընթացակարգեր և հսկողության մեխանիզմներ են կիրառվում ՖՇԵ-ի կողմից իր մոտ և իր կողմից առաջացող ռիսկերի բացահայտման, գնահատման, մոնիթորինգի իրականացման և կառավարման համար:

Հ. 3.1.3 Ռիսկերի կառավարման ի՞նչ համակարգեր են կիրառվում ՖՇԵ-ի կողմից, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել, գնահատել, մոնիթորինգ իրականացնել և կառավարել հնարավոր բոլոր ռիսկերը:

Հ. 3.1.4 Ինչպե՞ս են այդ համակարգերն ապահովում և հնարավորություն տալիս հաշվարկելու ու գնահատելու ՖՇԵ-ի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ շահագրգիռ կողմերի (ինչպիսին են ՖՇԵ-ի մասնակիցները և նրանց հաճախորդները), հնարավոր բոլոր ռիսկերի գումարային մեծությունը և ազդեցության մակարդակը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի և համակարգերի վերանայում

Հ. 3.1.5 Ի՞նչ գործընթաց է սահմանված ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի և համակարգերի մշակման, հաստատման և դրանց իրագործման/ ապահովման համար:

Հ. 3.1.6 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում իր ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի և համակարգերի արդյունավետությունը:

Հ. 3.1.7 Որքա՞ն հաճախ են ռիսկերի կառավարման քաղաքականությունը, ընթացակարգերը և համակարգերը վերանայվում և թարմացվում: Ինչպե՞ս են այդ վերանայումների ժամանակ հաշվի առնվում ռիսկերի ազդեցության/մակարդակի տատանումները, փոփոխվող միջավայրը և շուկայում առկա իրավիճակը:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է իր մասնակիցների և, անհրաժեշտության դեպքում նաև, հաճախորդների համար ապահովի համապատասխան շարժառիթներ, որպեսզի վերջիններս կառավարեն և նվազեցնեն ՖՇԵ-ի վրա անդրադարձող հնարավոր ռիսկերը

Հ. 3.2.1 Ի՞նչ տեղեկատվություն է ՖՇԵ-ն տրամադրում իր մասնակիցներին և, անհրաժեշտության դեպքում, հաճախորդներին, որը թույլ կտա վերջիններիս կառավարել և նվազեցնել իրենց կողմից ՖՇԵ-ի վրա ազդող հնարավոր ռիսկերը:

Հ. 3.2.2 Ի՞նչ շարժառիթներ է ՖՇԵ-ն ստեղծում իր մասնակիցների և, անհրաժեշտության դեպքում, հաճախորդների համար՝ վերջիններիս կողմից ՖՇԵ-ի վրա ազդող հնարավոր ռիսկերի հսկողության և կառավարման համար:

Հ. 3.2.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ձևավորում իր քաղաքականությունն ու ստեղծում իր համակարգերը, որպեսզի դրանք լինեն արդյունավետ և հնարավորություն տան մասնակիցներին և, անհրաժեշտության դեպքում, հաճախորդներին կառավարելու և նվազեցնելու իրենց ռիսկերը:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է պարբերաբար դիտարկի և վերանայի բոլոր այն նշանակալի ու շոշափելի ռիսկերը, որոնք այն կրում է կամ ստեղծում է այլ կառույցների հետ փոխգործունեության արդյունքում, ինչպիսին են այլ ՖՇԵ-ները, հաշվարկային բանկերը, իրացվելիություն փրամադրողները և ծառայություն մատուցողները: ՖՇԵ-ն պետք է նաև մշակի կամ ստեղծի ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմներ ու միջոցներ՝ այդ ռիսկերի կառավարման համար:

Էական/շոշափելի ռիսկեր

Հ. 3.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում նշանակալի ռիսկերը, որոնք այն կրում է այլ կառույցների հետ փոխգործունեության արդյունքում: Որո՞նք են բացահայտված այդ շոշափելի ռիսկեր:

Հ. 3.3.2 Ինչպե՞ս են այդ ռիսկերը հաշվարկվում ու գնահատվում, և ինչպե՞ս է իրականացվում դրանց մոնիթորինգը: Որքա՞ն հաճախ են այդ ռիսկերը վերանայվում ՖՇԵ-ի կողմից:

Ռիսկերի կառավարման միջոցներ

Հ. 3.3.3 Ռիսկերի կառավարման ի՞նչ միջոցներ են կիրառվում ՖՇԵ-ի կողմից այլ կառույցների հետ փոխգործունեության արդյունքում առաջացող ռիսկերի նվազեցման համար:

Հ. 3.3.4 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում ռիսկերի կառավարման կիրառվող միջոցների արդյունավետությունը: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն վերանայում բացահայտված ռիսկերի նվազեցման համար իր կողմից կիրառվող ռիսկերի կառավարման համապատասխան միջոցները: Որքա՞ն հաճախ են իրականացվում նման վերանայումները:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է բացահայտի բոլոր այն իրավիճակներն ու սցենարները, որոնք կարող են պոտենցիալ խոչընդոտ հանդիսանալ ՖՇԵ-ի կողմից իր կրիտիկական և խիստ անհրաժեշտ գործառնությունների և ծառայությունների անընդհատության համար, և գնահատի դրանց վերականգնման կամ գործունեության բնականոն/սահուն դադարեցման համար բոլոր հնարավոր տարբերակների արդյունավետությունը: ՖՇԵ-ն պետք է մշակի իր գործունեության վերականգնման կամ բնականոն/սահուն դադարեցման համար համապատասխան ծրագրեր՝ կախված այդ գնահատման արդյունքներից: Անհրաժեշտության դեպքում ՖՇԵ-ն համապատասխան իրավասու պետական մարմիններին պետք է տրամադրի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է որոշումների պլանավորման համար:

Իրավիճակները/ սցենարներ, որոնք կարող են խոչընդոտել ՖՇԵ-ի կողմից իր կրիտիկական գործառնությունների և ծառայությունների մատուցմանը

Հ. 3.4.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում այն իրավիճակները, որոնք պոտենցիալ կարող են խոչընդոտել իր կրիտիկական գործառնությունների և ծառայությունների մատուցմանը: Ի՞նչ իրավիճակներ/ սցենարներ են բացահայտվել այդ գործողությունների արդյունքում:

Հ. 3.4.2 Ինչպե՞ս են այդ սցենարները հաշվի առնում ինչպես առանձին, այնպես նաև փոխկապակցված ռիսկերը, որոնց ենթարկվում է ՖՇԵ-ն:

Գործունեության վերականգնման կամ բնականոն/սահուն դադարեցման ծրագրեր/պլան

Հ. 3.4.3 Ի՞նչ ծրագրեր ունի մշակված ՖՇԵ-ն իր գործունեության վերականգնման կամ բնականոն/սահուն դադարեցման համար:

Հ. 3.4.4 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի գործունեության վերականգնման կամ բնականոն/սահուն դադարեցման հիմնական/առանցքային ծրագրերը (ռազմավարությունը) հնարավորություն տալիս ՖՇԵ-ին շարունակելու մատուցել իր կրիտիկական գործառնությունները և ծառայությունները:

Հ. 3.4.5 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի գործունեության վերականգնման կամ բնականոն/սահուն դադարեցման ծրագրերը վերանայվում և թարմացվում: Որքա՞ն հաճախ են այդ ծրագրերը վերանայվում և թարմացվում:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√		√	√	

Սկզբունք 4. Վարկային ռիսկ

ՖՇԵ-ն պետք է արդյունավետորեն գնահատի, հսկի և կառավարի իր վարկային ռիսկերը, որոնք կարող են առաջանալ մասնակիցներից, ինչպես նաև համակարգի վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից: ՖՇԵ-ն պետք է միանշանակորեն ապահովի բավարար ֆինանսական ռեսուրսներ ամբողջովին ծածկելու յուրաքանչյուր մասնակցից բխող վարկային ռիսկը: Բացի այդ, Գլխավոր գործընկերը, որը ներգրավված է բազմապրոֆիլ ռիսկային գործունեության մեջ կամ համակարգային նշանակություն ունի փարբեր իրավագործություններում, պետք է ունենա լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որոնք բավարար կլինեն ծածկելու հնարավոր ճգնաժամային իրավիճակների մեծ շրջանակ ներառյալ առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց անվճարունակությունը, որոնք ճգնաժամային, բայց իրարեսական շուկայական պայմաններում, կարող են ԳԳ-ի նկատմամբ ամենամեծ համախառն վարկային ռիսկն առաջացնել: Բոլոր մնացած Գլխավոր գործընկերները պետք է ապահովեն նշված պահանջը առնվազն մեկ ամենախոշոր մասնակցի անվճարունակության դեպքի համար:

Ֆինանսական ռիսկերի կառավարման և ֆինանսական ռեսուրսներին առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության հետ կապված՝ այս Սկզբունքը պետք է դիտարկվի ապահովվածությանն առնչվող Սկզբունք 5-ի, երաշխավորման դեպոզիտի (margin) վերաբերյալ Սկզբունք 6-ի և իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի հետ: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման կանոններին և ընթացակարգերին առնչվող Սկզբունք 13-ի, ինչպես նաև կանոնների, հիմնական ընթացակարգերի և շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է մշակի իր մասնակիցներից և համակարգի վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից բխող վարկային ռիսկերի կառավարման վստահելի համակարգ: Վարկային ռիսկը կարող է առաջանալ ինչպես առկա ռիսկերի, այնպես նաև ապագա հնարավոր/պոտենցիալ ռիսկերի հետևանքով կամ բոլորից միաժամանակ:

Հ. 4.1.1 Ի՞նչ մեխանիզմներ է մշակել ՖՇԵ-ն՝ իր մասնակիցներից և համակարգի վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից բխող առկա և հնարավոր ապագա վարկային ռիսկերի կառավարման համար:

Հ. 4.1.2 Որքա՞ն հաճախ են այդ մեխանիզմներն ու համակարգը վերանայվում՝ արտացոլելու համար փոփոխվող միջավայրը, շուկայական իրավիճակը և նոր ծառայությունները:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է բացահայտի վարկային ռիսկի առաջացման աղբյուրները, մշտապես գնահատի վարկային ռիսկի առաջացման հետևանքները (հնարավոր վնասի չափը) և իրականացնի դրանց մոնիթորինգ, ինչպես նաև կիրառի ռիսկերի կառավարման համապատասխան միջոցներ/գործիքներ՝ այդ ռիսկերի հսկողության համար:

Հ. 4.2.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում վարկային ռիսկի աղբյուրները: Որո՞նք են ՖՇԵ-ի կողմից բացահայտված վարկային ռիսկի աղբյուրները:

Հ. 4.2.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում վարկային ռիսկի առաջացման հետևանքները և հաշվարկում հնարավոր վնասի չափը, ինչպես նաև իրականացնում դրանց մոնիթորինգ: Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն իրականացնում ռիսկի չափի վերահաշվարկ և ի՞նչ հաճախականությամբ այն կարող դա անել: Որքա՞ն արդիական է այդ տեղեկատվությունը:

Հ. 4.2.3 Ի՞նչ գործիքներ/միջոցներ է ՖՇԵ-ն կիրառում բացահայտված վարկային ռիսկի աղբյուրների վերահսկման համար (օրինակ՝ տրամադրելով ռեալ ժամանակում համախառն հաշվարկների իրականացման կամ առաքում վճարման դիմաց մեխանիզմներ, սահմանափակելով զուտ վճարումների (դեբետների) կամ միջօրյա վարկավորման հնարավորությունները, սահմանելով կենտրոնացումների նկատմամբ սահմանաչափեր կամ իրականացնելով շուկայական գների հիման վրա դիրքերի՝ օրական կամ օրվա ընթացքում վերահաշվարկ): Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում այս գործիքների/միջոցների կիրառման արդյունավետությունը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√		

Առանցքային դրույթ 3. Վճարային համակարգը կամ արժեթղթերի հաշվառման համակարգը պետք է միանշանակորեն և ամբողջովին ծածկեն յուրաքանչյուր մասնակցից առաջացող իրենց առկա և հնարավոր ապագա ռիսկերը և հետևանքները՝ կիրառելով երաշխավորման միջոցներ (ապահովվածություն) կամ ֆինանսական այլ ռեսուրսներ (տես ապահովվածությանն առնչվող Սկզբունք 5-ը): Զուտ սկզբունքներով հաշվարկների իրականացման վճարային և արժեթղթերի հաշվառման այն համակարգերը, որոնք չեն կիրառում վերջնահաշվարկի ապահովման միջոցներ և որոնց մասնակիցները կրում են վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից առաջացող ռիսկեր, նման ՖՇԵ-ները պետք է ապահովեն բավարար ֆինանսական միջոցներ՝ ծածկելու համար առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ռիսկերը/վնասները, որոնք ամենախոշոր ընդհանուր վարկային ռիսկն են ստեղծում համակարգում:

Յուրաքանչյուր մասնակցի ռիսկի ծածկույթ

Հ. 4.3.1 Ինչպե՞ս է վճարային համակարգը կամ արժեթղթերի հաշվառման համակարգը ծածկում յուրաքանչյուր մասնակցից բխող իր առկա կամ պոտենցիալ ապագա ռիսկերը: Ֆինանսական ռեսուրսների ի՞նչ համադրություն է կիրառում ՖՇԵ-ն այդ ռիսկերը ծածկելու համար: Որքանո՞վ են այդ ֆինանսական ռեսուրսները հասանելի:

Հ. 4.3.2 Ի՞նչ չափով են այդ ֆինանսական ռեսուրսները ծածկում վճարային համակարգի կամ արժեթղթերի հաշվառման համակարգի առկա կամ պոտենցիալ ապագա ռիսկերը: Որքա՞ն հաճախ են վճարային կամ արժեթղթերի հաշվառման համակարգերը գնահատում այդ ֆինանսական ռեսուրսների բավարար լինելը:

Ձույր սկզբունքներով հաշվարկների իրականացման վճարային և արժեթղթերի հաշվառման համակարգեր, որոնք չեն կիրառում վերջնահաշվարկի ապահովման միջոցներ

Հ. 4.3.3 Եթե վճարային կամ արժեթղթերի հաշվառման համակարգը զուտ սկզբունքով հաշվարկների իրականացման համակարգ է, որտեղ չեն կիրառում վերջնահաշվարկի ապահովման միջոցներ, կրու՞մ են արդյոք նրա մասնակիցները վճարային ռիսկեր, որոնք առաջանում են վճարային, քլիրինգային և վերջնահաշվարկի գործընթացներից: Եթե համակարգում առկա են վարկային ռիսկեր, ապա ինչպե՞ս է համակարգը գնահատում և հսկում այդ ռիսկերը:

Հ. 4.3.4 Եթե վճարային կամ արժեթղթերի հաշվառման համակարգը զուտ սկզբունքով հաշվարկների իրականացման համակարգ է, որտեղ չեն կիրառում վերջնահաշվարկի ապահովման միջոցներ և մասնակիցների միջև առկա են վարկային ռիսկեր, ի՞նչ չափով են վճարային կամ արժեթղթերի հաշվառման համակարգի ֆինանսական ռեսուրսները/ միջոցները ծածկում առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ռիսկերը/ վնասները, որոնք ամենախոշոր ընդհանուր վարկային ռիսկն են ստեղծում համակարգում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
				√	

Առանցքային դրույթ 4. Գլխավոր գործընկերը պետք է միանշանակորեն և ամբողջովին ծածկի յուրաքանչյուր մասնակցից առաջացող իր ներկա և հնարավոր ապագա ռիսկերը՝ կիրառելով երաշխավորման դեպոզիտ (margin) կամ այլ կանխավճարված ֆինանսական ռեսուրսներ (տես ապահովվածությանն առնչվող Սկզբունք 5-ը և երաշխավորման դեպոզիտի վերաբերյալ Սկզբունք 6-ը): Բացի այդ, ԳԳ-ն, որը ներգրավված է բազմապրոֆիլ ռիսկային գործունեության մեջ կամ համակարգային նշանակություն ունի փարբեր իրավագորություններում, պետք է ունենա լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, որոնք բավարար կլինեն ծածկելու հնարավոր ճգնաժամային իրավիճակների մեծ շրջանակ՝ ներառյալ առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց անվճարունակությունը, որոնք ճգնաժամային, բայց իրադեռական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ վարկային ռիսկի ամենամեծ համախառն ազդեցությունը կարող են թողնել: Բոլոր մնացած գլխավոր գործընկերները պետք է ապահովեն նշված պահանջը առնվազն մեկ ամենախոշոր մասնակցի անվճարունակության դեպքի համար: Ամեն դեպքում, ԳԳ-ն պետք է փաստաթղթավորի իր կողմից վարվող ընդհանուր ֆինանսական ռեսուրսների մեծության հիմնավորումները և ունենա դրանց կառավարման համար բավարար կառավարչական մեխանիզմներ:

Յուրաքանչյուր մասնակցից բխող ներկա և պոտենցիալ ապագա ռիսկերի ծածկույթ

Հ. 4.4.1 Ինչպե՞ս է ԳԳ-ն միանշանակորեն և ամբողջովին ծածկում յուրաքանչյուր մասնակցից առաջացող իր ներկա և հնարավոր ապագա ռիսկերը: Ֆինանսական ռեսուրսների ի՞նչ համադրություն

է կիրառում ԳԳ-ն իր ներկա և հնարավոր ապագա ռիսկերը ծածկելու համար: Որքանով են հասանելի այդ ֆինանսական ռեսուրսները:

Հ. 4.4.2 Ի՞նչ չափով են այդ ֆինանսական ռեսուրսները ծածկում ԳԳ-ի ներկա և հնարավոր ապագա ռիսկերը: Որքան հաճախ է ԳԳ-ն գնահատում այդ ֆինանսական ռեսուրսների բավարար լինելը:

Ռիսկի բնույթը և տարբեր իրավազորություններում համակարգային նշանակություն ունենալը

Հ. 4.4.3 Ունի՞ արդյոք ԳԳ-ի որևէ գործունեություն/ծառայություն առավել բարդ ռիսկային բնույթ (ինչպիսին է, օրինակ, ֆինանսական այնպիսի գործիքների քլիրինգի իրականացումը, որոնց բնորոշ է գների փոփոխման արդյունքում հնարավոր դեֆոլտի առաջացման հավանականություն կամ որոնք սերտ փոխկապակցված են այլ մասնակիցների հավանական ծախողման/դեֆոլտի հետ): Հանդիսանում է արդյոք ԳԳ-ն համակարգային նշանակություն ունեցող տարբեր իրավազորություններում:

Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ

Հ. 4.4.4 Ի՞նչ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ/ միջոցներ է ԳԳ-ն պահում՝ ծածկելու համար հնարավոր ճգնաժամային իրավիճակների մեծ շրջանակ, ներառյալ՝ առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց անվճարունակությունը, որոնք ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ վարկային ռիսկի ամենամեծ համախառն ազդեցությունը կարող են թողնել:

Հ. 4.4.5 Եթե ԳԳ-ն ներգրավված է բազմապրոֆիլ ռիսկային գործունեության մեջ կամ համակարգային նշանակություն ունի տարբեր իրավազորություններում, որքանով են նրա լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները ծածկում առնվազն այն երկու ամենախոշոր մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց անվճարունակությունը, որոնք ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ վարկային ռիսկի ամենամեծ համախառն ազդեցությունը կարող են թողնել:

Հ. 4.4.6 Որքան հաճախ է ԳԳ-ն գնահատում իր լրացուցիչ ֆինանսական միջոցների բավարար լինելը:

Ուղեկցող հիմնավորում և կառավարչական մեխանիզմներ

Հ. 4.4.7 Ինչպե՞ս է ԳԳ-ն փաստաթղթավորում իր կողմից վարվող ընդհանուր ֆինանսական ռեսուրսների մեծության բավարար լինելու հիմնավորումները:

Հ. 4.4.8 Ի՞նչ կառավարչական մեխանիզմներ է ԳԳ-ն կիրառում իր մոտ առկա բոլոր ֆինանսական ռեսուրսների/ միջոցների կառավարման համար:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱԴ
				√	

Առանցքային դրույթ 5. Գլխավոր գործընկերը պետք է պարբերաբար սահմանի, թե որքան համախառն ֆինանսական ռեսուրսներ են նրան անհրաժեշտ ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում մեկ կամ մի քանի մասնակիցների կողմից իրենց պարտավոր

րությունների չկատարման դեպքում, և ստուգի/գնահատի դրանց բավարար լինելը՝ կիրառելով խիստ սթրես-թեսթեր: ԳԳ-ն պետք է ունենա հստակ հաշվեդրական արարողակարգեր այդ սթրես-թեսթերի արդյունքները ԳԳ-ում որոշումների կայացման համապատասխան օղակներին տրամադրելու համար և պետք է օգտագործի այդ արդյունքները իր համախառն ֆինանսական միջոցների բավարարությունը գնահատելու և դրանց մեծությունը վերանայելու համար: Սթրես-թեսթերը պետք է իրականացվեն օրական կտրվածքով՝ կիրառելով սրանդարտ և նախապես սահմանված ցուցանիշներ (գործոններ) և ենթադրություններ: Առնվազն ամիսը մեկ անգամ ԳԳ-ն պետք է իրականացնի կիրառված սթրես-թեսթերի սցենարների, մոդելների և դրանց հիմքում ընկած գործոնների (բաղադրիչների) և ենթադրությունների բազմակողմանի և խորը վերլուծություն՝ երաշխավորելու համար, որ դրանք բավարար են վնասների փոխհատուցման ԳԳ-ի կողմից սահմանված մակարդակը ներկա և զարգացող շուկայական պայմաններում ապահովելու համար: ԳԳ-ն պետք է իրականացնի սթրես-թեսթավորման նման վերլուծություններն առավել հաճախ, երբ քլիրինգային ակտիվները կամ շուկաները, որտեղ ԳԳ-ն գործում է, մեծ տատանողականություն են ցուցաբերում, դառնում են ավելի քիչ իրացվելի կամ մասնակիցների՝ ԳԳ-ում վարվող դիրքերի մեծությունը կամ կենտրոնացվածությունը էականորեն ավելանում են: ԳԳ-ի կողմից կիրառվող ռիսկերի կառավարման մոդելի ամբողջական հաստատում/վավերացում պետք է իրականացվի առնվազն տարին մեկ անգամ:

Սթրես-թեսթավորում

Հ. 4.5.1 Ինչպե՞ս է ԳԳ-ն սահմանում իր համախառն ֆինանսական միջոցների անհրաժեշտ մեծությունը և իրականացնում ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում մեկ կամ մի քանի մասնակիցների կողմից իրանց պարտավորությունների չկատարման դեպքում դրանց բավարարության սթրես-թեսթավորում: Որքա՞ն հաճախ է ԳԳ-ն իրականացնում այդ սթրես-թեսթավորումները:

Հ. 4.5.2 Ինչպե՞ս են այդ սթրես-թեսթավորման արդյունքները տրամադրվում (հասանելի դառնում) ԳԳ-ի որոշումներ կայացնող համապատասխան օղակներին: Ինչպե՞ս են այդ արդյունքները օգտագործվում ԳԳ-ի համախառն ֆինանսական ռեսուրսների բավարարությունը գնահատելու և դրանք վերանայելու գործընթացում:

Վերանայում և վավերացում/ հաստատում

Հ. 4.5.3 Որքա՞ն հաճախ է ԳԳ-ն գնահատում իր սթրես-թեսթերում կիրառվող գործոնների (պարամետրերի) ու ենթադրությունների նպատակահարմարությունը և արդյունավետությունը: Ինչպե՞ս է ԳԳ-ի սթրես-թեսթավորման ծրագիրը հաշվի առնում տարբեր պայմաններ, ինչպիսին են, օրինակ, դիրքերի և գների անսպասելի և նշանակալի տատանումները, դիրքերի կենտրոնացումները, շուկայական իրացվելիության փոփոխությունները: Ինչպե՞ս է ԳԳ-ն մոդելավորում ռիսկերը՝ հաշվի առնելով այդ գործոնների փոփոխությունները:

Հ. 4.5.4 Ինչպե՞ս է ԳԳ-ն վավերացնում ռիսկերի կառավարման իր մոդելը: Որքա՞ն հաճախ է ԳԳ-ն իրականացնում այդ վավերացումները, և ո՞ւմ կողմից է այն իրականացվում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ √	ԱՌ
---	----	-----	-----	---------	----

Առանցքային դրույթ 6. Սթրես-թեսթավորումն իրականացնելիս Գլխավոր գործընկերը պետք է հաշվի առնի համապատասխան բազմաբնույթ սթրես-սցենարների ազդեցությունը՝ կապված ինչպես պարտավորությունները չկատարողների դիրքերի, այնպես նաև իրացման շրջանում գների հնարավոր փոփոխությունների հետ: Սցենարները պետք է հաշվի առնեն գների տարանջակցման պարամետրերի պակասը, շուկայական գործոնների (ինչպիսին են գների բաղադրիչները և եկամտաբերության կորերը) փոփոխությունները, տարբեր ժամանակահատվածներում բազմապատասխան դեֆոլտները, ֆինանսների և ակտիվների շուկաներում միաժամանակյա ճնշումները, ինչպես նաև մի շարք հեռանկարային սթրես-սցենարներ՝ տարաբնույթ արտակարգ, սակայն հնարավոր շուկայական պայմաններում:

Հ. 4.6.1 Սթրես-թեսթավորում իրականացնելիս ի՞նչ սցենարներ է դիտարկում ԳԳ-ն: Ի՞նչ վերլուծություններ են ընկած այդ կոնկրետ սցենարների կիրառման համար: Ընդգրկու՞մ են արդյոք սցենարները գների տատանողականության պատմական պիկային մեծությունները, շուկայական գործոնների (ինչպիսին են գների բաղադրիչները և եկամտաբերության կորերը) փոփոխությունները, տարբեր ժամանակահատվածներում բազմապատասխան դեֆոլտները, ֆինանսների և ակտիվների շուկաներում միաժամանակյա ճնշումները, ինչպես նաև մի շարք հեռանկարային սթրես-սցենարներ՝ տարաբնույթ արտակարգ, սակայն հնարավոր շուկայական պայմաններում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	✓		✓	✓	

Առանցքային դրույթ 7. ՖՇԵ-ն պետք է մշակի հստակ կանոններ և արարողակարգեր, որոնք ամբողջովին կծածկեն ֆինանսական այն կորուստները, որոնց առջև այն կարող է կանգնել իր մեկ կամ մի քանի մասնակիցների դեֆոլտի արդյունքում՝ կապված իր նկատմամբ վերջիններիս ցանկացած պարտավորության չկատարման հետ: Այդ կանոններն ու ընթացակարգերը պետք է կարգավորեն պորտֆոլիո չծածկված վարկային կորուստների բաշխումը, ներառյալ՝ ՖՇԵ-ի կողմից ստացված վարկային/ փուխառու իրացվելի բոլոր միջոցների վերադարձը: Այդ կանոններն ու ընթացակարգերը պետք է նաև սահմանեն ՖՇԵ-ի կողմից ճգնաժամային իրավիճակում անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների համալրման գործընթացը, որպեսզի ՖՇԵ-ն կարողանա սահուն և ապահով շարունակել իր գործունեությունը:

Վարկային կորուստների բաշխումը

Հ. 4.7.1 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը հստակ կարգավորում ցանկացած ֆինանսական կորուստները, որոնց առջև այն կարող է կանգնել իր մեկ կամ մի քանի մասնակիցների դեֆոլտի արդյունքում՝ կապված իր նկատմամբ վերջիններիս ցանկացած պարտավորության չկատարման հետ: Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը կարգավորում չծածկված վարկային կորուստները բաշխումը և ի՞նչ հաջորդականությամբ, ներառյալ՝ ՖՇԵ-ի կողմից ստացված վարկային/ փուխառու իրացվելի բոլոր միջոցների վերադարձը:

Ֆինանսական միջոցների համալրումը

Հ. 4.7.2 Ինչպիսի՞ կանոններ ու ընթացակարգեր են կիրառվում ՖՇԵ-ի կողմից ֆինանսական միջոցների համալրման համար, որոնք կարող են առաջանալ ճգնաժամային իրավիճակներում:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓		✓	✓	

Սկզբունք 5. Ապահովվածություն

Իր կամ իր մասնակիցների վարկային ռիսկի կառավարման համար ապահովվածություն պահանջող ՖՇԵ-ն որպես ապահովվածություն պետք է ընդունի վարկային, իրացվելիության և շուկայական ցածր ռիսկ ունեցող միջոցներ: ՖՇԵ-ն պետք է նաև սահմանի և կիրառի համապատասխան պահպանողական հեյրքաթեր (haircuts) և կենտրոնացվածության սահմանաչափեր

Ֆինանսական ռիսկերի կառավարման և ֆինանսական ռեսուրսներին առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության հետ կապված՝ այս Սկզբունքը պետք է դիտարկվի վարկային ռիսկին առնչվող Սկզբունք 4-ի, երաշխավորման դեպոզիտի (margin) վերաբերյալ Սկզբունք 6-ի և իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի հետ: Այս Սկզբունքը պետք է դիտարկվի նաև առանձնացմանն ու տեղափոխելիությանն առնչվող Սկզբունք 14-ի, ինչպես նաև պահառուական և ներդրումային ռիսկերին առնչվող Սկզբունք 16-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է ընդհանուր առմամբ սահմանափակի իր կողմից որպես ապահովվածություն ընդունվող ակտիվների շրջանակը՝ ընդունելով միայն վարկային, իրացվելիության և շուկայական ցածր ռիսկայնության ակտիվներ:

Հ. 5.1.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն որոշում կոնկրետ տեսակի ակտիվն ընդունի որպես ապահովվածություն, թե ոչ: Բացառիկ դեպքերի համար նախատեսված ապահովվածության միջոցների ընդունման ի՞նչ մեխանիզմ է գործում և ինչպե՞ս է ՖՇԵ-ն բնութագրում այդ բացառիկ դեպքերի չափանիշները: Ի՞նչ հաճախականությամբ է ՖՇԵ-ն վերանայում այդ սահմանումներում: Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն ապահովվածություն ընդունում բացառիկության սկզբունքի հիման վրա, և սահմանում է այն արդյոք սահմանաչափեր նման ապահովվածության ընդունման վրա:

Հ. 5.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր կողմից գրանցված ապահովվածության՝ սահմանված չափանիշներին համապատասխանության մոնիթորինգ:

Հ. 5.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում և նվազեցնում հնարավոր առանձնահատուկ հակադարձ կորելյացիայի (կախվածության) հետ կապված ռիսկերը, օրինակ՝ սահմանափակելով իր կողմից ընդունելի ապահովվածության միջոցները (ներառյալ ապահովվածության կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը):

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է ունենա ապահովվածության միջոցների արժողության գնահատման պրուդենցիալ մեթոդներ և սահմանի համապատասխան հեյրքաթեր, որոնք պետք է պարբերաբար թեստավորվեն և հաշվի առնեն ճգնաժամային շուկայական պայմանները:

Գնահատման մեթոդներ

Հ. 5.2.1 Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն իր ապահովվածության միջոցները վերագնահատում շուկայական գնի նկատմամբ, և անու՞մ է այն արդյոք առնվազն օրական մեկ անգամ:

Հ. 5.2.2 Ի՞նչ չափով է ՖՇԵ-ն իրավասու ինքնուրույն գնահատելու ակտիվները, եթե շուկայական գները չեն արտացոլում շուկայական իրական արժեքը:

Հեյրքաթի մեխանիզմներ

Հ. 5.2.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն սահմանում հեյրքաթերը:

Հ. 5.2.4 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում այդ հեյրքաթերի բավարարությունը և հաստատում հեյրքաթերի իր մեխանիզմները/ գործընթացները, ներառյալ ճգնաժամային շուկայական պայմաններում ապահովվածության իրացման պայմաններում ակտիվների արժեքի հավանական նվազումը: Ի՞նչ հաճախականությամբ է ՖՇԵ-ն իրականացնում նման թեստավորումներ:

Առանցքային դրույթ 3. Նվազեցնելու համար համացիկլային շտկումների (հեյրքաթերի ադապտացումը շուկայական պայմաններին՝ նվազեցնելով կամ ավելացնելով հեյրքաթի մեծությունը շուկայական պայմաններից կախված) անհրաժեշտությունը՝ ՖՇԵ-ն պետք է սահմանի կայուն և պահպանողական հեյրքաթեր, որոնք ի սկզբանե նախատեսված կլինեն այնպես, որ տրամաբանական և անհրաժեշտ չափով ներառեն շուկայի ճգնաժամային իրավիճակները:

Հ. 5.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում և գնահատում իր հայրքաթերի ադապտացման հնարավոր ցիկլայնությունը, այն է՝ որքանո՞վ է հավանական, որ շուկայական պայմանների փոփոխությունից կախված անհրաժեշտություն կառաջանա փոփոխել սահմանված հեյրքաթերը, որպեսզի զսպել հնարավոր ռիսկերը: Դիտարկու՞մ է արդյոք ՖՇԵ-ն համացիկլային շտկումների անհրաժեշտության նվազեցումը և ինչպե՞ս է այն դա անում. օրինակ՝ շուկայական ճգնաժամային իրավիճակները հաշվի առնելով հայրքաթերի սահմանման ժամանակ:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է խուսափի պահելու կոնկրետ տեսակի ակտիվների մեծ ծավալ (ունենալու կենտրոնացումներ կոնկրետ տեսակի ակտիվներում), եթե դա կարող է զգալիորեն խոչընդոտել նման ակտիվների արագ իրացումը՝ հակադարձ չանդրադառնալով (զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալով) գնի վրա:

Հ. 5.4.1 Ինչպիսի՞ քաղաքականություն է ՖՇԵ-ն կիրառում որոշակի ակտիվների հնարավոր կենտրոնացումները բացահայտելու և դրանցից խուսափելու համար, որպեսզի կարողանա սահմանափակել իրացման ժամանակ գների վրա անբարենպաստ ազդեցության հետևանքները: Ի՞նչ գործոններ են դիտարկվում այդ քաղաքականության մշակման ժամանակ (օրինակ՝ շուկայական գների կամ շուկայական պայմանների վրա անբարենպաստ ազդեցությունը):

Հ. 5.4.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում և վերանայում կենտրոնացումների կառավարմանն ուղղված իր քաղաքականությունը և գործընթացները՝ դրանց համարժեքության գնահատման համար: Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն գնահատում և վերանայում այդ քաղաքականությունն ու գործընթացները:

Առանցքային դրույթ 5. ՖՇԵ-ն, որն ընդունում է ապահովվածության միջոցներ արտասահմանյան ակտիվներով, պետք է նվազեցնի դրանց կիրառման հետ կապված ռիսկերը և երաշխավոր-

րի, որ ապահովվածությունը կարող է անհրաժեշտության դեպքում առանց հապաղման օգտագործվել/հրացվել:

Հ. 5.5.1 Ինչպիսի՞ իրավական, գործառնական, շուկայական և այլ ռիսկերի առաջ կարող է կանգնել ՖՇԵ-ն արտասահմանյան ապահովվածության միջոցներ ընդունելով: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն նվազեցնում այդ ռիսկերը:

Հ. 5.5.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ ապահովվածությունը կարող է անհրաժեշտության դեպքում առանց հապաղման օգտագործվել/հրացվել:

Առանցքային դրույթ 6. ՖՇԵ-ն պետք է ունենա ապահովվածության կառավարման լավ մշակված/կառուցված և գործառնական առումով ճկուն համակարգ:

Ապահովվածության կառավարման համակարգի կառուցվածքը

Հ. 5.6.1 Որո՞նք են ապահովվածության կառավարման ՖՇԵ-ի համակարգի հիմնական առանձնահատկությունները (ֆունկցիոնալ հնարավորությունները):

Հ. 5.6.2 Ինչպե՞ս և ի՞նչ չափով է ՖՇԵ-ն հսկում ապահովվածության կրկնակի օգտագործումը և իր իրավասությունները՝ ստացված ապահովվածության միջոցների նկատմամբ:

Գործառնական ճկունություն

Հ. 5.6.3 Ինչպե՞ս և ի՞նչ չափով է ապահովվածության կառավարման ՖՇԵ-ի համակարգը հաշվի առնում ընթացիկ մոնիթորինգի և ապահովվածության կառավարման ժամանակ անհրաժեշտ փոփոխությունները:

Հ. 5.6.4 Ի՞նչ չափով է ՖՇԵ-ի ապահովվածության կառավարման համակարգն ապահովում գործունեության անընդհատությունը՝ նույնիսկ շուկայական ճգնաժամի պայմաններում:

ԿՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ √	ԱՌ
----	-----	-----	---------	----

Սկզբունք 6. Երաշխավորման դեպոզիտ

Գլխավոր գործընկերը պետք է ծածկի համակարգի մասնակիցներից բխող իր վարկային ռիսկերը բոլոր ապրանքների/ծառայությունների գծով՝ սահմանաչափերի արդյունավետ համակարգի միջոցով, որը պետք է լինի ռիսկերի վրա հիմնված և պարբերաբար վերանայվի:

Ֆինանսական ռիսկերի կառավարման և ֆինանսական ռեսուրսներին առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության հետ կապված՝ այս Սկզբունքը պետք է դիտարկվի վարկային ռիսկին առնչվող Սկզբունք 4-ի, ապահովվածությանն առնչվող Սկզբունք 5-ի և իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի հետ: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև հաշվարկների վերջնականությանն առնչվող Սկզբունք 8-ի, ինչպես նաև գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Սույն սկզբունքը վերաբերում է ապահովվածության միջոցները որպես երաշխիքային դեպոզիտ (margin, այսուհետ՝ երաշխավորման դեպոզիտ) կիրառմանը, որն իրենից ներկայացնում է ԳԳ-ների կողմից ռիսկերի կառավարման գործիք՝ մասնակիցների հնարավոր վարկային ռիսկերը ծածկելու համար՝ տվյալ մասնակցի անվճարունակության ժամանակ ԳԳ-ի և նրա մասնակիցների նկատմամբ ցանկացած պարտավորությունների չկատարման դեպքում: Այն կարող է լինել դրամական միջոցների կամ ցանկացած ֆինանսական ակտիվների տեսքով: Երաշխավորման դեպոզիտի կառավարման համար ԳԳ-ն պետք է ունենա համապատասխան համակարգ (margin system, այսուհետ՝ մարժինալ համակարգ) և կիրառի մարժայի հաշվարկման համապատասխան մոդելներ (margin model, այսուհետ՝ մարժինալ կամ մարժայի մոդելներ):

ԳԳ-ն կարող է կիրառվող երաշխավորման դեպոզիտի նկատմամբ սահմանել որոշակի պահանջներ (margin requirements, այսուհետ նաև՝ մարժինալ պահանջներ) և կիրառել երաշխավորման դեպոզիտի սահմանաչափեր (margin, այսուհետ նաև՝ մարժա կամ սահմանաչափ): Երաշխավորման դեպոզիտի համար կարող են բացվել հատուկ հաշիվներ (margin accounts, այսուհետ՝ «մարժինալ հաշիվներ»), որոնց համար սահմանված լինեն միջոցների հասանելիության և օգտագործման հատուկ ռեժիմներ:

Առանցքային դրույթ 1. ԳԳ-ն պետք է ունենա երաշխավորման դեպոզիտի այնպիսի համակարգ, որը կիրառում է համապատասխան սահմանաչափեր (մարժա)՝ յուրաքանչյուր ծառայությանը/գործիքին, զամբյուղին և գործունեության շուկաներին բնորոշ առանձնահատկություններին և ռիսկերին համահունչ:

Մարժայի սահմանման մեթոդաբանության նկարագրություն

Հ. 6.1.1 Ո՞րն է ԳԳ-ի կողմից կիրառվող մարժինալ համակարգի ընդհանուր մեխանիզմը, մասնավորապես՝ կապված ներկա և ապագա հնարավոր ռիսկերի հետ: Եթե ԳԳ-ն չի կիրառում մարժինալ համակարգ, ապա ռիսկերի կառավարման ինչպիսի՞ միջոցառումներ է այն կիրառում ռիսկերի նվազեցման համար: Ի՞նչ չափով են այդ միջոցառումներն ապահովում համարժեք արդյունք:

Հ. 6.1.2 Փաստաթղթավորված է արդյոք մարժայի սահմանման մեթոդաբանությունը

Հ. 6.1.3 Ի՞նչ մանրամասնությամբ է ԳԳ-ի մարժայի հաշվարկման մեթոդաբանությունը հասանելի մասնակիցներին, որպեսզի վերջիններս կարողանան դրանք հաշվի առնել իրենց սեփական ռիսկերի կառավարման ժամանակ:

Վարկային ռիսկեր

Հ. 6.1.4 Որո՞նք են ԳԳ-ի վարկային ռիսկերի առաջացման հնարավոր աղբյուրները (բաղադրիչները)՝ պայմանավորված յուրաքանչյուր ծառայության/գործիքի, զամբյուղի և գործունեության շուկաների առանձնահատկություններով:

Հ. 6.1.5 Ի՞նչ չափով են ԳԳ-ի մարժինալ պահանջները համադրելի յուրաքանչյուր ծառայության/գործիքի, զամբյուղի և գործունեության շուկաների առանձնահատկությունների և բնորոշ ռիսկերի հետ:

Գործառնական փարրեր

Հ. 6.1.6 Ինչպե՞ս է ԳԳ-ն կարգավորում մասնակցի չվճարման ռիսկը, որը կարող է առաջանալ, երբ սահմանված մարժայի մակարդակը բավարար չէ մասնակցի պարտավորությունների ամբողջական կատարման համար:

Հ. 6.1.7 Ինչպե՞ս է ԳԳ-ն ապահովում մարժայի հավաքագրման (երաշխավորման միջոցների համալրման) և դուրսգրումների (երաշխավորման միջոցների ելքագրումների) ժամկետների պահպանումը: Եթե ԳԳ-ն ունի մասնակիցներ, որոնք գտնվում են տարբեր ժամային գոտիներում, ապա ինչպե՞ս է այն կարգավորում այն բոլոր խնդիրները, որոնք կարող են առաջանալ ֆինանսավորման ներքին շուկաների և համապատասխան վճարահաշվարկային համակարգերի աշխատանքային ժամերի տարբերություններից:

Առանցքային դրույթ 2. ԳԳ-ն պետք է ունենա գների վերաբերյալ արդիական տեղեկատվության վստահելի աղբյուր՝ իր մարժինալ համակարգի համար: ԳԳ-ն պետք է նաև ունենա ընթացակարգեր և գնագոյացման վստահելի մոդելներ՝ այնպիսի իրավիճակների կարգավորման համար, որոնց դեպքում գների վերաբերյալ տեղեկատվությունը անհասանելի է կամ վստահելի չէ:

Գների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները

Հ. 6.2.1 Գների վերաբերյալ տեղեկատվության ի՞նչ աղբյուրներ են դիտարկվում ԳԳ-ի մարժինալ մոդելում: Ի՞նչ տեղեկատվություն է ԳԳ-ն որպես հիմք ընդունում սկզբնական մարժան սահմանելու համար:

Հ. 6.2.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն որոշում, որ գների վերաբերյալ իր կողմից կիրառվող տեղեկատվությունը արդիական է և վստահելի, ներառյալ երրորդ անձանց կողմից տրամադրված գները (առկայության դեպքում):

Գնագոյացում (գների հաշվարկ/կանխապետում)

Հ. 6.2.3 Ի՞նչ գներ է ԳԳ-ն որպես հիմք ընդունում մարժինալ պահանջների մակարդակ սահմանելիս, երբ գների վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չափով վստահելի կամ հասանելի չէ:

Հ. 6.2.4 Ինչպե՞ս է ԳԳ-ն գնահատում գնագոյացման կամ մարժինալ պահանջների սահմանման համար կիրառվող իր մոդելները, երբ գների վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չափով վստահելի կամ հասանելի չէ: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում գնահատման գործընթացի անկախությունը:

Առանցքային դրույթ 3. Գլխավոր գործընկերը պետք է կիրառի ռիսկերի գնահատման վրա հիմնված սկզբնական մարժայի մոդելներ և գործոններ, և սահմանի բավարար մարժինալ պահանջներ՝ մասնակիցներից առաջացող հնարավոր ապագա ռիսկերը ծածկելու համար, որոնք կարող են առաջանալ մարժայի վերջին հավաքագրման և մասնակցի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) արդյունքում դիրքերի փակման միջև ընկած ժամանակահատվածում: Սկզբնական մարժան պետք է բավարարի սահմանված առնվազն 99% վստահելիության միակողմանի միջակայքին՝ ապագա ռիսկերի/վնասի սպասվող բաշխման նկատմամբ: Եթե ԳԳ-ն հաշվարկում է մարժան զամբյուղի (պորտֆելի) մակարդակով, ապա այս պահանջը փարածվում է յուրաքանչյուր զամբյուղի ապագա ռիսկի բաշխման վրա: Եթե ԳԳ-ն հաշվարկում է մարժան ավելի մանրակրկիտ, օրինակ՝ ենթազամբյուղի մակարդակով կամ ըստ ծառայության/ գործիքի, ապա պահանջը պետք է փարածվի համապատասխանաբար ըստ ապագա ռիսկի բաշխման: Մոդելը պետք է. ա) ներառի ժամանակային միջակայքերի պահպանողական գնահատական՝ արդյունավետ հեջավորման կամ ԳԳ-ի կողմից քլիրինգ իրականացվող կոնկրետ տեսակի ծառայությունների/գործիքների իրացման համար (ներառյալ շուկայի ճգնաժամային իրավիճակները), բ) ունենա վարկային ռիսկի գնահատման համապատասխան մեթոդ, որը հաշվի է առնում տվյալ ծառայության/գործիքի ռիսկային գործոնները և զամբյուղի հավաքական ռիսկի ազդեցությունը փարբեր ապրանքների նկատմամբ, և գ) անհրաժեշտության ու նպատակահարմարության դեպքում սահմանափակի ապակայունացող համացիկլային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Սկզբնական մարժայի մոդել

Հ. 6.3.1 Սկզբնական մարժայի ի՞նչ մոդել է կիրառում ԳԳ-ն: Մանրամասն նկարագրել մոդելը՝ ներառելով ապագա հնարավոր ռիսկի գնահատման մեթոդը: Ի՞նչ ծածկույթ է ապահովում սկզբնական մարժայի մոդելը:

Հ. 6.3.2 Ի՞նչ ենթադրություններ են արվել մարժայի մոդելում:

Հ. 6.3.3 Ինչպե՞ս է ԳԳ-ն գնահատում մարժայի մոդելի առանցքային գործոնները և մուտքային տվյալները (ինչպիսին են իրացման ժամկետները և վստահելիության մակարդակը):

Իրացումը և ընտրանքային ժամանակահատվածները

Հ. 6.3.4 Ինչպե՞ս է ԳԳ-ն սահմանում յուրաքանչյուր ծառայության/գործիքի իրացման (լիկվիդացիոն) համապատասխան ժամկետները: Մասնավորապես, որքանո՞վ է ԳԳ-ն հաշվի առնում ճգնաժամային շուկայական պայմաններում իրացման ժամկետների երկարումը: Ինչպիսի՞ գործոններ են

հաշվի առնվում այդ վերլուծությունների ժամանակ (օրինակ՝ շուկայական իրացվելիությունը, մասնակցի դեֆոլտի ազդեցությունը գերակշիռ շուկայական պայմանների վրա, դիրքերի կենտրոնացման բացասական ազդեցությունները և ԳԳ-ի հեջավորման կարողությունները):

Հ. 6.3.5 Ինչպե՞ս է ԳԳ-ն որոշում մարժայի մոդելում կիրառվող պատմական տվյալների ընտրանքի համապատասխան ժամանակահատվածը: Ի՞նչ գործոններ են հաշվի առնվում (օրինակ՝ նոր, ընթացիկ կամ անցյալում տեղի ունեցած տատանումների ազդեցությունը, կամ նոր ծառայությունների/ գործիքների համար սիմուլյացիոն տվյալների կիրառումը՝ առանց անցյալում տեղի ունեցած իրադարձությունները հաշվի առնելու):

Հ. 6.3.6 Ինչպե՞ս է ԳԳ-ն արագ/շտապ իրացումը համադրում գների անկման հետ (գների վրա բացասական ազդեցության պայմաններում նախընտրում իրացման արագությունը):

Համացիկլայնություն և «սխալ ուղի ընտրելու» յուրահատուկ ռիսկը (“wrong-way risk”)

Հ. 6.3.7 Ինչպե՞ս է ԳԳ-ն կարգավորում համացիկլայնությունը՝ մարժայի որոշման մեթոդաբանության մեջ: Մասնավորապես՝ ընդունում է արդյոք մարժինալ այնպիսի պահանջներ, որոնք ի սկզբանե տրամաբանական և անհրաժեշտ չափով ներառեն շուկայի ճգնաժամային իրավիճակները և բացառեն համացիկլային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Հ. 6.3.8 Ինչպե՞ս է ԳԳ-ն բացահայտում և մեղմացնում «սխալ ուղի ընտրելու» յուրահատուկ ռիսկը, որն առաջանում է այն դեպքում, երբ գործընկերոջ (գործարքի կողմ հանդիսացող մասնակցի) նկատմամբ ռիսկը մեծ հավանականությամբ ավելանում է, եթե խարխլվում է այդ գործընկերոջ հեղինակությունը: Օրինակ՝ եթե ԳԳ-ն իրականացնում է վարկային դեֆոլտի սվոպերի (credit default swaps) քլիրինգ, ապա նրան չպետք է թույլատրվի իրականացնելու միայն իր կամ իր հետ իրավաբանորեն փոխկապակցված անձանց անունով (single-name) սվոպերի քլիրինգ:

Առանցքային դրույթ 4. ԳԳ-ն պետք է իրականացնի մասնակիցների դիրքերի գնահատում ընթացիկ շուկայական գների հիման վրա և գանձի փոփոխական (վարիացիոն) մարժա առնվազն օրական մեկ անգամ՝ առկա ռիսկերի աճը սահմանափակելու համար: ԳԳ-ն պետք է ունենա համապատասխան իրավասություններ և գործառնական կարողություններ՝ սահմանված ժամանակացույցով ու պարբերականությամբ, ինչպես նաև արտահերթ, մասնակիցների նկատմամբ սահմանելու լրացուցիչ մարժայի համալրման պահանջներ կամ դուրսգրումների օրական սահմանաչափեր:

Հ. 6.4.1 Ինչպիսի՞ն է ԳԳ-ի կողմից կիրառվող վարիացիոն մարժայի մոդելի կառուցվածքը: Մանրամասն նկարագրել մոդելը՝ ներառելով այն մեթոդը, որն օգտագործվում է՝ ապագա հնարավոր ռիսկերը, ընթացիկ շուկայական գների հիման վրա դիրքերի գնահատման հաճախականությունը և մարժայի համալրման ժամանակացույցը, ինչպես նաև օրվա ընթացքում լրացուցիչ մարժայի համալրման նկատմամբ պահանջ ներկայացնելու իրավասությունները գնահատելու համար:

Հ. 6.4.2 Ունի՞ր արդյոք ԳԳ-ն մարմին կամ համապատասխան իրավասություններ և գործառնական հնարավորություններ/կարողություններ՝ սկզբնական և վարիացիոն մարժայի նկատմամբ պահանջների ներկայացման և ապահովման համար:

Առանցքային դրույթ 5. Մարժինալ պահանջների հաշվարկման ժամանակ ԳԳ-ն կարող է թույլ տալ իրականացնել պահանջվող մարժայի հաշվանց կամ նվազեցումներ իր կողմից կամ իր և այլ ԳԳ-ի միջոցով քլիրինգ իրականացվող ծառայությունների/գործիքների նկատմամբ, եթե մեկ ծառայության/գործիքի դիսկը էապես կորելացված է այլ ծառայության/գործիքի դիսկի հետ: Եթե երկու կամ ավել ԳԳ-ներ ունեն իրավասություն առաջարկելու փոխկապակցված մարժաներ (խաչաձև ապահովագրական դեպոզիտներ կամ *cross-margining*), ապա վերջիններս պետք է ունենան համապատասխան պաշտպանական մեխանիզմներ և դիսկերի կառավարման ընդհանուր համադրելի (*harmonized*) համակարգեր:

Չամբյուղի նկատմամբ մարժայի սահմանում

Հ. 6.5.1 Տալի՞ս է արդյոք ԳԳ-ն հնարավորություն՝ իրականացնելու պահանջվող մարժայի հաշվանց կամ նվազեցումներ այն, որոնցում այն հանդես է գալիս որպես գործարքի կողմ (իր կողմից կամ իր և այլ ԳԳ-ի միջոցով քլիրինգ իրականացվող ծառայությունների/գործիքների նկատմամբ): Եթե այո, ապա էապես կորելացված է արդյոք մեկ ծառայության/ գործիքի դիսկը մյուս ծառայության/գործիքի դիսկի հետ: Ինչպե՞ս է ԳԳ-ն իրականացնում պահանջվող մարժայի հաշվանց կամ նվազեցում:

Հ. 6.5.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն բացահայտում և գնահատում իր ապագա հավանական դիսկերը՝ ըստ առանձին ծառայությունների/գործիքների և ըստ ընդհանուր զամբյուղի: Ինչպե՞ս է ԳԳ-ի կողմից կիրառվող զամբյուղի նկատմամբ սահմանվող մարժայի մեթոդաբանությունը հաշվի առնում պահանջվող մարժայի հաշվանցը կամ նվազեցումները՝ իր կողմից քլիրինգ իրականացվող ծառայությունների/գործիքների նկատմամբ:

Փոխկապակցված մարժաներ

Հ. 6.5.3 Երկու կամ ավելի ԳԳ-ների միջև փոխկապակցված մարժաների դեպքում (երբ այդ ԳԳ-ների միջև կա համաձայնություն դիտարկելու իրենց մոտ գործունեություն իրականացնող միևնույն մասնակիցների դիրքերն ու առկա ապահովվածության միջոցները որպես միասնական զամբյուղ) ինչպե՞ս են ԳԳ-ները համադրել դիսկերի կառավարման իրենց մոտեցումները: Իրավական և գործառնական ի՞նչ ընթացակարգեր են կարգավորում փոխկապակցված մարժաների գործընթացը:

Փոխկապակցված ԳԳ-ում հաշվառվող երաշխավորման միջոցների անհրաժեշտ համախառն մեծությունը կարող է նվազեցվել, եթե առկա են համապատասխան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս հուսալի ձևով ապահովել այդ փոխկապակցված հաշիվների միջև արագ ու անխոչընդոտ շարժ: Եթե առկա են նման փոխկապակցվածության մեխանիզմներ, ապա նասնակից ԳԳ-ները իրենց մասնակցի դեֆոլտի դեպքում կարող են իրենց վնասների ծածկման համար օգտագործել փոխկապակցված ԳԳ-ների համապատասխան մարժինալ հաշիվներում ավելցուկային առկա երաշխավորման միջոցները:

Մեթոդաբանության հուսալիություն

Հ. 6.5.4 Ինչպե՞ս է ԳԳ-ն հաստատում զամբյուղի նկատմամբ սահմանվող մարժայի և փոխկապակցված մարժայի մեթոդաբանությունների հուսալիությունը: Ինչպե՞ս է ԳԳ-ի մեթոդաբանությունը

հաշվի առնում գների փոխկախվածության մակարդակը և շուկայի ճգնաժամային պայմաններում դրա հուսալիությունը:

Այն ԳԳ-ները, որոնք հիմնել են փոխկապակցված մարժինալ համակարգեր/ մեխանիզմներ, պետք է ապահովեն տեղեկատվության հաճախակի փոխանակման հնարավորություն, և երաշխավորեն, որ առկա են համապատասխան պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսին են դիրքերի, մարժայի համալրումների և գների վերաբերյալ տեղեկատվության միասնական մոնիթորինգի հնարավորությունները: Յուրաքանչյուր ԳԳ պետք է խորությամբ պատկերացնի մյուսների կողմից կիրառվող ռիսկերի կառավարման մեխանիզմները և առկա ֆինանսական ռեսուրսները: Ռիսկերի կառավարման համակարգերը պետք է լինեն համահունչ, հատկապես՝ սկզբնական մարժայի հաշվարկման մեթոդաբանության ընտրության, հաշիվների և ապահովվածության միջոցների առանձնացման և դեֆոլտի կառավարման մեխանիզմների սահմանման ժամանակ:

Առանցքային դրույթ 6. ԳԳ-ն պետք է իրականացնի մարժայի իր մոդելի և ընդհանուր մարժինալ ծածկույթի հուսալիության պարբերական մոնիթորինգ և վերլուծություն՝ պարամական շարքի հիման վրա օրական խիստ պահանջներով թեսթավորման (rigorous daily backtesting) միջոցով, և ավելի խորը ու բազմակողմանի վերլուծություն առնվազն ամիսը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առավել հաճախ: ԳԳ-ն պետք է պարբերաբար իրականացնի իր կողմից քլիրինգ իրականացվող բոլոր ծառայությունների/գործիքների մարժինալ մոդելի տեսական և էմպիրիկ հնարավորությունների գնահատում: Մոդելի ծածկույթի զգայունության վերլուծության իրականացման ժամանակ ԳԳ-ն պետք է հաշվի առնի գործոնների և ենթադրությունների լայն շրջանակ, որոնք արտացոլում են հնարավոր շուկայական իրավիճակները, ներառյալ իր գործունեության շուկաներում գրանցված ամենապարանոդական ժամանակաշրջանները և գների միջև կորելացիաների կտրուկ և սահմանային փոփոխությունները:

Պարամական շարքերի հիման վրա թեսթավորում և զգայունության վերլուծություն

Հ. 6.6.1 Մանրամասն ներկայացնել պատմական շարքերի հիման վրա թեսթավորման մեթոդաբանությունը և մոդելի կառուցվածքը, ներառյալ ինչպես վստահելիության նպատակային մակարդակը, այնպես նաև ընդհանուր մարժինալ ծածկույթի արդյունքները: Ինչպես է նման թեսթավորումը կարգավորում ԳԳ-ում միևնույն ակտիվների խմբի ներսում կամ տարբեր ակտիվների միջև, ինչպես նաև այլ ԳԳ-ների հետ փոխկապակցված մարժինալ ծրագրերի շրջանակներում պորտֆելային ազդեցությունները: Որքա՞ն հաճախ են իրականացվում նման թեսթավորումները:

Հ. 6.6.2 Մանրամասն նկարագրել ԳԳ-ի սկզբնական մարժայի հաշվարկման մեթոդաբանության ընդհանուր ծածկույթի և մոդելի որակի զգայունության վերլուծությունը: Ընդգրկում է վերլուծությունն արդյո՞ք տարբեր գործոններ, ենթադրություններ, պատմական և տեսական շուկայական նախադրյալներ և մասնակիցների դիրքեր, այդ թվում՝ ճգնաժամային պայմանների համար: Ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում այդ վերլուծությունները:

Մարժայի մոդելի կիրառման արդյունքները

Հ. 6.6.3 Որո՞նք են մարժայի մոդելի հավանական թերությունները, որոնք բացահայտվել են պատմական տվյալների շարքի հիման վրա իրականացված թեսթավորման և զգայունության վերլուծության ժամանակ:

Հ. 6.6.4 Ի՞նչ գործողություններ կձեռնարկի ԳԳ-ն, եթե մոդելը չգործի այնպես, ինչպես նախատեսված է:

Հ. 6.6.5 Ինչպե՞ս է ԳԳ-ն տեղեկատվություն տրամադրում պատմական տվյալների շարքի հիման վրա իրականացված թեսթավորման և զգայունության վերլուծության արդյունքների վերաբերյալ:

Առանցքային դրույթ 7. ԳԳ-ն պետք է պարբերաբար ստուգի և գնահատի իր մարժինալ համակարգը:

Հ. 6.7.1 Ինչպե՞ս է ԳԳ-ն իրականացնում իր մարժինալ համակարգի, ներառյալ՝ նրա տեսական և էմպիրիկ հնարավորությունների պարբերական ստուգում և գնահատում: Ի՞նչ հաճախականությամբ է այն իրականացվում:

Հ. 6.7.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն իր մարժինալ համակարգի մեթոդաբանության մեջ իրականացվող էական փոփոխություններն ու շտկումները արտացոլում իր կառավարչական ընթացակարգերում:

Հ. 6.7.3 Ու՞մ և ինչպե՞ս է ԳԳ-ն տրամադրում տեղեկատվություն այդ ստուգման և գնահատման ինչպես մեթոդի, այնպես նաև արդյունքների վերաբերյալ:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√		√	√	

Սկզբունք 7. Իրացվելիության ռիսկ

ՖՇԵ-ն պետք է արդյունավետ կերպով գնահատի, հսկի և կառավարի իր իրացվելիության ռիսկը: Այն պետք է միանշանակորեն ապահովի բոլոր արժույթների գծով բավարար իրացվելի միջոցներ՝ իր վճարային պարտավորությունների վերջնահաշվարկը նույն օրը, իսկ սահմանված լինելու դեպքում՝ նաև օրվա ընթացքում կամ մի քանի օր անց, ապահովելու համար, այդ թվում՝ բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային իրավիճակների դեպքում: Վերջիններս պետք է ներառեն ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ՖՇԵ-ի նկատմամբ առնվազն ամենամեծ համախառն իրացվելիության պարտավորություն ունեցող մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը:

Ֆինանսական ռիսկերի կառավարման և ֆինանսական ռեսուրսներին առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության հետ կապված՝ այս Սկզբունքը պետք է դիտարկվի վարկային ռիսկին առնչվող Սկզբունք 4-ի, ապահովվածությանն առնչվող Սկզբունք 5-ի և երաշխավորման/ ապահովվածության դեպոզիտի (margin) վերաբերյալ Սկզբունք 6-ի հետ: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև հաշվարկների վերջնականությանն առնչվող Սկզբունք 8-ի, ինչպես նաև մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման կանոններին և ընթացակարգերին առնչվող Սկզբունք 13-ի, ինչպես նաև կանոնների, հիմնական գործընթացների և շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է ունենա իր մասնակիցների, հաշվարկային բանկերի, “նոստրո” գործակալների, պահառու բանկերի, իրացվելիություն մատակարարողների և այլ մարմինների կողմից առաջացող իրացվելիության ռիսկերի կառավարման վստահելի համակարգ:

Հ. 7.1.1 Ի՞նչ համակարգ է կիրառվում ՖՇԵ-ի կողմից՝ բոլոր արժույթների գծով իր մասնակիցների, հաշվարկային բանկերի, “նոստրո” գործակալների, պահառու բանկերի, իրացվելիություն մատակարարողների և այլ մարմինների կողմից առաջացող իրացվելիության ռիսկերի կառավարման համար:

Հ. 7.1.2 Ի՞նչ բնույթի և ծավալի իրացվելիություն է անհրաժեշտ ՖՇԵ-ին, և իրացվելիության ռիսկի առաջացման ի՞նչ աղբյուրներ կարող են լինել ՖՇԵ-ի մոտ բոլոր արժույթների գծով:

Հ. 7.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաշվի առնում յուրաքանչյուր կազմակերպության և իր փոխկապակցված անձանց կողմից համախառն իրացվելիության ռիսկը, երբ վերջիններս տարբեր դերակատարումներ ունեն ՖՇԵ-ի հետ փոխհարաբերություններում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է ունենա գործառնական և վերլուծական արդյունավետ միջոցներ/ գործիքներ՝ մշտապես և ժամանակին բացահայտելու, գնահատելու և հսկելու իր վերջնահաշվարկի գործընթացները և միջոցների շարժը, այդ թվում՝ միջօրյա իրացվելիության օգտագործումը:

Հ. 7.2.1 Գործառնական և վերլուծական ի՞նչ միջոցներ/ գործիքներ է օգտագործում ՖՇԵ-ն՝ բացահայտելու, գնահատելու և հսկելու իր վերջնահաշվարկի գործընթացները և միջոցների շարժը:

Հ. 7.2.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն օգտագործում այդ միջոցները՝ մշտապես և ժամանակին բացահայտելու, գնահատելու և հսկելու իր վերջնահաշվարկի գործընթացները և միջոցների շարժը, այդ թվում՝ միջօրյա իրացվելիության օգտագործումը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√		

Առանցքային դրույթ 3. Վճարային կամ արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգերը, ներառյալ նրանք, որոնցում հաշվարկներն իրականացվում են զուտացման սկզբունքով (DNS), պետք է միանշանակորեն ունենան բավարար իրացվելի միջոցներ բոլոր համապատասխան արժույթներով՝ նույնօրյա, իսկ սահմանված լինելու դեպքում՝ նաև միջօրյա կամ մի քանի օր անց վերջնահաշվարկ ապահովելու համար, այդ թվում՝ բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային իրավիճակներում: Վերջիններս պետք է առնվազն ներառեն ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ՖՇԵ-ի մոտ ամենամեծ համախառն իրացվելիության պարտավորություն ունեցող առնվազն մեկ մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը:

Հ. 7.3.1 Ինչպե՞ս է վճարային կամ արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգը սահմանում, թե որքան իրացվելի միջոցներ են անհրաժեշտ բոլոր համապատասխան արժույթների գծով՝ նույնօրյա, իսկ սահմանված լինելու դեպքում՝ նաև միջօրյա կամ մի քանի օր անց վերջնահաշվարկ ապահովելու համար: Ի՞նչ հնարավոր սթրես-սցենարներ է (ներառյալ ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ՖՇԵ-ի մոտ ամենամեծ համախառն իրացվելիության պարտավորություն ունեցող առնվազն մեկ մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը) վճարային կամ արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգը կիրառում՝ սահմանվածը հիմնավորելու համար:

Հ. 7.3.2 Ո՞րն է յուրաքանչյուր արժույթի գծով իրացվելիության պակասուրդը, որը վճարային կամ արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգը ստիպված կլինի ծածկել:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ √	ԱՌ
---	----	-----	-----	---------	----

Առանցքային դրույթ 4. ԳԳ-ն պետք է ապահովի բոլոր համապատասխան արժույթներով բավարար իրացվելի միջոցներ արժեթղթերի գծով վերջնահաշվարկի իրականացման համար, կատարի պահանջվող վարիացիոն մարժայի հետ կապված մուծումները, ինչպես նաև կատարի իր այլ վճարային պարտավորությունները ժամանակին և անհերքելիորեն՝ բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային իրավիճակներում, որոնք պետք է առնվազն ներառեն ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ ամենամեծ վճարային համախառն պարտավորություն ունեցող մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը: Բացի այդ, եթե ԳԳ-ն ներառված է առավել բարդ-ռիսկային գործունեության մեջ կամ հանդիսանում է համակարգային նշանակություն ունեցող փարբեր իրավագործություններում, ապա այն պետք է բավարար չափով լրացուցիչ իրացվելիություն նախատեսի՝ ծածկելու բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ ամենամեծ վճարային համախառն պարտավորություն ունեցող առնվազն երկու մասնակիցների և նրանց փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը:

Բավարար իրացվելի միջոցներ

Հ. 7.4.1 Ինպե՞ս է ԳԳ-ն սահմանում, թե որքան իրացվելի միջոցներ են անհրաժեշտ բոլոր համապատասխան արժույթներով՝ արժեթղթերի գծով վերջնահաշվարկի իրականացման, պահանջվող վարիացիոն մարժայի հետ կապված մուծումների, ինչպես նաև իր այլ վճարային պարտավորությունները ժամանակին կատարելու համար: Ի՞նչ հնարավոր սթրես-սցենարներ է (ներառյալ ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում ԳԳ-ի նկատմամբ ամենամեծ համախառն իրացվելիության պարտավորություն ունեցող առնվազն մեկ մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը) վճարային կամ արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգը կիրառում՝ սահմանվածը հիմնավորելու համար:

Հ. 7.4.2 Ո՞րն է յուրաքանչյուր արժույթի գծով իրացվելիության պակասորդը, որը պետք է ծածկվի ԳԳ-ի կողմից՝ ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում իր նկատմամբ ամենամեծ վճարային համախառն պարտավորություն ունեցող մասնակցի և նրա փոխկապակցված անձանց կողմից իրենց պարտավորությունների չկատարման դեպքում: Որքա՞ն հաճախ է ԳԳ-ն իրականացնում այդ գնահատումը:

Ռիսկային գործոնը (ռիսկի բնույթը) և փարբեր իրավագործություններում համակարգային նշանակությունը

Հ. 7.4.3 Ներառու՞մ է արդյոք ԳԳ-ի որևէ գործունեություն առավել ռիսկային գործոններ (ինչպիսին են՝ **այնպիսի ֆինանսական գործիքների քլիրինգը, որոնք բնորոշվում են դեֆոլտ առաջացնող գների դիսկրետ փոփոխություններով կամ որոնք մեծ կորելացիա ունեն մասնակիցների հավանական դեֆոլտներից**): Հանդիսանու՞մ է արդյոք ԳԳ-ն համակարգային նշանակություն ունեցող տարբեր իրավագործություններում:

Հ. 7.4.4 Եթե ԳԳ-ն ներառված է առավել բարդ-ռիսկային գործունեության մեջ կամ հանդիսանում է համակարգային նշանակություն ունեցող տարբեր իրավագործություններում, ապա նախատեսել է այն արդյոք բավարար չափով լրացուցիչ իրացվելիություն պահել՝ ծածկելու բազմաբնույթ հնարավոր ճգնաժամային, բայց իրատեսական շուկայական պայմաններում իր նկատմամբ ամենամեծ վճարային համախառն պարտավորություն ունեցող առնվազն երկու մասնակիցների և նրանց փոխկապակցված անձանց կողմից պարտավորությունների չկատարման դեպքերը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 5. Իրացվելի միջոցների նվազագույն պահանջն ապահովելու համար յուրաքանչյուր արժույթի գծով ՖՇԵ-ի կողմից պահվող իրացվելի միջոցների համարժեքության համար անհրաժեշտ է, որ դրանք լինեն ԿԲ-ում և վարկարժան առևտրային բանկերում դրամական միջոցներ, հատկացված վարկային գծեր, արտարժույթային սվոպեր, ռեպոներ, ինչպես նաև պահառության հանձնված և/կամ նույնիսկ իրատեսական ճգնաժամային պայմաններում շուկայում արագ իրացվող, նախապես համաձայնեցված և վստահելի ֆինանսավորման մեխանիզմների հիման վրա կանխիկի փոխարկվող ներդրումներում ապահովվածության միջոցներ: Եթե ՖՇԵ-ն ունի կենտրոնական բանկից ստացվող վարկային միջոցներին մշտական հասանելիություն, ապա այդ հասանելիությունը կարող է դիտարկվել որպես նվազագույն պահանջի ապահովման տարր՝ պայմանով, որ այն ունի կենտրոնական բանկում գրավադրման (կամ այլ համապատասխան տեսակի գործարքների կնքման) համար համապատասխանող ապահովվածության միջոցներ: Բոլոր նման միջոցները պետք է միշտ անհրաժեշտության դեպքում հասանելի լինեն:

Թույլատրված իրացվելի միջոցների չափը և կազմը

Հ. 7.5.1 Ինչպիսի՞ն է ՖՇԵ-ի կողմից պահվող տարբեր արժույթների գծով թույլատրելի իրացվելի միջոցների կազմն ու չափը: Ի՞նչ ձևով և որքա՞ն ժամանակում կարող են այդ իրացվելի միջոցները հասանելի դառնալ ՖՇԵ-ին:

Թույլատրված իրացվելի միջոցների հասանելիությունը և ծածկույթը

Հ. 7.5.2 Նախապես համաձայնեցված ֆինանսավորման ի՞նչ մեխանիզմներ է կիրառում ՖՇԵ-ն իր արագ իրացվելի ապահովվածությունը և/կամ ներդրումները դրամական միջոցների փոխարկելու համար: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն սահմանել, որ այդ մեխանիզմներն ապահով են ճգնաժամային, սակայն իրատեսական շուկայական պայմաններում: Բացահայտել է արդյոք ՖՇԵ-ն որևէ հնարավոր խոչընդոտ իր իրացվելի միջոցներին հասանելիության առումով:

Հ. 7.5.3 Եթե ՖՇԵ-ն ունի կենտրոնական բանկից ստացվող վարկային միջոցներին մշտական հասանելիություն, ապա ո՞րն է այն շեմը (մակարդակը), որի սահմաններում վարկ վերցնելիս ՖՇԵ-ն չի խախտի տվյալ արժույթի գծով իրացվելի միջոցների նկատմամբ սահմանված նվազագույն պահանջը:

Հ. 7.5.4 Ի՞նչ չափով են յուրաքանչյուր արժույթի գծով ՖՇԵ-ի կողմից պահվող թույլատրելի իրացվելի միջոցների չափն ու հասանելիությունն ապահովում (ծածկում) իրացվելի միջոցների

նկատմամբ սահմանված նվազագույն պահանջը՝ վերջնահաշվարկի գծով իր վճարային պարտավորությունները ժամանակին կատարելու համար:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 6. ՖՇԵ-ն կարող է իր անհրաժեշտ թույլատրելի իրացվելի միջոցները լրացնել այլ տեսակի իրացվելի ակտիվներով, սակայն այն դեպքում, երբ դրանք կարող են դեֆոլտի ժամանակ անհրաժեշտության դեպքում արագ փոխարկվել կամ ընդունվել որպես ապահովվածության միջոց՝ վարկային գծերի ստացման, սվոպերի կամ ռեպոների կնքման համար, նույնիսկ երբ դա հնարավոր չէ հստակ կանխատեսել կամ երաշխավորել շուկայական ճգնաժամային պայմանների համար: Եթե նույնիսկ ՖՇԵ-ն չունի հասանելիություն կենտրոնական բանկից ստացվող վարկային գծին, այն պետք է ամեն դեպքում հաշվի առնի, թե ինչ ապահովվածություն է սովորաբար ընդունվում համապատասխան կենտրոնական բանկի կողմից, քանի որ նման ակտիվները կարող են ամենայն հավանականությամբ արագ իրացվելի լինել ճգնաժամային (սթրեսային) պայմաններում: ՖՇԵ-ն չպետք է կենտրոնական բանկից տրամադրվող լոմբարդային վարկը (որպես վերջինս արյանի վարկային միջոց) դիտարկի իր իրացվելիության ծրագրի մի մաս:

Լրացուցիչ/հավելյալ իրացվելի միջոցների չափն ու կազմը

Հ. 7.6.1 Ի՞նչ ծավալի և կազմի լրացուցիչ իրացվելի միջոցներ են հասանելի ՖՇԵ-ին:

Լրացուցիչ/հավելյալ իրացվելի միջոցների հասանելիությունը

Հ. 7.6.2 Ինչպե՞ս և ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն որոշել, որ այդ ակտիվները կարող են արագ իրացվել և որպես ապահովվածություն ընդունվել համապատասխան արժույթի ձեռքբերման դիմաց, նույնիսկ եթե դա հնարավոր չէ հստակ կանխատեսել կամ երաշխավորել շուկայական ճգնաժամային պայմանների համար:

Հ. 7.6.3 Այդ լրացուցիչ իրացվելի միջոցների ո՞ր մասն է համապատասխանում կենտրոնական բանկերի կողմից որպես պոտենցիալ ապահովվածության միջոց:

Հ. 7.6.4 Ի՞նչ պայմաններում կարող է ՖՇԵ-ն օգտագործել իր լրացուցիչ իրացվելի միջոցները նախքան իր թույլատրելի իրացվելի միջոցների իրացումը կամ դրանց զուգահեռ:

Հ. 7.6.5 Որքանո՞վ են լրացուցիչ և պահանջվող թույլատրելի իրացվելի միջոցների ընդհանուր չափն ու հասանելիությունը համապատասխանում ՖՇԵ-ի կողմից իր իրացվելի միջոցների համարժեքության գնահատման համար անցկացված սթրես-թեսթի ծրագրի արդյունքում ստացված անհրաժեշտ իրացվելիության պահանջարկին (տես Առանցքային սկզբունք 9):

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 7. ՖՇԵ-ն պետք է համալիր խիստ ստուգումների անցկացման շնորհիվ միանշանակորեն վստահ լինի, որ իրացվելիություն տրամադրող յուրաքանչյուր սուբյեկտ (անկախ այն հանգամանքի, թե վերջինս մասնակից է, թե արտաքին մատակարար), ում

ակտիվներով է ապահովված ՖՇԵ-ից պահանջվող նվազագույն իրացվելիության շեմը, ունի բավարար տեղեկատվություն՝ հասկանալու և կառավարելու իրացվելիության իր ռիսկերը, ինչպես նաև ունի բավարար կարողություններ/հնարավորություններ՝ ապահովելու իր պարտավորություններով նախատեսված պահանջների կատարումը: Կոնկրետ տեսակի արժույթի գծով իրացվելիություն տրամադրողի գործունեության հուսալիության գնահատման անհրաժեշտության դեպքում կարող է հաշվի առնվել նաև կենտրոնական բանկից վարկային միջոցներ ստանալու վերջինիս պոտենցիալ հնարավորությունը: ՖՇԵ-ն պետք է պարբերաբար թեսթավորի այն գործընթացները, որոնց միջոցով այն կարող է իր իրացվելիություն տրամադրողից ստանալ իրեն հասանելի իրացվելիությունը:

Իրացվելիություն տրամադրողների ներգրավում

Հ. 7.7.1 Օգտվում է արդյոք ՖՇԵ-ն իրացվելիություն մատակարարողների ծառայություններից՝ թույլատրելի ակտիվներով պահանջվող նվազագույն իրացվելիությանը համապատասխանելու համար: Ովքե՞ր են այդ մատակարարները: Ինչպե՞ս և ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն դիտարկում, որ այդ իրացվելիություն մատակարարողներից յուրաքանչյուրն ունի բավարար տեղեկատվություն՝ հասկանալու և մշտապես, այդ թվում՝ ճգնաժամային պայմաններում, կառավարելու յուրաքանչյուր արժույթի նկատմամբ իրացվելիության իր ռիսկերը:

Իրացվելիություն տրամադրողների հուսալիություն

Հ. 7.7.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բնորոշել, որ իր յուրաքանչյուր իրացվելիություն տրամադրող ունի համապատասխան կարողություններ/ հնարավորություններ՝ մշտապես ապահովելու յուրաքանչյուր արժույթի նկատմամբ իր պարտավորությունների կատարումը:

Հ. 7.7.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաշվի առնում իրացվելիություն տրամադրողի պոտենցիալ հնարավորությունը ստանալու վարկային միջոցներ կենտրոնական բանկից:

Հ. 7.7.4 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն պարբերաբար թեսթավորում իրացվելիություն տրամադրողից իրացվելի միջոցները ժամանակին ստանալու գործընթացների հուսալիությունը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱԲ
	√		√	√	

Առանցքային դրույթ 8. ՖՇԵ-ն, որը կարող է օգտվել կենտրոնական բանկում հաշիվներ ունենալու, վճարային ծառայություններից և արժեթղթերով գործառնություններից օգտվելու հնարավորություններից, պետք է օգտվի այդ ծառայություններից, եթե դա նպատակահարմար է իրացվելիության ռիսկի կառավարման հնարավորություններն ընդլայնելու համար:

Հ. 7.8.1 Որքանո՞վ է ՖՇԵ-ին ներկայումս հասանելի, կամ իրավասու՞ է արդյոք ՖՇԵ-ն օգտվելու կենտրոնական բանկում վարվող հաշիվներից, վճարային ծառայություններից և արժեթղթերով գործարքներից՝ իր վճարումների և հաշվարկների ապահովման, ինչպես նաև յուրաքանչյուր արժույթի նկատմամբ իրացվելիության իր ռիսկերի կառավարման համար:

Հ. 7.8.2 Որքանո՞վ է ՖՇԵ-ն օգտվում այդ ծառայություններից յուրաքանչյուրից՝ իր վճարումների և հաշվարկների ապահովման, ինչպես նաև յուրաքանչյուր արժույթի նկատմամբ իրացվելիության իր ռիսկերի կառավարման համար:

Հ. 7.8.3 Եթե ՖՇԵ-ն օգտվում է ոչ կենտրոնական բանկի ծառայություններից, ապա վերլուծել է այն արդյո՞ք հնարավորություն՝ բարելավելու իր իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացը կենտրոնական բանկի կողմից մատուցվող իր ծառայությունների շրջանակն ընդլայնելու միջոցով:

Հ. 7.8.4 Կենտրոնական բանկի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակն ընդլայնելու համար կիրառական կամ այլ ի՞նչ հնարավորություններ են դիտարկվել ՖՇԵ-ի կողմից:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√		√	√	

Առանցքային դրույթ 9. ՖՇԵ-ն պետք է սահմանի իր իրացվելի միջոցների անհրաժեշտ մեծությունը և պարբերաբար իրականացնի դրանց բավարարության խիստ սթրես-թեսթավորում: ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ հաշվեկարգական արարողակարգեր՝ իր սթրես-թեսթավորման արդյունքների մասին ՖՇԵ-ում որոշումներ կայացնող համապատասխան մարմիններին (օղակներին) տեղեկացնելու համար, ինչպես նաև կիրառելու այդ արդյունքները իրացվելիության ռիսկերի կառավարման համակարգի համարժեքությունը գնահատելու և համապատասխանեցնելու (փոփոխելու) համար: Սթրես-թեսթավորման իրականացման ժամանակ ՖՇԵ-ն պետք է դիտարկի տարբեր սցենարների լայն շրջանակ: Սցենարները պետք է ներառեն գների տարանդականության պարամետրերի համապատասխան պիկերը և շուկայական այլ գործոններում փոփոխությունները, ինչպիսին են գների փոփոխականները և եկամտաբերության կորերը, տարբեր ժամանակային միջակայքերում տարատեսակ դեֆոլտները, ֆինանսավորման և ակտիվների շուկաներում միաժամանակյա ճնշումները, ինչպես նաև հավանական ճգնաժամային շուկայական պայմաններում մի շարք տարբեր հեռանկարային սթրես-սցենարներ: Սցենարները պետք է հաշվի առնեն ՖՇԵ-ի կառուցվածքն ու գործունեության բնույթը, ներառեն բոլոր կազմակերպությունները, որոնք կարող են ՖՇԵ-ի մոտ իրացվելիության զգալի/էական ռիսկ առաջացնել (ինչպիսին են հաշվարկային բանկերը, նոստրո-գործակալները, պահառու բանկերը, իրացվելիություն մատակարարողները և հարակից ՖՇԵ-ները), և անհրաժեշտության դեպքում ընդգրկեն մի քանի օրվա (multiday) ժամանակահատված: Բոլոր դեպքերում, ՖՇԵ-ն պետք է փաստաթղթավորի իր կողմից պահվող ընդհանուր իրացվելի միջոցների մեծությանն ու ձևին առնչվող իր հիմնավորումները և ունենա համապատասխան կառավարչական մեխանիզմներ:

Սթրես-թեսթավորման ծրագիր

Հ. 7.9.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն կիրառում սթրես-թեսթավորում՝ յուրաքանչյուր արժույթի գծով իր իրացվելի միջոցների մեծության սահմանման և դրանց համարժեքության (բավարար լինելու) թեսթավորման համար: Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն իրականացնում նման թեսթավորում:

Հ. 7.9.2 ՖՇԵ-ում որոշումներ կայացնող համապատասխան մարմիններին (օղակներին) ՖՇԵ-ի կողմից իրականացված սթրես-թեսթավորման արդյունքների մասին տեղեկացման ի՞նչ գործընթաց է սահմանված, որը հնարավորություն կտա նրանց ժամանակին գնահատել ՖՇԵ-ի իրացվելի միջոցների մեծությունն ու կազմը, ինչպես նաև իրացվելիության ռիսկի կառավարման համակարգը, և ճշգրտումներ իրականացնել սահմանված գործընթացներում:

Սթրես-թեսթավորման սցենարներ

Հ. 7.9.3 Ի՞նչ սցենարներ են կիրառվում սթրես-թեսթերում, և որքանո՞վ են դրանք միաժամանակ հաշվի առնում գների տատանողականության պատմական համապատասխան պիկերը, շուկայական այլ գործոններում փոփոխությունները (ինչպիսին են՝ գների փոփոխականները և եկամտաբերության կորերը), տարբեր ժամանակային միջակայքերում տարատեսակ դեֆոլտները, ֆինանսավորման և ակտիվների շուկաներում միաժամանակյա ճնշումները, ինչպես նաև հավանական ճգնաժամային շուկայական պայմաններում մի շարք տարբեր հեռանկարային սթրես-սցենարներ:

Հ. 7.9.4 Որքանո՞վ են սցենարներն ու սթրես-թեսթերը հաշվի առնում ՖՇԵ-ի համապատասխան վճարահաշվարկային կառուցվածքը (օրինակ՝ հաշվարկների համախառն կամ զուտ սկզբունքի կիրառումը, վերջնահաշվարկի երաշխավորումը կամ դրա բացակայությունը, արժեթղթերի համակարգում «վճարում առաքման դիմաց» մոդել 1, 2 կամ 3-ի կիրառումը), ինչպես նաև իրացվելիության ռիսկը, որը կրում է անմիջականորեն ՖՇԵ-ն, իր մասնակիցները կամ բոլորը միաժամանակ:

Հ. 7.9.5 Որքանո՞վ են սցենարներն ու սթրես-թեսթերը հաշվի առնում ՖՇԵ-ի մոտ իրացվելիության նկատմամբ պահանջարկի մեծությունը և բնույթը, ինչպես նաև ՖՇԵ-ի մոտ իր վճարային պարտավորությունների կատարումը ժամանակին ապահովելու համար իրացվելիության ռիսկի առաջացման համապատասխան աղբյուրները, ներառյալ հավանական այն դեպքը, որ առանձին կազմակերպություններ/ սուբյեկտներ և նրանց փոխկապակցված անձինք կարող են ունենալ բազմատեսակ փոխհարաբերություններ ՖՇԵ-ի հետ (կատարել մի շարք տարբեր գործառույթներ):

Վերանայում և հաստատում/վավերացում

Հ. 7.9.6 Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն գնահատում սթրես-թեսթերում դիտարկվող ենթադրությունների և փոփոխական գործոնների արդյունավետությունն ու համապատասխանությունը (ճշգրիտ լինելը): Ինչպե՞ս է սթրես-թեսթի ծրագիրը հաշվի առնում տարբեր պայմաններ, ինչպիսին են դիրքի և գների տատանողականության անսպասելի և նշանակալի ավելացումը, դիրքի կենտրոնացումները և շուկայական իրացվելիության փոփոխությունները, և մոդելավորում ռիսկերը՝ այդ գործոնների փոփոխությունը հաշվի առնելով:

Հ. 7.9.7 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաստատում ռիսկերի գնահատման իր մոդելը: Որքա՞ն հաճախ է այն իրականացնում այդ մոդելի վերանայում:

Հ. 7.9.8 Որտե՞ղ և ի՞նչ չափով է ՖՇԵ-ն փաստաթղթավորում իր կողմից պահվող ընդհանուր իրացվելի միջոցների մեծությանն ու ձևին առնչվող իր հիմնավորումները և կառավարչական մեխանիզմները:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱԲ
	✓		✓	✓	

Առանցքային դրույթ 10. ՖՇԵ-ն պետք է մշակի հստակ կանոններ և արարողակարգեր, որոնք հնարավորություն կտան նրան մասնակիցների միջև անհատական կամ փոխկապակցված ցանկացած դեֆոլտի դեպքում ժամանակին ապահովելու իր վճարային պարտավորությունների վերջահաշվարկը փվյալ օրով (կամ սահմանված լինելու դեպքում միջօրյա կամ մի քանի օրվա ընթացքում): Այդ կանոններն ու ընթացակարգերը պետք է կարգավորեն չկանխարեսված և հավանականորեն չձաձկվող իրացվելիության պակասուրդը, և պետք է ուղղված լինեն թույլ

չֆալու դիրքերի վերահաշվարկ (unwinding), չեղարկումներ (հետկանչ) կամ վճարային պարտավորությունների՝ տվյալ օրով վերջնահաշվարկի հետաձգումներ: Կանոններն ու ընթացակարգերը պետք է նաև սահմանեն չգնաժամային պայմաններում իրացվելիության համալրման ՖՇԵ-ի գործընթացը, որը հնարավորություն կտա ՖՇԵ-ին ապահովելու իր գործունեության անընդհատությունն ու արդյունավետությունը:

Տվյալ օրով վերջնահաշվարկ

Հ. 7.10.1 Ինչպե՞ս են կանոններն ու ընթացակարգերը հնարավորություն տալիս ՖՇԵ-ին ժամանակին կատարել իր վճարային պարտավորությունների վերջահաշվարկը՝ մասնակիցների միջև անհատական կամ փոխկապակցված ցանկացած դեֆոլտի դեպքում:

Հ. 7.10.2 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը կարգավորում չնախատեսված և հավանականորեն չծածկվող իրացվելիության պակասուրդի առաջացումը և հնարավորություն տալիս խուսափել դիրքերի վերահաշվարկից (unwinding), չեղարկումներից (հետկանչ) կամ վճարային պարտավորությունների՝ տվյալ օրով վերջնահաշվարկի հետաձգումներից:

Իրացվելիության համալրում

Հ. 7.10.3 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը հնարավորություն տալիս համալարել ճգնաժամային պայմաններում առաջացող իրացվելի միջոցների բացը (պակասուրդը):

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓		✓	✓	

Սկզբունք 8. Հաշվարկների վերջնականություն

ՖՇԵ-ն պետք է ապահովի հստակ և հուսալի վերջնահաշվարկ առնվազն մինչև հաշվարկների կատարման օրվա վերջ: Անհրաժեշտության կամ նպատակահարմարության դեպքում համակարգը պետք է ապահովի միջօրյա կամ իրական ժամանակում վերջնահաշվարկի կատարում:

Այս սկզբունքը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն նպատակ չունի բացառելու արժեթղթերով գործարքների ժամանակ առաքումների չկատարումը: Նման խափանումների ոչ պարբերական առկայությունը չնայած անցանկալի է, սակայն չպետք է ինքն իրենով դիտարկվի որպես այս սկզբունքին չբավարելու արդյունք: Այս սկզբունքը պետք է դիտարկվի դրամական վերջնահաշվարկների մասին Սկզբունք 9-ի, ՖՇԵ-ի կապերի վերաբերյալ Սկզբունք 20-ի և անհրաժեշտության դեպքում այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը պետք է հստակ սահմանեն այն պահը, որից հետո հաշվարկները համարվում են վերջնական:

Հաշվարկների վերջնականության պահ

Հ. 8.1.1 Ո՞ր պահից է վճարման, փոխանցման կարգադրության կամ այլ պարտավորության վերջնահաշվարկը հանդիսանում վերջնական, այն է՝ անվերադարձելի և անվերապահ (անպայմանական): Սահմանված է արդյոք և փաստաթղթավորված վերջնահաշվարկի վերջնականության պահը: Ու՛մ և ինչպե՛ս է այդ տեղեկատվությունը հասանելի:

Հ. 8.1.2 Ինչպե՛ս են ՖՇԵ-ի գործունեության իրավական դաշտը և կանոնները, այդ թվում՝ անվճարունակության համապատասխան օրենքը (օրենքները), սահմանում ՖՇԵ-ի և մասնակիցների, կամ վերջինիս միջև վճարման, փոխանցման կարգադրության կամ այլ պարտավորության անվերապահ կատարումը:

Հ. 8.1.3 Ինչպե՛ս և ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն ապահովում բարձր աստիճանի վստահելիություն, որ վերջնականությունը տեղի կունենա բոլոր համապատասխան իրավագործություններում (օրինակ՝ ստանալով լավ հիմնավորված իրավական մեկնաբանություն/ կարծիք):

Վերջնականությունը փոխկապակցված համակարգերի/ՖՇԵ-ների դեպքում

Հ. 8.1.4 Ինչպե՛ս է ՖՇԵ-ն երաշխավորում վերջնահաշվարկի վերջնականությունը այլ ՖՇԵ-ների հետ փոխկախվածության դեպքում:

ա) արժեթղթերի հաշվարկային համակարգերի (SSS) դեպքում ինչպե՛ս է ապահովվում տվյալ համակարգի և, որտեղ առկա է, վերջինիս դրամական վերջնահաշվարկն ապահովող մեծածավալ վճարումների համակարգի (LVPS) վերջնականության համադրումը:

ա) դրամական ակտիվներով գործարքներ ապահովող Գլխավոր գործընկերոջ (CCP) դեպքում ի՞նչ կապ կա տվյալ ԳԳ-ի մոտ պարտավորությունների վերջնականության և այլ համակարգերում ԳԳ-ի պահանջների և պարտավորությունների գծով հաշվարկների վերջնականության միջև՝ կախված համապատասխան արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիայի/ արժեթղթերի հաշվարկային համակարգի և վճարային համակարգերի կանոններից:

Առանցքային դրույթ 2. Հաշվարկային ոլորտը նվազեցնելու համար ՖՇԵ-ն պետք է կատարի իր վերջնահաշվարկը ոչ ուշ, քան կատարման օրվա ավարտը՝ նախընտրելի է օրվա ընթացքում կամ իրական ժամանակում: Ցանկալի է, որ մեծածավալ վճարումների համակարգի (LVPS) և արժեթղթերով հաշվարկների իրականացման համակարգի (SSS) դեպքում դիտարկվեն հետևյալ մեխանիզմների առկայությունը. վերջնահաշվարկի օրը ռեալ ժամանակում համախառն սկզբունքով հաշվարկների կատարում (RTGS) կամ հանձնարարականների հավաքական/ բազմափաթեթ մշակում (multiple-batch processing):

Վերջնահաշվարկի ապահովում կատարման օրը

Հ. 8.2.1 Նախատեսում է արդյոք ՖՇԵ-ն վերջնահաշվարկի ապահովում կատարման օրը (կամ նույն հաշվարկային օրը): Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ վերջնահաշվարկը տեղի է ունենում ոչ ուշ, քան նախատեսված կատարման օրվա ավարտը:

Հ. 8.2.2 Առկա՞ են եղել արդյոք դեպքեր, երբ վերջնահաշվարկը տեղափոխվել է հաջորդ գործառնական օրը, ինչը սահմանված չի եղել կանոններով, ընթացակարգերով կամ պայմանագրերով: Եթե այո, ապա ի՞նչ իրավիճակների հետևանքով է եղել վերջնահաշվարկի կատարման նման հետաձգումը հաջորդ գործառնական օր: Եթե տեղափոխությունը ՖՇԵ-ի գործողությունների արդյունք է եղել, ի՞նչ քայլեր են ձեռնարկվել ապագայում նմանատիպ իրավիճակների բացառման համար:

Միջօրյա կամ ռեալ ժամանակում վերջնահաշվարկ

Հ. 8.2.3 Իրականացնում է արդյոք ՖՇԵ-ն միջօրյա կամ ռեալ ժամանակում վերջնահաշվարկ: Եթե այո, ապա ինչպե՞ս: Ինչպե՞ս են մասնակիցները տեղեկացվում վերջնահաշվարկի կատարման փաստի մասին:

Հ. 8.2.4 Եթե վերջնահաշվարկն իրականացվում է հանձնարարականների հավաքական/ բազմափաթեթ մշակման միջոցով, ի՞նչ հաճախականությամբ են դրանք իրականացվում և որքա՞ն ժամանակում են դրանք մշակվում: Ի՞նչ է տեղի ունենում, եթե մասնակիցը վերջնահաշվարկի պահին չի ունենում համապատասխան/բավարար դրամական միջոցներ կամ արժեթղթեր: Ներառվում են արդյոք հանձնարարականները հաջորդ փաթեթում, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ կարգավիճակ են ունենում այդ հանձնարարականները և ե՞րբ են դրանք դառնում վերջնական:

Հ. 8.2.5 Եթե վերջնահաշվարկի ապահովման համար սահմանված չէ օրվա ընթացքում կամ ռեալ ժամանակում սկզբունքի կիրառումը, ապա նախատեսվում է արդյոք մեծածավալ վճարումների համակարգի կամ արժեթղթերի հաշվարկային համակարգի դեպքում նշված մեխանիզմներից որևէ մեկի ներդրումը, թե՞ ոչ:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է հստակ սահմանի այն պահը, որից հետո չկատարված վճարումները, փոխանցման հանձնարարականները կամ այլ պարտավորությունները չեն կարող հետ կանչվել մասնակցի կողմից:

Հ. 8.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն սահմանել այն պահը, որից հետո չկատարված վճարումները, փոխանցման հանձնարարականները կամ այլ պարտավորությունները չեն կարող հետ կանչվել մասնակցի կողմից: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն արգելում ակցեպտավորված և չկատարված վճարումների, փոխանցման հանձնարարականների կամ այլ պարտավորությունների միակողմանի հետկանչը:

Հ. 8.3.2 Ի՞նչ պայմաններում/ իրավիճակներում կարող է համակարգի կողմից հաշվարկի ընդունված (ակցեպտավորված) հանձնարարականը կամ պարտավորությունը հետ կանչվել (օրինակ՝ հերթում գտնվող հաշվարկային պարտավորությունը): Ինչպե՞ս կարող է չկատարված վճարային կամ փոխանցման հանձնարարականը հետ կանչվել: Ո՞վ կարող է հետ կանչել չկատարված վճարային կամ փոխանցման հանձնարարականը:

Հ. 8.3.3 Ի՞նչ պայմանների առկայության դեպքում է ՖՇԵ-ն թույլ տալիս հետկանչի սահմանային ժամկետի երկարաձգումներ և բացառություններ:

Հ. 8.3.4 Որտե՞ղ է ՖՇԵ-ն սահմանում վերոնշյալ տեղեկատվությունը: Ու՞մ և ինչպե՞ս է այդ տեղեկատվությունը տրամադրվում:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓		✓	✓	

Սկզբունք 9. Դրամական վերջնահաշվարկներ

ՖՇԵ-ն հնարավորության և նպատակահարմարության դեպքում դրամական վերջնահաշվարկները պետք է իրականացնի կենտրոնական բանկում վարվող հաշիվներով: Եթե վերջնահաշվարկը չի ապահովվում Կենտրոնական բանկում վարվող հաշիվներով, ապա համակարգը պետք է նվազագույնի հասցնի և խստորեն վերահսկի առևտրային բանկերի միջոցով վերջնահաշվարկի կատարման արդյունքում առաջացող վարկային և իրացվելիության ռիսկերը

Այս սկզբունքը պետք է դիտարկվի հաշվարկների վերջնականության մասին Սկզբունք 8-ի, պահառուական և ներդրումային ռիսկերին առնչվող Սկզբունք 16-ի և անհրաժեշտության դեպքում այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է իրականացնի իր դրամական վերջնահաշվարկները կենտրոնական բանկի հաշիվներով (in central bank money), բոլոր այն դեպքերում, երբ դա հնարավոր է և կիրառելի՝ խուսափելու համար վարկային և իրացվելիության ռիսկերի առաջացումից:

Հ. 9.1.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր դրամական վերջնահաշվարկները: Եթե ՖՇԵ-ն վերջնահաշվարկն իրականացնում է տարբեր արժույթներով, ապա ինչպե՞ս է ապահովվում վերջնահաշվարկների կատարումը յուրաքանչյուր արժույթի գծով:

Հ. 9.1.2 Եթե ՖՇԵ-ն վերջնահաշվարկի համար չի օգտվում կենտրոնական բանկի հաշիվներից, ապա ի՞նչն է հանդիսանում նման ընտրության պատճառ:

Առանցքային դրույթ 2. Եթե վերջնահաշվարկը չի ապահովվում կենտրոնական բանկում վարվող հաշիվներով, ապա ՖՇԵ-ն իր դրամական վերջնահաշվարկները պետք է իրականացնի իրացվելիության և վարկային ռիսկեր չպարունակող կամ ցածր ռիսկայնության ակտիվներով:

Հ. 9.2.1 Եթե վերջնահաշվարկը կենտրոնական բանկում վարվող հաշիվներով չի ապահովվում, ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում դրամական վերջնահաշվարկի համար կիրառվող հաշվարկային ակտիվի վարկային և իրացվելիության ռիսկերը:

Հ. 9.2.2 Եթե վերջնահաշվարկը ապահովվում է առևտրային բանկերում վարվող հաշիվներով (in commercial bank money), ինչպե՞ս է ՖՇԵ-ն ընտրում իր հաշվարկային բանկը (բանկերը): Ընտրության ի՞նչ հատուկ չափանիշներ է կիրառում ՖՇԵ-ն:

Առանցքային դրույթ 3. Եթե ՖՇԵ-ն վերջնահաշվարկն իրականացնում է առևտրային բանկերում վարվող հաշիվներով, ապա այն պետք է իրականացնի իր վարկային և իրացվելիության ռիսկերի մոնիթորինգ և սահմանափակի այդ հաշվարկային առևտրային բանկերից առաջացող ռիսկերը: Մասնավորապես՝ ՖՇԵ-ն պետք է սահմանի հաշվարկային բանկերի ընտրության խիստ չափանիշներ, որոնք այլ գործոնների հետ մեկտեղ հաշվի են առնում նաև այդ բանկերի

**կարգավորման և գործունեության վերահսկողության կարգը, վարկարժանությունը, կապի-
տալիզացիան, իրացվելիությանը հասանելիությունը և գործառնական հուսալիությունը, ինչ-
պես նաև իրականացնի դրանց համարժեքության (ապահովման) մոնիթորինգ: ՖՇԵ-ն պետք է
նաև դիտարկի/հսկի և կառավարի իր առևտրային բանկ հանդիսացող հաշվարկային գործա-
կալներից առաջացող վարկային և իրացվելիության ռիսկերի կենտրոնացումները:**

Հ. 9.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում իր հաշվարկային բանկերի համապատասխանությունը
հաշվարկային գործակալների համար սահմանված իր չափանիշներին: Օրինակ՝ ինչպե՞ս է ՖՇԵ-ն
գնահատում բանկերի կարգավորման և գործունեության վերահսկողության մակարդակը,
վարկարժանությունը, կապիտալիզացիան, իրացվելիությանը հասանելիությունը և գործառնական
հուսալիությունը:

Հ. 9.3.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր վարկային և իրացվելիության ռիսկերի մոնիթորինգ,
կառավարում ու սահմանափակմանն ուղղված գործողություններ, երբ հաշվարկներն իրականաց-
վում են առևտրային բանկերի միջոցով: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում այդ բանկերից առաջա-
ցող վարկային և իրացվելիության ռիսկերի կենտրոնացումների մոնիթորինգ և դրանց կառավա-
րում:

Հ. 9.3.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում իր և իր մասնակիցների հավանական կորուստները և
իրացվելիության ճնշումները, եթե ի հայտ գա իր ամենախոշոր հաշվարկային բանկի/գործակալի
անվճարունակություն կամ պարտավորությունների չկատարման դեպք:

**Առանցքային դրույթ 4. Եթե ՖՇԵ-ն դրամական վերջնահաշվարկներն իրականացնում է իր մոտ
վարվող հաշիվներով, ապա այն պետք է նվազագույնի հասցնի և խստորեն վերահսկի իր
վարկային և իրացվելիության ռիսկերը:**

Հ. 9.4.1 Եթե ՖՇԵ-ն դրամական վերջնահաշվարկներն իրականացնում է իր մոտ վարվող
հաշիվներով, ապա ինչպե՞ս է այն նվազագույնի հասցնում և խստորեն վերահսկում իր վարկային և
իրացվելիության ռիսկերը:

**Առանցքային դրույթ 5. Յուրաքանչյուր հաշվարկային բանկի հետ ՖՇԵ-ի իրավական պայմա-
նագրերն ու համաձայնագրերը պետք է հստակ սահմանեն, թե երբ են փոխանցումների
ձևակերպումներն արտացոլվում այդ բանկերի ներքին հաշվապահական գրքերում, ինչպես
նաև այն, որ փոխանցումները վերջնական են կատարվելուց հետո և որ ստացված միջոցները
ենթակա են փոխանցման որքան հնարավոր է արագ՝ նվազագույնը մինչև օրվա վերջ,
նախընտրելի է օրվա ընթացքում: Վերջինս հնարավորություն կտա ՖՇԵ-ին և իր
մասնակիցներին կառավարելու իրենց վարկային և իրացվելիության ռիսկերը:**

Հ. 9.5.1 Սահմանված են արդյոք հաշվարկային բանկերի հետ ՖՇԵ-ի իրավական
պայմանագրերում և համաձայնագրերում դրույթներ, որ փոխանցումները վերջնական են
կատարվելուց հետո և որ ստացված միջոցները ենթակա են փոխանցման:

Հ. 9.5.2 Փոխանցվում են արդյոք ստացված միջոցները ամենաուշը մինչև օրվա վերջ. եթե ոչ,
ապա ինչու: Փոխանցվում են արդյոք այդ միջոցները օրվա ընթացքում. եթե ոչ, ապա ինչու:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	√	√	√	

Սկզբունք 10. Փաստացի առաքում (physical deliveries)

ՖՇԵ-ն պետք է հստակ սահմանի իր պարտավորությունները՝ կապված իրական գործիքների (physical instruments) կամ ապրանքների (commodities) առաքման հետ, ինչպես նաև պետք է բացահայտի, հսկի և կառավարի նման առաքումների հետ կապված ռիսկերը:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի ընդհանուր բիզնես ռիսկին առնչվող Սկզբունք 15-ի, կանոնների, հիմնական ընթացակարգերի ու շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Այս սկզբունքի ներքո դիտարկվող իրական գործիքների թվին են դասվում արժեթղթերը, առևտրային մուրհակները և այլ պարտքային գործիքներ, որոնք թողարկված են թղթային եղանակով:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ի կանոնները պետք է հստակ սահմանեն իրական գործիքների կամ ապրանքների առաքման հետ կապված ՖՇԵ-ի պարտավորությունները:

Հ. 10.1.1 Ի՞նչ դասի ակտիվներ է ՖՇԵ-ն ընդունում փաստացի առաքման համար:

Հ. 10.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն սահմանում իրական գործիքների կամ ապրանքների առաքմանն առնչվող իր պարտավորություններն ու պատասխանատվությունը: Ինչպե՞ս են այդ պատասխանատվությունները սահմանվում և փաստաթղթավորվում և ու՞մ են դրանք տրամադրվում:

Հ. 10.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ապահովում իր մասնակիցների հետ կապը՝ համոզվելու համար, որ վերջիններս գիտակցում են փաստացի առաքմանն առնչվող գործընթացները և իրենց պարտավորությունները:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի իրական գործիքների և ապրանքների պահանման և փաստացի առաքումների հետ կապված ռիսկերը և ծախսերը

Հ. 10.2.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում, հսկում և կառավարում իրական գործիքների և ապրանքների պահանման և փաստացի առաքումների հետ կապված ռիսկերը և ծախսերը: Ի՞նչ ռիսկեր և ծախսեր է ՖՇԵ-ն փաստացի բացահայտել:

Հ. 10.2.2 Ի՞նչ գործընթացներ, ընթացակարգեր և հսկողական մեխանիզմներ է ՖՇԵ-ն կիրառում՝ իրական գործիքների և ապրանքների պահանման և փաստացի առաքման հետ կապված ռիսկերը և ծախսերը հսկելու (դիտարկելու) ու կառավարելու համար:

Հ. 10.2.3 Եթե ՖՇԵ-ն կարող է համադրել (match) առաքող և ստացող մասնակիցներին, ապա ի՞նչ պայմաններում/պարագայում այն կարող է դա անել, և ի՞նչ համապատասխան կանոններ և ընթացակարգեր կան սահմանված դրա համար: Հստակ սահմանվա՞ծ են արդյոք առաքմանն առնչվող իրավական պարտավորությունները ՖՇԵ-ի գործունեության կանոններում և համապատասխան պայմանագրերում:

Հ. 10.2.4 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր մասնակիցների կողմից կիրառվող առաքման նախապատվությունների մոնիթորինգ, և անհրաժեշտության դեպքում ապահովում փաստացի առաքման հետ կապված իր մասնակիցների պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ համակարգեր և ռեսուրսներ:

ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
----	----------	-----	----	----

Սկզբունք 11. Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաներ

Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենա համապատասխան կանոններ և ընթացակարգեր, որոնք թույլ կտան ապահովել արժեթղթերի թողարկումների ամբողջականությունը, նվազեցնել և կառավարել արժեթղթերի պահպանման և փոխանցման հետ կապված ռիսկերը: Արժեթղթերի ոչ փաստաթղթավորված (էլեկտրոնային) փոխանցումն ապահովելու համար ԱԿԴ-ն դրանց պահպանումը/ պահառությունը պետք է իրականացնի հաշվառված (իմոբիլիզացված՝ շրջանառությունից փաստացի հանված և Կենտրոնական դեպոզիտարիայում սեփականատերերի հաշիվների վրա հաշվառվող) կամ ապանյութականացված ձևով:

Այս սկզբունքի դիտարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն դեպքում, երբ կազմակերպությունը/մարմինը իրավաբանորեն գրանցված է որպես Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիա (ԱԿԴ) կամ որպես Արժեթղթերի հաշվարկային համակարգ (ԱՀՀ), սակայն չի իրականացնում մասնակիցների ակտիվների կամ ապահովվածության միջոցների պահառություն կամ ինչ որ ձև հանդիսանում այդ գործընթացին անմիջականորեն աջակցող օղակ, ապա տվյալ ԱԿԴ-ից կամ ԱՀՀ-ից ընդհանուր առմամբ չի պահանջվում ունենալ նման ակտիվների և ապահովվածության միջոցների պահառության կառավարման համար համապատասխան արարողակարգեր: Այս սկզբունքը պետք է դիտարկվի գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի, ՖՇԵ-ի կապերի վերաբերյալ Սկզբունք 20-ի և անհրաժեշտության դեպքում այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենա համապատասխան կանոններ, ընթացակարգեր և հսկողության մեխանիզմներ, այդ թվում՝ հաշվապահական հաշվառման հուսալի արարողակարգեր՝ արժեթղթեր թողարկողների և սեփականատերերի իրավասությունները պաշտպանելու, արժեթղթերի չարտոնված (ոչ իրավասու) թողարկումն ու դրանց ոչնչացումը բացառելու, ինչպես նաև իր կողմից սպասարկվող արժեթղթերի գծով թողարկումների պարբերական (առնվազն՝ օրական) ստուգումներ/համադրումներ իրականացնելու համար:

Արժեթղթեր թողարկողների և սեփականատերերի իրավասությունների պաշտպանություն

Հ. 11.1.1 Ինչպե՞ս են արժեթղթեր թողարկողների և սեփականատերերի իրավասությունները պաշտպանված ԱԿԴ-ի կանոններով, ընթացակարգերով և հսկողության մեխանիզմներով:

Հ. 11.1.2 Ինչպե՞ս են ԱԿԴ-ի կանոնները, ընթացակարգերն ու հսկողության մեխանիզմները երաշխավորում, որ ԱԿԴ-ի կողմից մասնակիցների անունով վարվող արժեթղթերը պատշաճ ձևով հաշվառվում են իր հաշվապահական գրքերում և պաշտպանված են իր կողմից մատուցվող հնարավոր այլ ծառայությունների հետ կապված ռիսկերից:

Հ. 11.1.3 Ինչպե՞ս է ԱԿԴ-ն երաշխավորում, որ այն ունի հաշվառման հուսալի մեխանիզմներ: Իրականացվում է արդյոք աուդիտորական ստուգման ժամանակ գնահատում, թե որքանով են ԱԿԴ-ի արժեթղթերը բավարար հաճախորդների պահանջները ապահովելու համար: Որքա՞ն

հաճախ է իրականացվում համալիր աուդիտ՝ արժեթղթերի պահառության համար կիրառվող ընթացակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների ստուգման/գնահատման համար:

Արժեթղթերի չարտոնված (ոչ իրավասու) թողարկման և դրանց ոչնչացման բացառում

Հ. 11.1.4 Ի՞նչ ներքին ընթացակարգեր են կիրառվում ԱԿԴ-ի կողմից՝ արժեթղթերի թողարկման և դրանց ոչնչացման իրավասությունները հաստատելու համար: Ներքին հսկողության ի՞նչ մեխանիզմներ են կիրառվում ԱԿԴ-ի կողմից արժեթղթերի չարտոնված/անօրինական թողարկումը և դրանց ոչնչացումը բացառելու համար:

Արժեթղթերի թողարկումների պարբերական ստուգումներ/համադրումներ

Հ. 11.1.5 Իրականացնում է արդյոք ԱԿԴ-ն յուրաքանչյուր թողարկողի (կամ թողարկող գործակալի) գծով ԱԿԴ-ում հաշվառվող ընդհանուր արժեթղթերի պարբերական (առնվազն՝ օրական) ստուգումներ/համադրումներ: Ինչպե՞ս է ԱԿԴ-ն երաշխավորում, որ տվյալ թողարկման գծով ԱԿԴ-ում գրանցված արժեթղթերի ընդհանուր քանակը համարժեք է ԱԿԴ-ի հաշվապահական գրքերում հաշվառվող այդ թողարկման գծով արժեթղթերի ընդհանուր ծավալին:

Հ. 11.1.6 Եթե ԱԿԴ-ն չի հանդիսանում իր կողմից հաշվառվող թողարկումների պաշտոնական գրանցողը, ապա ինչպե՞ս է այն համադրում իր հաշվառումները պաշտոնական գրանցողի տվյալների հետ:

Առանցքային դրույթ 2. ԱԿԴ-ն պետք է թույլ չտա արժեթղթերի հաշիվների օվերդրաֆտի և դեբետային մնացորդի հնարավորություն:

Հ. 11.2.1 Ինչպե՞ս է ԱԿԴ-ն բացառում արժեթղթերի հաշիվների օվերդրաֆտների և դեբետային մնացորդի հնարավորությունը (մասնակցի պարտքի, այն է՝ հաշվով դեբետների գերազանցումը կրեդիտներից):

Առանցքային դրույթ 3. Արժեթղթերի ոչ փաստաթղթավորված (էլեկտրոնային) փոխանցումն ապահովելու համար ԱԿԴ-ն դրանց պահպանումը/ պահառությունը պետք է իրականացնի հաշվառված (իմոբիլիզացված՝ շրջանառությունից փաստացի հանված և Կենտրոնական դեպոզիտարիայում սեփականատերերի հաշիվների վրա հաշվառվող) կամ ապանյութականացված ձևով: Համապատասխան դեպքերում ԱԿԴ-ն պետք է շարժառիթներ ստեղծի արժեթղթերը հաշվառված կամ ապանյութականացված ձևով պահելու համար:

Հ. 11.3.1 Արդյո՞ք թողարկված կամ հաշվառվող արժեթղթերը ապանյութականաված են, թե՞ ոչ: Արժեթղթերի ի՞նչ մասնաբաժինն է ապանյութականացված, և գործառնությունների ընդհանուր ծավալի ո՞ր մասն է իրականացվում այդ արժեթղթերով:

Հ. 11.3.2 Եթե արժեթղթերը թողարկված է նյութականացված սերտիֆիկատի տեսքով, հնարավո՞ր է արդյոք դրանք փաստացի հանել շրջանառությունից և պահել հաշվառված տեսքով՝ թույլ տալով դրանց պահառությունն ու փոխանցումը էլեկտրոնային համակարգերով (book-entry system) իրականացնելու համար: Արժեթղթերի ի՞նչ մասնաբաժինն է իմոբիլիզացված, և գործառնությունների ընդհանուր ծավալի ո՞ր մասն է իրականացվում նման արժեթղթերով:

Հ. 11.3.3 Ինչպե՞ս է ԱԿԴ-ն խրախուսում (եթե նման մեխանիզմներ առկա են) արժեթղթերի ապանյութականացումն ու իմոբիլիզացումը:

Առանցքային դրույթ 4. ԱԿԴ-ն պետք է պաշտպանի ակտիվները պահառուական ռիսկերից՝ մշակելով համապատասխան կանոններ ու ընթացակարգեր, որոնք համահունչ լինեն իր իրավական դաշտի հետ

Հ. 11.4.1 Ինչպե՞ս են ԱԿԴ-ի կանոններն ու ընթացակարգերը պաշտպանում ակտիվները պահառուական ռիսկերից, ներառյալ՝ ԱԿԴ-ի անփութության, ակտիվների ոչ իրավասու օգտագործման, կեղծելու, վատ կառավարման, ոչ համարժեք հաշվառման կամ արժեթղթերի նկատմամբ մասնակիցների շահերը պաշտպանելու անկարողության արդյունքում առաջացող վնասի ռիսկը:

Հ. 11.4.2 Ինչպե՞ս է ԱԿԴ-ն բնորոշել, որ այդ կանոններն ու ընթացակարգերը համահունչ են իր իրավական դաշտի հետ:

Հ. 11.4.3 Առկայության դեպքում ի՞նչ այլ մեթոդներ է ԱԿԴ-ն կիրառում իր մասնակիցներին արժեթղթերի անօրինական յուրացումից, ոչնչացումից և կողոպուտից պաշտպանելու համար (օրինակ՝ ապահովագրություն կամ այլ փոխհատուցման սխեմաներ):

Առանցքային դրույթ 5. ԱԿԴ-ն պետք է կիրառի վստահելի համակարգ, որն ապահովում է իր մասնակիցների արժեթղթերի փարանջատում ԱԿԴ-ի սեփական ակտիվներից, ինչպես նաև մասնակիցների ակտիվների միջև փարանջատում: Իրավական ակտերին չհակասելու դեպքում ԱԿԴ-ն պետք է ապահովի նաև գործառնական մակարդակով փարանջատումն ըստ իր մասնակիցների մոտ հաշվառվող հաճախորդների արժեթղթերի և նպաստի այդ հաճախորդների միջոցների շարժին:

Հ. 11.5.1 Տարանջատման ի՞նչ արարողակարգեր ունի ԱԿԴ-ն: Ինչպե՞ս է ԱԿԴ-ն երաշխավորում իր սեփական ակտիվների և իր մասնակիցների արժեթղթերի տարանջատումը: Ինչպե՞ս է ԱԿԴ-ն երաշխավորում իր մասնակիցների ակտիվների միջև տարանջատումը:

Հ. 11.5.2 Իրավական ակտերին չհակասելու դեպքում ինչպե՞ս է ԱԿԴ-ն ապահովում իր մասնակիցների մոտ հաշվառվող հաճախորդների արժեթղթերի մակարդակով տեխնիկապես գործառնական տարանջատումը: Ինչպե՞ս է ԱԿԴ-ն իրականացնում այդ հաճախորդների հաշիվներից ակտիվների շարժը այլ մասնակցի հաշիվներին:

Առանցքային դրույթ 6. ԱԿԴ-ն պետք է բացահայտի, գնահատի, հսկի և կառավարի իր այլ գործունեությունից առաջացող ռիսկերը, որի իրականացման համար կարող են պահանջվել լրացուցիչ գործիքներ/միջոցներ:

Հ. 11.6.1 Մատուցում է արդյոք ԱԿԴ-ն այլ ծառայություններ բացի արժեթղթերի կենտրոնական պահառությունից ու ադմինիստրավորումից, և վերջնահաշվարկի ապահովումից: Եթե այո, ապա ի՞նչ ծառայություններ:

Հ. 11.6.2 Եթե ԱԿԴ-ն իրականացնում է արժեթղթերի կենտրոնական պահառությունից ու ադմինիստրավորումից, և վերջնահաշվարկի ապահովումից տարբերվող այլ ծառայություններ, ինչպե՞ս է այն բացահայտում այդ գործունեությունից առաջացող ռիսկերը, այդ թվում՝ հնարավոր վարկային և իրացվելիության ռիսկերը: Ինչպե՞ս է այն գնահատում, հսկում և կառավարում այդ ռիսկերը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում իրավականորեն տարանջատելով արժեթղթերի կենտրոնական պահառությունից ու ադմինիստրավորումից տարբերվող այլ ծառայությունները:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√		√	√	

Սկզբունք 12. Երկու ֆինանսական ակտիվների փոխանակման համակարգեր

Եթե ՖՇԵ-ն իրականացնում է այնպիսի գործառնությունների վերջնահաշվարկ, որը ենթադրում է երկու փոխկապակցված պարտավորությունների մարում (օրինակ, արժեթղթերով կամ արտարժույթով գործարքները), այն պետք է բացառի պրինցիպալի ռիսկը՝ մի պարտավորության վերջնահաշվարկը պայմանավորելով (զուգորդելով) մյուսի պարտավորության վերջնահաշվարկի կատարմամբ:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի վարկային ռիսկի վերաբերյալ Սկզբունք 4-ի, իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի, հաշվարկների վերջնականության վերաբերյալ Սկզբունք 8-ի և անհրաժեշտության դեպքում այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. Երկու ֆինանսական ակտիվների փոխանակման համակարգ հանդիսացող ՖՇԵ-ն պետք է բացառի պրինցիպալի ռիսկը՝ երաշխավորելով, որ մի պարտավորության վերջնահաշվարկը տեղի է ունենում միայն ու միայն փոխկապակցված պարտավորության վերջնահաշվարկի հետ միասին՝ անկախ նրանից, թե ՖՇԵ-ն վերջնահաշվարկն իրականացնում է համախառն, թե զուտ սկզբունքով, և անկախ, թե երբ է այն վերջնական:

Հ. 12.1.1 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի իրավական, պայմանագրային և տեխնիկական հիմքերը, և ռիսկերի կառավարման համակարգը երաշխավորում, որ համապատասխան ֆինանսական գործիքի վերջնահաշվարկը բացառում է պրինցիպալի ռիսկը: Ի՞նչ գործընթացներ են սահմանված՝ երաշխավորելու, որ մի պարտավորության վերջնահաշվարկը տեղի է ունենում միայն ու միայն փոխկապակցված պարտավորության վերջնահաշվարկի հետ միասին:

Հ. 12.1.2 Ինչպե՞ս է իրականացվում փոխկապակցված պարտավորությունների վերջնահաշվարկը. համախառն սկզբունքով (գործարք առ գործարք), թե՞ զուտացման մեխանիզմով:

Հ. 12.1.3 Միաժամանակյա՞ (զուգահեռ) է արդյոք փոխկապակցված պարտավորությունների վերջնահաշվարկների վերջնականությունը: Եթե ոչ, ապա ո՞ր պահից են այդ երկու պարտավորությունները վերջնական: Նվազագույն է արդյոք երկու պարտավորությունների սառեցման և վերջնահաշվարկի միջև ժամանակահատվածը: Պաշտպանվա՞ծ են արդյոք սառեցված (բլոկավորված) ակտիվները երրորդ անձանց պահանջներից:

Հ. 12.1.4 Գլխավոր գործընկերոջ դեպքում կախվա՞ծ է այն արդյոք այլ ՖՇԵ-ի (ինչպիսին են արժեթղթերի հաշվարկային համակարգերը կամ վճարային համակարգերը) կողմից մատուցվող «առաքում վճարման դիմաց» (DvP) կամ «վճարում վճարման դիմաց» (PvP) ծառայություններից: Եթե այո, ապա ինչպե՞ս է ԳԳ-ն բնորոշում այդ ծառայություններից իր կախվածությունը: Ի՞նչ պայմանագրային հարաբերություններ ունի ԳԳ-ն ԱՀՀ-ի հետ՝ երաշխավորելու, որ մի պարտավորության վերջնահաշվարկը տեղի է ունենում միայն ու միայն փոխկապակցված պարտավորության վերջնահաշվարկի հետ միասին:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	

Սկզբունք 13. Մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) հետ կապված կանոններ և ընթացակարգեր

ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ սահմանված և արդյունավետ կանոններ ու ընթացակարգեր՝ մասնակցի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) դեպքերը կառավարելու համար: Այդ կանոններն ու ընթացակարգերը պետք է ապահովեն ՖՇԵ-ի կողմից ժամանակին համապատասխան միջոցառումների ձեռնարկում՝ կորուստները և իրացվելիության հետ կապված խնդիրները սահմանափակելու, ինչպես նաև ՖՇԵ-ի կողմից իր պարտավորությունների հետագա կատարումն ապահովելու համար:

Երբ ՖՇԵ-ն հանդես է գալիս որպես ԳԳ, դեֆոլտի կառավարմանն առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության արդյունքում այս սկզբունքը պետք է դիտարկվի առանձնացմանն ու տեղափոխելիությանն առնչվող առնչվող Սկզբունք 14-ի հետ: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև վարկային ռիսկի վերաբերյալ Սկզբունք 4-ի, իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի, ինչպես նաև կանոնների, հիմնական ընթացակարգերի և շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է ունենա դեֆոլտի կառավարման կանոններ և ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան նրան մասնակցի (մասնակիցների) դեֆոլտի դեպքում շարունակելու կատարել իր պարտավորությունները, և կարգավորել դեֆոլտի արդյունքում անհրաժեշտ ռեսուրսների համալրման գործընթացը:

Մասնակիցների պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) հետ կապված կանոններ և ընթացակարգեր

Հ. 13.1.1 Հստակ սահմանում են արդյոք ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը դեֆոլտի պահը/ բնորոշումը և դրա բացահայտման մեթոդները: Վերջիններս առնչվում են մասնակցի ինչպես ֆինանսական, այնպես նաև գործառնական դեֆոլտի (երբ մասնակիցը չի կարողանում կատարել իր պարտավորությունները գործառնական խնդիրների պատճառով, ինչպիսին են SS համակարգերի խափանումները) դեպքերին: Ինչպե՞ս են այդ դեպքերը բնութագրվում:

Հ. 13.1.2 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը կարգավորում մասնակիցների դեֆոլտին առնչվող հետևյալ դրույթները.

- ա) դեֆոլտի հայտարարման դեպքում ՖՇԵ-ի կողմից հնարավոր գործողությունները,
- բ) գործողությունների ավտոմատ կամ դիսկրետ լինելու մակարդակը,
- գ) վերջնահաշվարկի ստանդարտ գործընթացների նկատմամբ փոփոխությունները,
- դ) գործառնությունների կառավարումը պրոցեսինգի տարբեր մակարդակներում (փուլերում),

ե) սեփական և մասնակիցների հաշիվների ու գործառնությունների միջև տարանջատման (նախապատվելիության կամ առաջնահերթության) նախատեսված մոտեցումները,

զ) գործողությունների հավանական հերթականությունը,

է) տարբեր կողմերի, այդ թվում՝ դեֆոլտի չենթարկված մասնակիցների, դերը, պարտավորությունները և պատասխանատվությունը, և

ը) այլ մեխանիզմների առկայություն, որոնք կարող են գործարկվել դեֆոլտի ազդեցությունը մեղմելու համար:

Ֆինանսական ռեսուրսների օգտագործումը

Հ. 13.1.3 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը նրան հնարավորություն տալիս անմիջապես օգտագործել իր մոտ առկա ֆինանսական ռեսուրսները՝ դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները հաղթահարելու և իրացվելիության ճնշումները (անբավարարությունը) ծածկելու համար՝ ներառյալ իրացվելիության ապահովման մեխանիզմները:

Հ. 13.1.4 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը կարգավորում ֆինանսական ռեսուրսների օգտագործման հերթականությունը:

Հ. 13.1.5 Ինչպե՞ս են ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը կարգավորում դեֆոլտի արդյունքում ռեսուրսների համալրումը:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է պարտաստ լինի կիրառելու դեֆոլտի վերաբերյալ իր կանոններն ու ընթացակարգերը, ներառյալ՝ կանոններով նախատեսված համապատասխան դիսկրետ արարողակարգերը:

Հ. 13.2.1 Ունի՞ արդյոք ՖՇԵ-ի ղեկավար անձնակազմը ներքին ծրագրեր, որոնք հստակ սահմանում են դեֆոլտի կառավարման իրավասություններն ու պարտավորությունները: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:

Հ. 13.2.2 Հեռահաղորդակցման (կապի) ի՞նչ միջոցներ ու արարողակարգեր է կիրառում ՖՇԵ-ն բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ կարգավորող, վերահսկող և հսկողություն իրականացնող մարմիններին ժամանակին տեղեկացումն ապահովելու համար:

Հ. 13.2.3 Ի՞նչ հաճախականությամբ են վերանայվում դեֆոլտի կառավարման ներքին ծրագրերը: Ի՞նչ կառավարչական մեխանիզմներ են կիրառվում այդ ծրագրերի ապահովման համար:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է հրապարակի դեֆոլտի կառավարման իր կանոններն ու ընթացակարգերի հիմնական դրույթները

Հ. 13.3.1 Ինչպե՞ս է ապահովվում մասնակիցների դեֆոլտի դեպքում ՖՇԵ-ի կանոնների ու ընթացակարգերի հիմնական դրույթների հրապարակայնությունը: Ինչպե՞ս են դրանք կարգավորում հետևյալ դրույթները.

ա) նախադրյալներ (իրավիճակներ), որոնց դեպքում պետք է իրականացվեն համապատասխան քայլեր/ գործողություններ,

բ) ով ունի նման գործողություններ իրականացնելու իրավասություն,

գ) իրականացվելիք հնարավոր գործողությունների շրջանակը, ներառյալ՝ ինչպես սեփական, այնպես նաև հաճախորդների դիրքերի, միջոցների և ակտիվների նկատմամբ ռեժիմը,

դ) դեֆոլտի չենթարկված մասնակիցների նկատմամբ ՖՇԵ-ի պարտավորությունների կարգավորման մեխանիզմները,

ե) մասնակիցների հաճախորդների հետ ուղղակի կապերի առկայության դեպքում համապատասխան մեխանիզմների առկայություն՝ կարգավորելու դեֆոլտի ենթարկված անձի պարտավորությունները իր հաճախորդների նկատմամբ:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է մասնակիցների դեֆոլտի կառավարման (ներառյալ լուծարման) իր ընթացակարգերի թեսթավորման և վերլուծության ժամանակ ընդգրկի նաև իր մասնակիցներին և այլ շահագրգիռ կողմերին: Նման թեսթավորում և վերլուծություն պետք է իրականացվի առնվազն փարին մեկ անգամ կամ կանոններում ու ընթացակարգերում նշանակալի փոփոխությունների դեպքում՝ երաշխավորելու համար, որ վերջիններս կիրառելի (պրակտիկ) են և արդյունավետ:

Հ. 13.4.1 Ինչպիսի՞ն է ՖՇԵ-ի մասնակիցների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը դեֆոլտի կառավարման ընթացակարգերի թեսթավորման և վերլուծության գործընթացում: Ի՞նչ հաճախականությամբ է այն իրականացնում նման թեսթավորում և վերլուծություն: Ինչպե՞ս են այդ թեսթավորման արդյունքները կիրառվում: Ի՞նչ չափով են արդյունքները տրամադրվում Խորհրդին, ռիսկերի կոմիտեին և համապատասխան կառույցներին:

Հ. 13.4.2 Մասնակիցների դեֆոլտի ի՞նչ հավանական սցենարների ու ընթացակարգերի շրջանակ են ներառում այդ թեսթերը: Որքանո՞վ է ՖՇԵ-ն թեսթավորում իր մասնակիցների մոտ առողջացման և վերակազմավորման ծրագրերի իրագործման գործընթացները:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ √	ԱՌ
----	-----	-----	---------	----

Սկզբունք 14. Առանձնացում և տեղափոխելիություն

Գլխավոր գործընկերը պետք է ունենա կանոններ և ընթացակարգեր, որոնք կապահովեն իր մասնակցի հաճախորդների դիրքերի և այդ դիրքերին համապատասխան ԳԳ-ին տրամադրված ապահովվածության առանձնացումը (segregation) և տեղափոխելիությունը (portability)

Երբ ՖՇԵ-ն հանդես է գալիս որպես Գլխավոր գործընկեր, դեֆոլտի կառավարմանն առնչվող սկզբունքների միջև սերտ փոխկախվածության արդյունքում այս Սկզբունքը պետք է դիտարկվի մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) հետ կապված կանոններին ու ընթացակարգերին առնչվող առնչվող Սկզբունք 13-ի հետ: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև մասնակցության բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ Սկզբունք 19-ի, ինչպես նաև կանոնների, հիմնական ընթացակարգերի և շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանձնացումը ենթադրում է մասնակցի հաճախորդների (կամ ըստ յուրաքանչյուր հա-ախորդի) դիրքերի և համապատասխան ապահովվածության տարանջատում այդ մասնակցի սեփական ակտիվներից և դրանց առանձնացված հաշվառում: Դա հնարավորություն է տալիս նվազեցնել մասնակցի դեֆոլտի կամ նրա այլ հաճախորդների դեֆոլտի դեպքում առաջացող ռիսկն այն մասնակիցների համար, ովքեր չունեն նման խնդիրներ:

Տեղափոխելիությունը ենթադրում է գործառնական հնարավորություն անհրաժեշտության դեպքում տեղափոխել կամ այլ մասնակցի փոխանցել դեֆոլտի ենթարկված մասնակցի հաճախորդների դիրքերն ու ապահովվածությունը: Դա հնարավորություն է տալիս նվազեցնել դիրքերի փակման անհրաժեշտությունը և դրա հետ կապված ծախսերը, այդ թվում՝ շուկայական ճգնաժամային պայմաններում, ինչպես նաև շարունակել ունենալ կենտրոնացված քլիրինգին հասանելիություն:

Առանցքային դրույթ 1. Գլխավոր գործընկերը պետք է առնվազն ունենա առանձնացման և տեղափոխելիության ընթացակարգեր, որոնք արդյունավետորեն պաշտպանում են մասնակիցների հաճախորդների դիրքերն ու համապատասխան ապահովվածության միջոցները այդ մասնակցի դեֆոլտից կամ անվճարունակությունից: Եթե ԳԳ-ն առաջարկում է մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների լրացուցիչ պաշտպանություն նաև մասնակցի և վերջինիս այլ հաճախորդի միաժամանակյա դեֆոլտի դեպքում, այն պետք է քայլեր ձեռնարկի երաշխավորելու, որ այդ պաշտպանությունն արդյունավետ է:

Մասնակցի դեֆոլտից հաճախորդների պաշտպանություն

Հ. 14.1.1 Առանձնացման ի՞նչ մեխանիզմներ ու արարողակարգեր ունի ԳԳ-ն իր մասնակիցների հաճախորդների դիրքերն ու համապատասխան ապահովվածության միջոցները այդ մասնակցի անվճարունակությունից կամ դեֆոլտից արդյունավետորեն պաշտպանելու համար:

Հ. 14.1.2 Տեղափոխելիության ինչպիսի՞ արարողակարգեր ունի ԳԳ-ն:

Հ. 14.1.3 Եթե ԳԳ-ն սպասարկում է փողի շուկան (ներառված է դրամական հաշվարկներում) և չի ապահովում առանձնացման գործընթացներ, ապա ինչպե՞ս է այն ապահովում հաճախորդների ակտիվների պաշտպանությունը: Գնահատե՞լ է արդյոք ԳԳ-ն, թե որքանո՞վ է իրավական և կարգավորման դաշտը ապահովում հաճախորդների պաշտպանության և արդյունավետության նույն մակարդակը, ինչ կապահովվեր առանձնացման և տեղափոխելիության համապատասխան արարողակարգերի առկայության դեպքում:

Հաճախորդների պաշտպանությունն փվյալ մասնակցի և վերջինիս այլ հաճախորդի միաժամանակյա դեֆոլտից

Հ. 14.1.4 Եթե ԳԳ-ն առաջարկում է մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների լրացուցիչ պաշտպանություն նաև մասնակցի և նրա մեկ այլ հաճախորդի միաժամանակյա դեֆոլտի դեպքում, ապա ինչպե՞ս է ԳԳ-ն երաշխավորում, որ այդ պաշտպանությունն արդյունավետ է:

Իրավական հիմքեր

Հ. 14.1.5 Ի՞նչ փաստեր են առկա, որ ԳԳ-ի իրավական հիմքերը հնարավորություն են տալիս աջակցելու և երաշխավորելու իր մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների պաշտպանության համար գործող ընթացակարգերը:

Հ. 14.1.6 Ի՞նչ վերլուծություն է իրականացրել ԳԳ-ն՝ պարզելու, թե որքանո՞վ են ազդեցիկ և ենթակա պարտադիր կատարման հաճախորդների առանձնացման և տեղափոխելիության ամեխանիզմները, այդ թվում՝ արտասահմանյան կամ հեռակա մասնակիցների դեպքում: Մասնավորապես, օտարերկրյա ի՞նչ օրենքներ/կարգեր է առանձնացրել ԳԳ-ն, որոնք ըստ իրեն նպաստում են և հիմք են տալիս ապահովելու հաճախորդների դիրքերի ու ապահովվածության առանձնացումն ու տեղափոխելիությունը: Ինչպե՞ս են կարգավորվել բացահայտված խնդիրները, եթե այդպիսիք եղել են:

Առանցքային դրույթ 2. Գլխավոր գործընկերը պետք է ունենա հաշիվների այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում հստակ պարզելու մասնակիցների հաճախորդների դիրքերը և փարանջատելու համապատասխան ապահովվածության միջոցները: ԳԳ-ն պետք է հաշվառի հաճախորդների դիրքերն ու ապահովվածության միջոցները հաճախորդների անհատական կամ «օմնիբուս» հաշիվներով:

Հաճախորդների հաշիվները կարող են լինել երկու տեսակի՝ անհատական և «օմնիբուս».

- ✓ *անհատական հաշիվների կառուցվածքը* ենթադրում է ԳԳ-ի կողմից յուրաքանչյուր հաճախորդի գծով ապահովվածության համար առանձին հաշվի վարում, և այդ ապահովվածության օգտագործում միայն այդ հաճախորդի դեֆոլտի դեպքում առաջացող վնասները ծածկելու համար, այն է՝ հաճախորդի ապահովվածության պաշտպանություն անհատական հիմունքներով
- ✓ *օմնիբուս հաշիվների կառուցվածքը* ենթադրում է ԳԳ-ի կողմից իր բոլոր հաճախորդների ապահովվածության միասնական վարում մեկ հաշվով, որը սակայն առանձնացված է իր

սեփական հաշվից և ապահովվածության միջոցներից: Նման հաշվի կառավարումը գործառնական տեսակետից ավելի հարմար է, և այս կառուցվածքը ևս հնարավորություն է տալիս պաշտպանել մասնակցի հաճախորդներին այդ մասնակցի դեֆոլտի հետևանքներից: Այնուամենայնիվ, ապահովվածության պաշտպանությունը «օմնիբուս» եղանակով կարող է մասնակցի հաճախորդների մոտ առաջացնել նույն մասնակցի այլ հաճախորդի հետ կապված ռիսկ («fellow-customer risk»), երբ որևէ հաճախորդի դեֆոլտի արդյունքում կարող է առաջանալ վնաս, եթե վերջինիս պարտավորությունները գերազանցում են նրա դիրքերն ու ապահովվածությունը և օգտագործվում է մասնակցի այլ ակտիվները՝ վնասը ծածկելու համար: Այս ռիսկի կառավարումը շատ կարևոր է, քանի որ սովորաբար հաճախորդները չունեն իրենց մասնակցի այլ հաճախորդների ռիսկերի մոնիթորինգի հնարավորություն: Այնուամենայնիվ, «օմնիբուս» հաշիվների դեպքում այլ հաճախորդի հետ կապված ռիսկի կառավարման համար այն կարող է կառուցված լինել այնպես, որ գործառնական տեսակետից միջոցները հաշվառվեն մեկ հաշվով, սակայն իրավական տեսակետից պաշտպանված լինեն անհատական մակարդակով:

Հ. 14.2.1 Ինչպե՞ս է ԳԳ-ն առանձնացնում մասնակիցների հաճախորդների դիրքերը և ապահովվածության միջոցները այդ մասնակցի սեփական դիրքերից և ապահովվածության միջոցներից: Հաշվի ինչպիսի՞ կառուցվածք (անհատական թե «օմնիբուս») է կիրառվում ԳԳ-ի կողմից մասնակիցների հաճախորդների դիրքերի և ապահովվածության միջոցների համար: Ո՞րն է այդ ընտրության հիմնավորումը:

Հ. 14.2.2 Եթե ԳԳ-ն (կամ իր պահառուները) իր մոտ պահում է հաճախորդների դիրքերը երաշխավորող ապահովվածության միջոցներ, ապա ի՞նչն է այն ծածկում (օրինակ՝ նախնական կամ փոփոխական մարժաների պահանջները):

Հ. 14.2.3 Հիմնվու՞մ է արդյոք ԳԳ-ն իր մասնակիցների հաճախորդների անհատական ենթահաշիվների վերաբերյալ գրառումների վրա՝ յուրաքանչյուր մասնակցի իրավասությունները բացահայտելու համար: Եթե այո, ապա ինչպե՞ս է ԳԳ-ն երաշխավորում, որ նրան հասանելի է այդ տեղեկատվությունը: ԳԳ-ի կողմից հաճախորդներից գանձվող մարժան հաշվարկվում է համախաճն, թե՛ զուտ սկզբունքով: Ի՞նչ չափով են հաճախորդների ապահովվածության միջոցները ենթարկվում այլ հաճախորդներից բխող ռիսկի:

Առանցքային դրույթ 3. Գլխավոր գործընկերը պետք է իր տեղափոխելիության մեխանիզմները մշակի այնպիսի սկզբունքով, որը հնարավորություն կտա դեֆոլտի ենթարկված մասնակցի հաճախորդների դիրքերն ու ապահովվածությունը անհրաժեշտության դեպքում տեղափոխելու մեկ կամ մի քանի այլ մասնակիցների մոտ:

Հ. 13.3.1 Ինչպե՞ս են ԳԳ-ի տեղափոխելիության մեխանիզմներն ապահովում դեֆոլտի ենթարկված մասնակցի հաճախորդների դիրքերի ու ապահովվածության հավանական տեղափոխելիությունը մեկ կամ մի քանի այլ մասնակիցների մոտ:

Հ. 13.3.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն ստանում մասնակցի (մասնակիցների) համաձայնությունը՝ կապված այն հարցի շուրջ, թե դիրքերի և ապահովվածության որ մասն է ենթակա տեղափոխելիության: Սահմանվա՞ծ են արդյոք համաձայնեցման գործընթացները ԳԳ-ի կանոններում, քաղաքականության

մեջ կամ ընթացակարգերում: Եթե այո, ապա նկարագրեք դրանք: Եթե կան որևէ բացառություններ, ապա ինչպե՞ս է բացահայտված այդ տեղեկատվությունը:

Առանցքային դրույթ 4. Գլխավոր գործընկերը պետք է տրամադրի տեղեկատվություն իր մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների առանձնացմանն ու տեղափոխելիությանն առնչվող կանոնների, քաղաքականության և գործընթացների վերաբերյալ: Մասնավորապես, ԳԳ-ն պետք է տեղեկացնի, թե արդյոք հաճախորդների ապահովվածության միջոցները պաշտպանված են անհատական թե «օմնիբուս» տարբերակով: Բացի այդ, ԳԳ-ն պետք է տեղեկացնի նաև ցանկացած իրավական, գործառնական և այլ սահմանափակումների մասին, որոնք կարող են ազդել մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների առանձնացմանն ու տեղափոխելիության վրա:

Հ. 14.4.1 Ինչպե՞ս է ԳԳ-ն տեղեկացնում/բացահայտում առանձնացման և տեղափոխելիության իր մեխանիզմների մասին: Ներառվա՞ծ է արդյոք տեղեկատվություն, թե հաճախորդների ապահովվածության միջոցներն ինչ եղանակով են պաշտպանված. անհատական, թե «օմնիբուս»:

Հ. 14.4.2 Որտե՞ղ և ինչպե՞ս են առանձնացման և տեղափոխելիության ԳԳ-ի ընթացակարգերի հետ կապված ռիսկերը, ծախսերն ու անորոշությունները սահմանված և բացահայտված: Ինչպե՞ս է ԳԳ-ն տեղեկատվություն տրամադրում ցանկացած սահմանափակումների (օրինակ՝ իրավական և գործառնական) մասին, որոնք կարող են ազդել մասնակիցների հաճախորդների դիրքերի ու համապատասխան ապահովվածության միջոցների առանձնացմանն ու տեղափոխելիության վրա:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√	√	√	√	√

Սկզբունք 15. Ընդհանուր բիզնես ռիսկ

ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի իր ընդհանուր բիզնես ռիսկը և պահի սեփական կապիտալով ապահովված բավարար չափով իրացվելի զույր ակտիվներ՝ հավանական վնասները ծածկելու համար այնպես, որ կարողանա շարունակել ծառայությունների մատուցումը որպես գործող ընկերություն, եթե այդ կորուստներն ի հայտ գան: Ավելին, այդ իրացվելի զույր ակտիվները պետք է ժամանակի ցանկացած պահի լինեն բավարար՝ կրիտիկական գործառնությունների և ծառայությունների վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման համար:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի ռիսկերի բազմակողմանի կառավարման համակարգի առկայության մասին Սկզբունք 3-ի, էֆեկտիվության ու արդյունավետության վերաբերյալ Սկզբունք 21-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Ընդհանուր բիզնես ռիսկը ենթադրում է ՖՇԵ-ի ձեռնարկատիրական գործունեությունից առաջացող ռիսկը և դրա հետևանքները, որոնք կապված չեն մասնակցի դեֆոլտի հետ և չեն ծածկվում վարկային ու իրացվելիության ռիսկերի Սկզբունքներով նախատեսվող ֆինանսական ռեսուրսներով: Այն առաջանում է կազմակերպության եկամուտների նվազման և/կամ ծախսերի ավելացման ժամանակ, երբ ծախսերի գերակայությունը եկամտի նկատմամբ առաջացնում է վնասներ:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է ունենա կառավարման և հսկողության վստահելի համակարգեր՝ բացահայտելու, դիտարկելու/հսկելու և կառավարելու ընդհանուր բիզնես ռիսկերը, այդ թվում՝ կապված գործունեության ռազմավարության վար իրագործման, դրամական հոսքերի բացասական շարժի կամ անսպասելի ու աննախադեպ բարձր գործառնական ծախսերի հետ:

Հ. 15.1.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում իր ընդհանուր բիզնես ռիսկերը, և ի՞նչ նման ռիսկեր են մինչ այժմ բացահայտվել ՖՇԵ-ի կողմից:

Հ. 15.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր ընդհանուր բիզնես ռիսկերի ընթացիկ մոնիթորինգ և իրականացնում դրանց կառավարում: Բիզնես ռիսկի գնահատման ժամանակ հաշվի առնու՞մ է արդյոք ՖՇԵ-ն իր դրամական միջոցների հոսքի և մասնավոր ՖՇԵ-ի դեպքում՝ նրա կապիտալի վրա հնարավոր ազդեցությունները (հետևանքները):

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է ունենա կապիտալով ապահովված իրացվելի զույր ակտիվներ (ինչպիսին են սովորական բաժնետոմսերը, հայտարարված պահուստները կամ այլ չբաշխված շահույթ) այն չափով, որ կարողանա շարունակել ծառայությունների մատուցումը որպես գործող ընկերություն այդ կորուստներն ի հայտ գալու դեպքում: ՖՇԵ-ի՝ կապիտալով ապահովված իրացվելի զույր ակտիվների անհրաժեշտ մեծությունը կախված է իր ընդհանուր բիզնես ռիսկի բնույթից և այն ժամանակից, որը պահանջվում է իր կրիտիկական գործառ-

նությունների և ծառայությունների վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման համար, եթե նման անհրաժեշտություն առաջանա:

Հ. 15.2.1 Պահու՞մ է արդյոք ՖՇԵ-ն կապիտալով ապահովված իրացվելի զուտ ակտիվներ այն չափով, որ կարողանա շարունակել ծառայությունների մատուցումը որպես գործող ընկերություն, եթե ի հայտ գան ընդհանուր բիզնես ռիսկից առաջացած կորուստներ:

Հ. 15.2.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաշվարկում կապիտալով ապահովված իրացվելի զուտ ակտիվների անհրաժեշտ մեծությունը՝ իր ընդհանուր բիզնես ռիսկը ծածկելու համար: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն որոշել իր կրիտիկական գործառնությունների և ծառայությունների վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման համար անհրաժեշտ ժամանակը և դրա հետ կապված գործառնական ծախսերը:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է ունենա վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման գործուն և իրարեսական ծրագիր, ինչպես նաև պահի կապիտալով ապահովված բավարար չափով իրացվելի զուտ ակտիվներ՝ այդ ծրագրի իրագործման համար: ՖՇԵ-ն պետք է նվազագույնը ունենա իր վերջին առնվազն վեց ամիսների ընթացիկ գործառնական ծախսերին համարժեք իրացվելի զուտ ակտիվներ՝ ապահովված կապիտալով: Այս ակտիվները հավելյալ են ֆինանսական ռեսուրսների Սկզբունքներին առնչվող մասնակիցների դեֆոլտը կամ այլ ռիսկերը ծածկելու համար պահանջվող/պահվող միջոցներից: Այնուամենայնիվ, ռիսկերի վրա հիմնված միջազգային ստանդարտներին համապատասխանող ձևով պահվող կապիտալը կարող է նպատակահարմարության և անհրաժեշտության դեպքում ներառվել՝ բացառելու համար կապիտալի նկատմամբ համարժեքության պահանջների կրկնակի սահմանումը:

Վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման ծրագիր

Հ. 15.3.1 Մշակե՞լ է արդյոք ՖՇԵ-ն ծրագիր անհրաժեշտության դեպքում իր գործունեության վերականգնման կամ աստիճանական ձևով չեզոքացման համար: Եթե այո, ապա ի՞նչ է այդ ծրագիրը հաշվի առնում (օրինակ՝ մասնակիցների նկատմամբ սահմանված գործառնական, տեխնոլոգիական և իրավական պահանջներ՝ ստեղծելու և անցնելու այլընտրանքային այլ մեխանիզմների):

Ռեսուրսներ

Հ. 15.3.2 Կապիտալով ապահովված ի՞նչ ծավալի իրացվելի զուտ միջոցներ է պահում ՖՇԵ-ն վերոնշյալ ծրագրի ապահովման համար: Ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն սահմանել, որ այդ միջոցները բավարար են տվյալ ծրագրի ապահովման համար: Համարժե՞ք է արդյոք այդ մեծությունը ՖՇԵ-ի առնվազն վեց ամսվա ընթացիկ գործառնական ծախսերի հանրագումարին:

Հ. 15.3.3 Ինչպե՞ս են բիզնես ռիսկերի հաղթահարման համար հատկացվող ռեսուրսներն առանձնացված ֆինանսական ռեսուրսների Սկզբունքների ներքո որպես պահանջ սահմանված մասնակիցների դեֆոլտի կամ այլ ռիսկերի ու վնասների ծածկման համար նախատեսված ռեսուրսներից:

Հ. 15.3.4 Ներառու՞մ է արդյոք ՖՇԵ-ն ռիսկերի վրա հիմնված միջազգային ստանդարտներին համապատասխանող կապիտալ իր ընդհանուր բիզնես ռիսկերը ծածկելու համար:

Առանցքային դրույթ 4. Ընդհանուր բիզնես ոլսկի ծածկման համար պահվող ակտիվները պետք է լինեն բարձր որակի և բավարար չափով իրացվելի, որպեսզի հնարավորություն տան ՖՇԵ-ին կատարելու իր ընթացիկ և նախատեսված գործառնական ծախսերը տարբեր սցենարների դեպքում, ներառյալ՝ ճգնաժամային շուկայական պայմանները:

Հ. 15.4.1 Ինչպիսի՞ն է ՖՇԵ-ի՝ կապիտալով ապահովված իրացվելի զուտ ակտիվների կազմը: Անհրաժեշտության դեպքում ճգնաժամային շուկայական պայմաններում ինչպե՞ս կփոխարկի ՖՇԵ-ն այդ ակտիվները կանխիկի՝ հնարավորինս քիչ կորստով կամ առանց որևէ կորստի:

Հ. 15.4.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն պարբերաբար գնահատում, թե որքանով է կապիտալով ապահովված իր իրացվելի զուտ ակտիվների որակն ու իրացվելիության մակարդակը բավարար՝ կատարելու իր ընթացիկ և նախատեսված գործառնական ծախսերը տարբեր սցենարների դեպքում, ներառյալ՝ ճգնաժամային շուկայական պայմանները:

Առանցքային դրույթ 5. ՖՇԵ-ն պետք է ունենա գործուն և իրատեսակ ծրագիր լրացուցիչ կապիտալ ներգրավելու համար, եթե նրա սեփական կապիտալը նվազի մինչև պահանջվող նվազագույն մեծությունը կամ լինի դրանից ցածր: Այդ ծրագիրը պետք է հաստատվի փնտրենների խորհրդի կողմից և պարբերաբար թարմացվի:

Հ. 15.5.1 Մշակե՞լ է արդյոք ՖՇԵ-ն համապատասխան ծրագիր լրացուցիչ կապիտալ ներգրավելու համար: Որո՞նք են լրացուցիչ կապիտալ ներգրավելու ՖՇԵ-ի ծրագրի հիմնական բնութագրիչները, որը կիրառվում է, երբ նրա սեփական կապիտալը նվազում է մինչև պահանջվող մեծությունը կամ դառնում դրանից ցածր:

Հ. 15.5.2 Ի՞նչ պարբերականությամբ է լրացուցիչ կապիտալ ներգրավելու ծրագիրը վերանայվում և թարմացվում:

Հ. 15.5.3 Ի՞նչ դերակատարում ունի ՖՇԵ-ի խորհուրդը (կամ համարժեք մարմինը) անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կապիտալի ներգրավման ծրագրի վերանայման և հաստատման գործընթացում:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	

Սկզբունք 16. Պահառուական և ներդրումային ռիսկեր

ՖՇԵ-ն պետք է ապահովի իր սեփական և իր մասնակիցների ակտիվների պաշտպանությունը, ինչպես նաև նվազագույնի հասցնի այդ ակտիվների կորստի կամ դրանց նկատմամբ հասանելիության ուշացումների ռիսկը: ՖՇԵ-ի ներդրումները պետք է իրականացվեն իրացվելիության, վարկային և շուկայական ցածր ռիսկ պարունակող գործիքներում:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի վարկային ռիսկի մասին Սկզբունք 4-ի, ապահովվածության վերաբերյալ Սկզբունք 5-ի, իրացվելիության ռիսկի մասին Սկզբունք 7-ի, և անհրաժեշտության դեպքում նաև այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է իր և իր հաճախորդների ակտիվները պահի վերահսկվող և կարգավորվող այնպիսի կազմակերպություններում, որոնք ունեն հաշվապահական հաշվառման հստակ մեխանիզմներ, հուսալի պահառուական գործընթացներ և ներքին հսկողության մեխանիզմներ՝ այդ ակտիվները լիովին պաշտպանելու համար:

Հ. 16.1.1 Եթե ՖՇԵ-ն ունի պահառուներ, ապա ինչպե՞ս է այն ընտրում այդ պահառուներին: Ի՞նչ յուրահատուկ չափանիշ է կիրառում ՖՇԵ-ն այդ ընտրության իրականացման համար, ներառյալ այդ կառույցների նկատմամբ վերահսկման և կարգավորման առանձնահատկությունները: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում այդ չափանիշներին իր պահառուների համապատասխանության մոնիթորինգը:

Հ. 16.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ստուգում, որ այդ կառույցներն ունեն հաշվապահական հաշվառման հստակ մեխանիզմներ, հուսալի պահառուական գործընթացներ և ներքին հսկողության մեխանիզմներ՝ այդ ակտիվները լիովին պաշտպանելու համար:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է անհրաժեշտության դեպքում ունենա արագ հասանելիություն իր և իր մասնակիցների կողմից փրամադրված ակտիվների նկատմամբ:

Հ. 16.2.1 Ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն սահմանել, որ այն ունի հստակ և հուսալի իրավական հիմքեր պահառուի մոտ գտնվող ակտիվների նկատմամբ իր սեփականության իրավունքի կամ այլ իրավունքների հարկադիր իրականացման համար:

Հ. 16.2.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ մասնակիցների դեֆոլտի դեպքում այն ունի արագ հասանելիություն իր ակտիվներին, ներառյալ՝ պահառուի կողմից այլ ժամանակային գոտում կամ այլ իրավական դաշտում պահվող արժեթղթերը:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է գնահատի և գիտակցի պահառու բանկերից առաջացող իր ռիսկերը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հետ իր հարաբերությունների ամբողջ շրջանակը:

Հ. 16.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում և գիտակցում իր պահառու բանկերից առաջացող ռիսկերը: Այդ ռիսկերի կառավարման ժամանակ ինչպե՞ս է այն հաշվի առնում յուրաքանչյուրի հետ իր հարաբերությունների ամբողջ շրջանակը: Օրինակ՝ պահառուների նկատմամբ իր ռիսկը դիվերսիֆիկացնելու համար իրականացնում է արդյո՞ք ՖՇԵ-ն իր ակտիվների պահառությունը տարբեր պահառուների մոտ: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում իր պահառու բանկերի ռիսկերի կենտրոնացումների մոնիթորինգ:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ի ներդրումային քաղաքականությունը պետք է համահունչ լինի ռիսկերի կառավարման իր ընդհանուր քաղաքականությանը և ամբողջությամբ հասանելի լինի իր մասնակիցներին: Ներդրումները պետք է պաշտպանված լինեն բարձր հուսալի պարտապանների նկատմամբ պահանջներով: Այդ ներդրումները պետք է հնարավորություն տան դրանց արագ իրացումը՝ առանց գների վրա հակադարձ կապի:

Ներդրումային քաղաքականություն

Հ. 16.4.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր ներդրումային քաղաքականությունը համահունչ է ռիսկերի կառավարման իր ընդհանուր քաղաքականությանը: Ու՞մ և ինչպե՞ս է ՖՇԵ-ն հասանելի դարձնում իր ներդրումային քաղաքականությունը:

Հ. 16.4.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր ներդրումներն իրենցից ներկայացնում են ***բարձր հուսալի պարտապանների նկատմամբ պահանջներ:***

Ներդրումների ռիսկի բնութագրիչները

Հ. 16.4.3 Ներդրումների իրականացման ժամանակ ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում պարտապանների հետ կապված իր ռիսկերը: Ո՞ր ներդրումներն են ենթակա սահմանափակումների՝ վարկային ռիսկերի կոնտրոնացումից խուսափելու համար:

Հ. 16.4.4 Ներդնում է արդյո՞ք ՖՇԵ-ն իր մասնակիցների ակտիվները հենց այդ մասնակիցների կամ նրա փոխկապակցված անձանց արժեթղթերում:

Հ. 16.4.5 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր ներդրումները հնարավորություն են տալիս դրանք արագ իրացնել՝ առանց գների վրա հակադարձ կապի:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 17. Գործառնական ռիսկ

ՖՇԵ-ն պետք է բացահայտի գործառնական ռիսկի ինչպես ներքին, այնպես նաև արտաքին բոլոր հնարավոր աղբյուրները, և համապատասխան համակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի և հսկողական մեխանիզմների ներդրման միջոցով նվազագույնի հասցնի դրանց ազդեցությունը: Համակարգը պետք է ապահովի բարձր աստիճանի անվտանգություն և գործառնական հուսալիություն, ինչպես նաև բավարար և ընդլայնելի հզորություն/ թողունակություն: Գործարար անընդհատության կառավարումը պետք է միարժեք լինի գործառնությունների ժամանակին վերականգնմանը և ՖՇԵ-ի կողմից պարտավորությունների կատարմանը, այդ թվում՝ լայնածավալ ապակայուն իրավիճակներում:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի ՖՇԵ-ի կապերի վերաբերյալ Սկզբունք 20-ի, էֆեկտիվության ու արդյունավետության վերաբերյալ Սկզբունք 21-ի, հաղորդակցման ընթացակարգին ու ստանդարտներին առնչվող Սկզբունք 22-ի, և անհրաժեշտության դեպքում նաև այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է մշակի գործառնական ռիսկերի կառավարման հայեցակարգ, որն ունենա համապատասխան համակարգեր, քաղաքականություն, գործընթացներ և հսկողական մեխանիզմներ՝ գործառնական ռիսկերի բացահայտման, մոնիթորինգի և կառավարման համար:

Գործառնական ռիսկերի բացահայտում

Հ. 17.1.1 Ի՞նչ քաղաքականություն և գործընթացներ է սահմանել ՖՇԵ-ն՝ գործառնական ռիսկի հնարավոր աղբյուրների բացահայտման համար: Ինչպե՞ս են այդ գործընթացները նպաստում գործառնական ռիսկերի հնարավոր աղբյուրների բացահայտմանը՝ անկախ նրանից ի հայտ են եկել այդ ռիսկերը ներքին գործոնների (օրինակ՝ բուն համակարգի մեխանիզմի, այդ թվում՝ մարդկային գործոնի), ՖՇԵ-ի մասնակիցների, թե արտաքին աղբյուրների հետևանքով:

Հ. 17.1.2 Գործառնական ռիսկերի առաջացման ի՞նչ աղբյուրներ են մինչ այժմ բացահայտվել ՖՇԵ-ի կողմից: Որո՞նք են ՖՇԵ-ի կողմից բացահայտված իր գործառնությունների առանցքային խոցելի կետերը:

Գործառնական ռիսկերի կառավարում

Հ. 17.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հսկում և կառավարում իր կողմից բացահայտված գործառնական ռիսկերը: Որտե՞ղ են այդ համակարգերը, քաղաքականությունը, ընթացակարգերն ու հսկողական մեխանիզմները փաստաթղթավորված:

Քաղաքականություն, գործընթացներ և հսկողական մեխանիզմներ

Հ. 17.1.4 Ի՞նչ քաղաքականություն, գործընթացներ և հսկողական մեխանիզմներ է կիրառում ՖՇԵ-ն, որոնք նախատեսված են երաշխավորելու, որ գործառնական ընթացակարգերը պատշաճ ձևով

են ներդրված: Ի՞նչ չափով են ՖՇԵ-ի համակարգերը, քաղաքականությունը, գործընթացները և հսկողական մեխանիզմները հաշվի առնում գործառնական ռիսկերի կառավարման միջազգային, ազգային և ոլորտին առնչվող ստանդարտները:

Հ. 17.1.5 Բարձր որակավորում ունեցող անձնակազմի ներգրավման, մասնագիտական կրթման և իր մոտ պահելու ի՞նչ քաղաքականություն է ՖՇԵ-ն կիրառում, և ի՞նչ ձևով է այդ քաղաքականությունը մեղմացնում անձնակազմի ակտիվ հոսունության հետ կապված հետևանքները և առնցքային պաշտոն զբաղեցնող մարդկանց հետ կապված ռիսկերը: Ինչպե՞ս են ռիսկերի և անձնակազմի կառավարման ՖՇԵ-ի քաղաքականությունները կարգավորում զեղծարարության առաջացման վտանգները:

Հ. 17.1.6 Ինչպե՞ս են փոփոխությունների իրականացման և նախագծերի կառավարման ՖՇԵ-ի քաղաքականությունները և գործընթացները մեղմացնում փոփոխությունների և հիմնական նախագծերի (պրոյեկտների) հետ կապված ռիսկերի հնարավոր ազդեցությունը համակարգի սահուն գործունեության վրա:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ի Տնօրենների խորհուրդը պետք է հստակ սահմանի գործառնական ռիսկի կառավարման իրավասություններն ու պարասխանավորությունը և հաստատվող գործառնական ռիսկերի կառավարման իր համակարգը: Համակարգերը, գործունեության սկզբունքները, գործընթացները և հսկողական մեխանիզմները պետք է պարբերաբար և հարկապես նշանակալի փոփոխությունների դեպքում վերանայվեն, անցնեն համապատասխան աուդիտ և թեսթավորվեն:

Իրավասությունները, պարսխանավորությունները և մոդելը

Հ. 17.2.1 Ինչպե՞ս է Տնօրենների խորհուրդը սահմանել գործառնական ռիսկերի կառավարման առանցքային իրավասություններն ու պարտավորությունները:

Հ. 17.2.2 Ուղղակիորեն և մանրակրկիտ վերանայում և հաստատում է արդյոք ՖՇԵ-ն գործառնական ռիսկերի կառավարման իր համակարգը: Ի՞նչ հաճախականությամբ է խորհուրդը վերանայում և հաստատում գործառնական ռիսկերի կառավարման իր համակարգը:

Վերանայում, աուդիտ և թեսթավորում

Հ. 17.2.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն վերանայում, աուդիտ իրականացնում և թեսթավորում իր համակարգերը, գործունեության սկզբունքները, գործընթացները և հսկողական մեխանիզմները, այդ թվում՝ գործառնական ռիսկերի կառավարման մեխանիզմները իր մասնակիցների հետ: Որքա՞ն հաճախ է ՖՇԵ-ն իրականացնում այդ վերանայման, աուդիտի և թեսթավորման աշխատանքներն իր մասնակիցների հետ:

Հ. 17.2.4 Ի՞նչ չափով է գործառնական ռիսկերի կառավարման ՖՇԵ-ի համակարգը անհրաժեշտության դեպքում ենթակա արտաքին աուդիտի:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է ունենա գործառնական հուսալիության հստակ սահմանված նպատակներ և համապատասխան մեխանիզմներ՝ այդ նպատակներին հասնելու համար:

Հ. 17.3.1 Որո՞նք են գործառնական հուսալիության ՖՇԵ-ի՝ ինչպես որակական, այնպես նաև քանակական նպատակները: Որտե՞ղ և ինչպե՞ս են դրանք փաստաթղթավորված:

Հ. 17.3.2 Ինչպե՞ս են այդ նպատակները երաշխավորում բարձր մակարդակի գործառնական հուսալիություն:

Հ. 17.3.3 ՖՇԵ-ի կողմից իր առջև դրված գործառնական հուսալիության նպատակներին հասնելու համար ի՞նչ սկզբունքներ են գործում, որոնք հնարավորություն են տալիս ՖՇԵ-ին համապատասխան անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է երաշխավորի, որ նրա թողունակության մակարդակը ունի ընդլայնման (ավելցուկային) կարողություններ, որոնք հնարավորություն կտան կատարել վճարումները սթրեսային անսպասելի աճի դեպքում և ապահովել սահմանված սպասարկման մակարդակը:

Հ. 17.4.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն վերանայում, աուդիտ իրականացնում և թեստավորում թողունակության մակարդակի բավարար լինելը և ընդլայնման (ավելցուկային) կարողությունները, որպեսզի հնարավոր լինի կատարել առնվազն կանխատեսված սթրեսային ծավալները:

Հ. 17.4.2 Ինչպե՞ս են կարգավորվում այն իրավիճակները, երբ թողունակությունը մոտենում է կամ գերազանցում է սահմանված մակարդակը:

Առանցքային դրույթ 5. ՖՇԵ-ն պետք է ունենա ֆիզիկական և տեղեկատվական անվտանգության բազմակողմանի քաղաքականություն, որն ուղղված է կարգավորելու համակարգի հավանական բացերը, թույլ տեղերը և ռիսկերը:

Ֆիզիկական անվտանգություն

Հ. 17.5.1 Ի՞նչ քաղաքականություն և գործընթացներ (այդ թվում՝ փոփոխությունների և պրոյեկտների կառավարման վերաբերյալ) ունի ՖՇԵ-ն սահմանած՝ համակարգի ֆիզիկական բացերի, թույլ տեղերի և ռիսկերի հնարավոր աղբյուրների ընթացիկ կառավարման համար:

Հ. 17.5.2 Պատշաճ ձևով հաշվի առնու՞մ են արդյոք ՖՇԵ-ի քաղաքականությունը, գործընթացները, հսկողական մեխանիզմները և թեստավորումը ֆիզիկական անվտանգությանն առնչվող համապատասխան միջազգային, ազգային և ոլորտին առնչվող ստանդարտները:

Տեղեկատվական անվտանգություն

Հ. 17.5.3 Ի՞նչ քաղաքականություն և գործընթացներ (այդ թվում՝ փոփոխությունների և պրոյեկտների կառավարման վերաբերյալ) ունի ՖՇԵ-ն սահմանած՝ համակարգի տեղեկատվական անվտանգության բացերի, թույլ տեղերի և ռիսկերի հնարավոր աղբյուրների ընթացիկ կառավարման համար:

Հ. 17.5.4 Պատշաճ ձևով հաշվի առնու՞մ են արդյոք ՖՇԵ-ի քաղաքականությունը, գործընթացները, հսկողական մեխանիզմները և թեսթավորումը տեղեկատվական անվտանգությանն առնչվող համապատասխան միջազգային, ազգային և ոլորտին առնչվող ստանդարտները:

Առանցքային դրույթ 6. ՖՇԵ-ն պետք է ունենա գործարար անընդհատության ծրագիր՝ գործառնությունների խափանման էական ռիսկեր առաջացնող իրավիճակների, ներառյալ՝ լայնածավալ և առանցքային խափանումներ առաջացնող դեպքերի կարգավորման համար: Ծրագիրը պետք է ներառի պահուստային կենտրոնի առկայությունը և երաշխավորի, որ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) առանցքային համակարգերը կարող են վերականգնել գործառնությունները խափանմանը հաջորդող երկու ժամվա ընթացքում: Ծրագիրը պետք է կազմված լինի այնպես, որ հնարավորություն տա ՖՇԵ-ին կարարելու վերջնահաշվարկները մինչև խափանման օրվա ավարտը, նույնիսկ ծայրահեղ իրավիճակների դեպքում: ՖՇԵ-ն պետք է մշտապես թեսթավորի այդ մեխանիզմները/գործընթացները:

Գործարար անընդհատության ծրագրի նպատակները

Հ. 17.6.1 Ինչպե՞ս և ի՞նչ չափով է գործարար անընդհատության ծրագիրն արտացոլում լայնամասշտաբ և հիմնական խափանումների դեպքում կրիտիկական գործառնությունների արագ վերականգնման և ժամանակին կատարման ՖՇԵ-ի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Գործարար անընդհատության ծրագրի կառուցվածքը

Հ. 17.6.2 Ինչպե՞ս է կազմված և ի՞նչ չափով է գործարար անընդհատության ծրագիրը հնարավորություն տալիս առանցքային/կրիտիկական SS համակարգերին վերականգնել գործունեությունը՝ խափանմանը հաջորդող երկու ժամվա ընթացքում, ինչպես նաև կատարելու հաշվարկները կամ ավարտի հասցնելու վերջնահաշվարկը մինչև այդ օրվա ավարտը՝ նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում:

Հ. 17.6.3 Ի՞նչ ձևով է անկանխատեսելի իրավիճակներում գործողությունների ծրագիրն (contingency plan) անհրաժեշտ ժամկետներում ապահովում խափանման պահի դրությամբ բոլոր գործառնությունների կարգավիճակների բացահայտումը, և եթե առկա է տվյալների կորստի հավանականություն, ապա ի՞նչ գործընթացներ են նախատեսված այդ կորուստների հաղթահարման համար (օրինակ՝ մասնակիցների կամ երրորդ կողմ հանդիսացող կառույցների հետ ճշգրտումների հնարավորություն):

Հ. 17.6.4 Ինչպե՞ս են ճգնաժամի կառավարման ՖՇԵ-ի գործընթացները հաշվի առնում կազմակերպության ներսում և հիմնական շահագրգիռ կողմ հանդիսացող արտաքին սուբյեկտների ու իրավասու մարմինների հետ արդյունավետ հաղորդակցման անհրաժեշտությունը:

Պահուստային կենտրոն (secondary site)

Հ. 17.6.5 Ինչպե՞ս է ՖՇԵ-ի գործարար անընդհատության ծրագիրը ներառում պահուստային կենտրոնի առկայությունը (այդ թվում՝ երաշխավորելով, որ պահուստային կենտրոնն ունի բավարար ռեսուրսներ, հզորություններ, ֆունկցիոնալ հնարավորություններ և համապատասխան

անձնակազմ): Որքանով է պահուստային կոնտրոնը տեղակայված բավարար հեռավորության վրա հիմնական գործառնական կենտրոնից, որպեսզի ռիսկի բնույթը լինի տարբեր:

Հ. 17.6.6 Դիտարկել է արդյոք ՖՇԵ-ն այլընտրանքային մեխանիզմներ (օրինակ՝ ձեռքի մուտքի/ մշակման, թղթային կամ այլ գործընթացներ)՝ ծայրահեղ իրավիճակներում ժամանակային առումով հրատապ/կրիտիկական հանդիսացող վճարումների իրականացման համար:

Վերանայում և թեսթավորում

Հ. 17.6.7 Ինչպե՞ս են վերանայվում և թեսթավորվում ՖՇԵ-ի գործարար անընդհատության և անկանխատեսելի իրավիճակների կառավարման ծրագրերը, ներառյալ՝ լայնածավալ և էական խափանումներին առնչվող սցենարները: Ի՞նչ հաճախականությամբ են այդ գործընթացները վերանայվում և թեսթավորվում:

Հ. 17.6.8 Որքանով են ՖՇԵ-ի գործարար անընդհատության և անկանխատեսելի իրավիճակների կառավարման ծրագրերի վերանայման և թեսթավորման գործընթացները ներառում ՖՇԵ-ի մասնակիցներին, առանցքային ծառայություն մատուցողներին (critical service providers) և առկայության դեպքում՝ հարակից ՖՇԵ-ներին: Ի՞նչ պարբերականությամբ են վերջիններս ընդգրկվում վերանայման և թեսթավորման գործընթացներում:

Առանցքային դրույթ 7. ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի բոլոր այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ իր առանցքային մասնակիցների, այլ ՖՇԵ-ների, ծառայություն մատուցողների ու կոմունալ ծառայություններ տրամադրողների գործունեության արդյունքում: Բացի այդ, ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի նաև այն ռիսկերը, որոնք նա իր գործունեությամբ կարող է առաջացնել այլ ՖՇԵ-ների համար:

ՖՇԵ-ի սեփական գործառնություններին առնչվող ռիսկեր

Հ. 17.7.1 Իր գործունեության վրա ազդող ի՞նչ ռիսկեր է բացահայտել ՖՇԵ-ն, որոնք կարող են առաջանալ իր առանցքային մասնակիցներից, այլ ՖՇԵ-ներից, ծառայություն մատուցողներից ու կոմունալ ծառայություններ տրամադրողներից:

Հ. 17.7.2 Եթե ՖՇԵ-ն պատվիրակում է (outsource) իր գործունեության համար կարևոր/ առանցքային ծառայությունները, ապա ինչպե՞ս և որքանով է ՖՇԵ-ն երաշխավորում, որ այդ ծառայություն մատուցողը բավարարում է հուսալիության և անընդհատության այն պահանջներին, որոնց ՖՇԵ-ն պետք է բավարարեր, եթե ինքը մատուցեր այդ ծառայությունները:

Այլ ՖՇԵ-ներին առնչվող ռիսկեր

Հ. 17.7.3 Ինչպե՞ս և ի՞նչ չափով է ՖՇԵ-ն բացահայտում, հսկում և կառավարում նաև այն ռիսկերը, որոնք նա կարող է առաջացնել այլ ՖՇԵ-ների համար:

Հ. 17.7.4 Ի՞նչ չափով է ՖՇԵ-ն կորդինացնում իր գործարար անընդհատության մեխանիզմները այլ փոխկապակցված ՖՇԵ-ների համապատասխան մեխանիզմների հետ:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 18. Միանալու և մասնակցության պահանջներ

ՖՇԵ-ն պետք է ունենա մասնակցության՝ օբյեկտիվ, ռիսկերի վրա հիմնված, հրապարակային չափանիշներ, որոնք ապահովում են բաց և արդար մուտքը (access) համակարգ/ ՖՇԵ:

Այս սկզբունքը դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ ՖՇԵ-ները ենթակա են այն իրավագործությունների ներքո գործող տեղական օրենքներին և սահմանափակումներին, որտեղ նրանք իրականացնում են իրենց գործունեությունը: Այդ օրենսդրությունը կարող է արգելել կամ պահանջել որոշակի տեսակի ֆինանսական կազմակերպությունների ընդգրկումը համակարգում: Այս սկզբունքը պետք է դիտարկվի մասնակցության բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ Սկզբունք 19-ի, էֆեկտիվության ու արդյունավետության վերաբերյալ Սկզբունք 21-ի, հաղորդակցման ընթացակարգին ու ստանդարտներին առնչվող Սկզբունք 22-ի, և անհրաժեշտության դեպքում նաև այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է իր ծառայություններից օգտվելու համար բաց և արդար մասնակցության հնարավորություն ընձեռի՝ ռիսկերի վրա հիմնված մասնակցության խելամիտ պահանջների շրջանակներում, այդ թվում՝ ներգրավելով ուղղակի կամ անհրաժեշտության դեպքում անուղղակի մասնակիցների և այլ ՖՇԵ-ների:

Մասնակցության չափանիշներ և պահանջներ

Հ. 18.1.1 Որո՞նք են ՖՇԵ-ի մասնակցության չափանիշներն ու պահանջները (օրինակ՝ գործառնական, ֆինանսական և իրավական պահանջները):

Հ. 18.1.2 Ինչպե՞ս են այդ չափանիշներն ու պահանջներն ապահովում ՖՇԵ-ի ծառայություններից օգտվելու համար բաց և արդար մասնակցությունը, ներառյալ՝ ուղղակի կամ անհրաժեշտության դեպքում անուղղակի մասնակիցների և այլ ՖՇԵ-ների ներգրավումը՝ ռիսկերի վրա հիմնված մասնակցության խելամիտ պահանջների շրջանակներում:

Մասնակցություն Առևտրի ռեպոզիտարիաներում

Հ. 18.1.3 Առևտրի ռեպոզիտարիայի դեպքում, ինչպե՞ս են վերջինիս ծառայություններից օգտվելու համար սահմանված մասնակցության պայմանները հնարավորություն տալիս երաշխավորելու, որ մրցակցությունն ու նորարարությունն իր հաշվարկա-քլիրինգային գործառնություններում չեն խոչընդոտվում: Ինչպե՞ս են մշակված այդ պահանջները՝ այլ ՖՇԵ-ների ու ծառայություն մատուցողների հետ համատեղելիությունն ապահովելու համար, եթե այդպիսիք առկա են:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ին մասնակցության պահանջները պետք է լինեն ՖՇԵ-ի և իր գործունեության շուկաների արդյունավետության և անվտանգության փեսանկյունից հիմնավորված, հաշվի առնեն և համադրելի լինեն ՖՇԵ-ին բնորոշ/առանձնահատուկ ռիսկերի հետ և լինեն հրապարակայնորեն բացահայտված: Եթե ՖՇԵ-ն ապահովում է ռիսկերի կառավարման ընդունելի ստանդարտներին համապատասխանությունը, ապա այն պետք է ձգտի սահմանել

պահանջներ, որոնք նվազագույն չափով են սահմանափակում մասնակցությունը (մասնակցության պարզեցված տարբերակ)՝ որքանով թույլատրելի է գործող իրավիճակների համար:

Մասնակցության չափանիշների ռացիոնալ հիմքերն ու հիմնավորումը

Հ. 18.2.1 Ինչպե՞ս են ՖՇԵ-ին մասնակցության պահանջներն արդյունավետության և անվտանգության տեսանկյունից հիմնավորված, և որքանով են հաշվի առնում ու համադրելի ՖՇԵ-ին բնորոշ/առանձնահատուկ ռիսկերի տեսանկյունից:

Հ. 18.2.2 Սահմանվա՞ծ են արդյոք մասնակցության պահանջներ, որոնք հիմնված չեն ռիսկերի վրա, սակայն պահանջվում են համապատասխան օրենքներով կամ կանոնակարգերով: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:

Հ. 18.2.3 Մասնակիցների տարբեր խմբերի հիմար սահմանված են մասնակցության/ միանալու միևնու՞յն, թե՞ տարբեր չափանիշներ: Եթե չափանիշները տարբեր են, ապա ի՞նչն է ընկած այդ տարբերության հիմքում (օրինակ՝ գործունեության տեսակն ու ծավալները/մեծությունը, լրացուցիչ պահանջներ այն մասնակիցների համար, ովքեր հանդես են գալիս երրորդ կողմի անունից, կամ լրացուցիչ պահանջներ այն մասնակիցների համար, որոնց գործունեությունը չի կարգավորվում):

Պարզեցված մասնակցություն

Հ. 18.2.4 Ինչպե՞ս են վերանայվում մասնակցության սահմանափակումներն ու պահանջները՝ մասնակցության պարզեցված տարբերակ ապահովելու համար՝ այն չափով, որքանով թույլատրելի է տվյալ իրավիճակների համար և չի հակասում ռիսկերի կառավարման/հսկողության ընդունելի մեթոդներին: Որքա՞ն հաճախ են իրականացվում այդ վերանայման գործընթացները:

Չափանիշի հրապարակայնություն

Հ. 18.2.5 Ինչպե՞ս է ապահովվում մասնակցության չափանիշների, այդ թվում՝ մասնակցության սահմանափակումների հրապարակայնությունը: Որտե՞ղ են դրանք արտացոլված:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է ապահովի մասնակցության պահանջներին իր մասնակիցների համապատասխանության ընթացիկ հսկողություն/մոնիթորինգ և ունենա հստակ սահմանված ու հրապարակային գործընթացներ մասնակցության կասեցման և սահմանված կարգով համակարգում գործունեության դադարեցման համար, եթե մասնակիցը խախտել է կամ այլևս չի համապատասխանում մասնակցության պահանջներին:

Համապատասխանության դիտարկում/մոնիթորինգ

Հ. 18.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում մասնակցության պահանջներին իր մասնակիցների համապատասխանության ընթացիկ հսկողությունը/մոնիթորինգը: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ համապատասխանության այդ ընթացիկ հսկողության համար կիրառվող իր տեղեկատվությունը ճշգրիտ է և ժամանակին առումով տեղին:

Հ. 18.3.2 Ինչպիսի՞ քաղաքականություն է կիրառում ՖՇԵ-ն՝ ընդլայնված հսկողություն իրականացնելու կամ լրացուցիչ հսկողական մեխանիզմներ կիրառելու համար, այն մասնակիցների նկատմամբ, որոնց ռիսկի մակարդակը վատթարանում է:

Կասեցում և սահմանված կարգով մասնակցության դադարեցում

Հ. 18.3.3 Կառավարման ինչպիսի՞ գործընթացներ ունի ՖՇԵ-ն սահմանած՝ մասնակցության կասեցման և սահմանված կարգով համակարգում գործունեության դադարեցման համար, եթե մասնակիցը խախտել է կամ այլևս չի համապատասխանում մասնակցության պահանջներին:

Հ. 18.3.4 Ինչպե՞ս է ապահովվում մասնակցության կասեցման և սահմանված կարգով համակարգում գործունեության դադարեցման համար ՖՇԵ-ի սահմանած գործընթացների հրապարակայնությունը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√	√	√	√	√

Սկզբունք 19. Մասնակցության բազմամակարդակ կառուցվածք

ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի բազմամակարդակ մասնակցությունից առաջացող նշանակալի/շոշափելի ռիսկերը:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի առանձնացմանն ու տեղափոխելիությանն առնչվող Սկզբունք 14-ի, միանալու և մասնակցության չափանիշներին առնչվող Սկզբունք 18-ի ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է երաշխավորի, որ իր կանոնները, ընթացակարգերն ու արարողակարգերը հնարավորություն են տալիս ստանալու ընդհանուր տեղեկատվություն անուղղակի մասնակցության վերաբերյալ, որպեսզի բացահայտի, հսկի և կառավարի նշանակալի ռիսկերը, որոնք կարող են առաջանալ նման բազմամակարդակ մասնակցության կառուցվածքից:

Մասնակցության բազմամակարդակ կառուցվածք

Հ. 19.1.1 Ունի՞ արդյոք ՖՇԵ-ն մասնակցության բազմամակարդակ կառուցվածք (անուղղակի մասնակիցների առկայություն): Եթե այո, ապա նկարագրեք այդ կառուցվածքը, արարողակարգերը, փոխհարաբերություններն ու մեխանիզմները:

Հ. 19.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ստանում հիմնական տեղեկատվություն այդ անուղղակի մասնակցության վերաբերյալ: Ի՞նչ տեղեկատվություն է հավաքագրվում և ի՞նչ հաճախականությամբ է այն թարմացվում:

ՖՇԵ-ի ռիսկերը

Հ. 19.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում այդ մասնակցության հետ կապված իր ռիսկերը:

Հ. 19.1.4 ՖՇԵ-ի կողմից ի՞նչ էական ռիսկեր են բացահայտվել բազմամակարդակ այդ մասնակցությունից: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն հաղթահարել այդ ռիսկերը:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է բացահայտի ուղղակի և անուղղակի մասնակիցների միջև էական փոխկախվածությունները, որոնք կարող են անդրադառնալ ՖՇԵ-ի գործունեության վրա:

Հ. 19.2.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն բացահայտում ուղղակի և անուղղակի մասնակիցների միջև էական փոխկախվածությունները, որոնք կարող են անդրադառնալ ՖՇԵ-ի գործունեության վրա:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է բացահայտի այն անուղղակի մասնակիցներին, որոնց գործառնությունները նշանակալի մասնաբաժին են կազմում ՖՇԵ-ի գործառնություններում, ինչպես նաև այն անուղղակի մասնակիցներին, որոնց գործառնությունների ծավալը կամ

քանակը մեծ տեսակարար կշիռ է կազմում այն ուղղակի մասնակցի գործառնություններում, որի միջոցով տվյալ անուղղակի մասնակիցը միացած է ՖՇԵ-ին: Վերջինս անհրաժեշտ է, որպեսզի ՖՇԵ-ն կարողանա կառավարել այդ գործառնություններից առաջացող ռիսկերը:

Հ. 19.3.1 Բաացահայտե՞լ է արդյոք ՖՇԵ-ն. ա) յուրաքանչյուր ուղղակի մասնակցի կողմից վերջինիս անուղղակի մասնակիցների անունից իրականացվող գործառնությունների մասնաբաժինը տվյալ ուղղակի մասնակիցների գործառնություններում, բ) այն ուղղակի մասնակիցներին, որոնք գործունեություն են ծավալում նշանակալի թվով անուղղակի մասնակիցների համար, գ) այն անուղղակի մասնակիցներին, որոնք պատասխանատու են համակարգի ընդհանուր ծավալում նշանակալի մասնաբաժնի ապահովման համար, դ) այն անուղղակի մասնակիցներին, որոնց գործառնությունների ծավալն ու քանակը մեծ է՝ համեմատած այն ուղղակի մասնակցի կարողություններից, որի միջոցով այն միանում է ՖՇԵ-ին, որպեսզի այն կարողանա կառավարել այդ գործառնություններից առաջացող իր ռիսկերը:

Հ. 19.3.2 Ի՞նչ ռիսկեր են ՖՇԵ-ի մոտ առաջանում նշանակալի անուղղակի մասնակիցներից և ինչպե՞ս է այն դրանք կառավարում:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է պարբերաբար վերանայի այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ մասնակցության բազմամակարդակ կառուցվածքից, և անհրաժեշտության դեպքում իրականացնի դրանց նվազեցմանն ուղղված համապատասխան միջոցառումներ:

Հ. 19.4.1 Ի՞նչ քաղաքականություն ունի ՖՇԵ-ն իր կանոնների ու ընթացակարգերի վերանայման հետ կապված, որպեսզի նվազեցնի մասնակցության բազմամակարդակ կառուցվածքից առաջացող հնարավոր ռիսկերը: Ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում այդ վերանայումները:

Հ. 19.4.2 Ի՞նչ չափանիշների հիման վրա է ՖՇԵ-ն որոշում, թե երբ պետք է իրականացվեն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն դիտարկում/հսկում և նվազեցնում իր այդ ռիսկերը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
	✓	✓	✓	✓

Սկզբունք 20. ՖՇԵ կապեր

ՖՇԵ-ն, որի գործունեությունը փոխկապակցված է մեկ կամ մի քանի այլ ՖՇԵ-ների հետ, պետք է ապահովի այդ համագործակցության (կապերի) հետ կապված ռիսկերի բացահայտումը, հսկողությունն ու կառավարումը:

Այս սկզբունքը դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ այն տարածվում է միայն այն ՖՇԵ-ների վրա, որոնք համագործակցության կապեր են հաստատել մեկ կամ մի քանի այլ ՖՇԵ-ների հետ: Ավելին, Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաների (ԱԿԴ) դեպքում, այս սկզբունքը վերաբերում է միայն այն ԱԿԴ-ներին, որոնք հանդես են գալիս նաև որպես Արժեթղթերի հաշվարկային համակարգի (ԱՀՀ) օպերատոր: Նման մասնավորեցումն արտացոլում է տվյալ սկզբունքի քննարկումների արդյունքում տրված շուկայի արձագանքը: Տվյալ սկզբունքը պետք է դիտարկվի հաշվարկների վերջնականությանն առնչվող Սկզբունք 8-ի, Արժեթղթերի կենտրոնական դեպոզիտարիաների վերաբերյալ Սկզբունք 11-ի, ինչպես նաև գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
		✓	✓	✓	✓

Առանցքային դրույթ 1. Նախքան այլ ՖՇԵ-ի հետ կապ հաստատելը, ինչպես նաև հեղափոխում մշակված հիմունքների վրա՝ ՖՇԵ-ն պետք է բացահայտի, հսկի և կառավարի այդ համագործակցությունից առաջացող ռիսկերի բոլոր հնարավոր աղբյուրները: Համագործակցության (կապերի) այդ մեխանիզմները պետք է կառուցված լինեն այնպես, որ այդ ՖՇԵ-ներից յուրաքանչյուրը կարողանա համապատասխանել սույն փաստաթղթով սահմանված մնացած այլ Սկզբունքներին:

Հ. 20.1.1 Ի՞նչ գործընթաց է կիրառվում նախատեսված համագործակցության (կապերի) արդյունքում առաջացող ռիսկերի (ինչպիսին են իրավական, վարկային, իրացվելիության, պահառուական և գործառնական) հավանական աղբյուրների բացահայտման համար: Ինչպե՞ս է դա անդրադարձել ՖՇԵ-ի որոշման վրա համագործակցական կապեր հաստատել այդ ՖՇԵ-ի հետ:

Հ. 20.1.2 Համագործակցության ի՞նչ կապեր են հաստատվել այլ ՖՇԵ-ների հետ: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն իրականացնում այլ ՖՇԵ-ների հետ հաստատած կապերից առաջացող հնարավոր ռիսկերի բացահայտման, մոնիթորինգի ու կառավարման իր ընթացիկ աշխատանքները:

Հ. 20.1.3 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր հաստատած կապերը այլ ՖՇԵ-ների հետ կառուցված են այնպես, որ հնարավոր է համապատասխանել սույն փաստաթղթով սահմանված այլ Սկզբունքների պահանջներին: Ի՞նչ հաճախականությամբ են իրականացվում այդ վերլուծությունները:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ √	ԳԳ √	ԱՌ √
---	----	----------	----------	---------	---------

Առանցքային դրույթ 2. Համագործակցության այդ կապը պետք է ունենա լավ հիմնավորված իրավական հիմքեր բոլոր համապատասխան իրավագործությունների ներքո՝ համապատասխանելով իր կառուցվածքին և ապահովելով բավարար պաշտպանություն այլ փոխկապակցված ՖՇԵ-ների համար:

Հ. 20.2.1 Ո՞ր իրավագործությունների ներքո է կապեր հաստատել ՖՇԵ-ն: Ի՞նչ իրավական հիմքեր կան հաստատված կապերի ամրապնդման/աջակցության համար:

Հ. 20.2.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն երաշխավորում, որ իր հաստատած կապերը այլ ՖՇԵ-ների հետ ունեն լավ հիմնավորված իրավական հիմքեր բոլոր համապատասխան իրավագործությունների ներքո՝ համապատասխանելով իր կառուցվածքին և ապահովելով բավարար պաշտպանություն: Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ապահովում այդ պաշտպանությունը անընդհատության հիմունքներով:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ √	ԳԳ	ԱՌ
---	----	----------	----------	----	----

Առանցքային դրույթ 3. Փոխկապակցված ԱԿԴ-ները պետք է գնահատեն, հսկեն և կառավարեն փոխհամագործակցության արդյունքում բխող վարկային և իրացվելիության ռիսկերը: Միմյանց տրամադրվող վարկերը պետք է ամբողջությամբ ապահովված լինեն բարձրորակ ապահովվածության միջոցներով և ենթարկվեն որոշակի սահմանաչափերի:

Հ. 20.3.1 Ի՞նչ գործընթացներ են մշակված միմյանց հետ համագործակցության արդյունքում առաջացող հնարավոր վարկային և իրացվելիության ռիսկերի գնահատման, մոնիթորինգի և կառավարման համար:

Հ. 20.3.2 Եթե ԱԿԴ-ն վարկ է տրամադրում փոխկապակցված ԱԿԴ-ին, ապա ի՞նչ գործընթացներ են սահմանված երաշխավորելու, որ տրամադրված վարկերն ամբողջությամբ ապահովված են բարձրորակ ապահովվածության միջոցներով, և պահպանվում են վարկային սահմանաչափերը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ √	ԳԳ	ԱՌ
---	----	----------	----------	----	----

Առանցքային դրույթ 4. Փոխկապակցված ԱԿԴ-ների միջև արժեթղթերի նախնական/ պայմանական (մինչև վերջնահաշվարկի պահը) փոխանցումները պետք է բացառվեն, կամ առնվազն պետք է արգելվի նման ձևով սրացված արժեթղթերի հետագա փոխանցումը (հաջորդական կիրառումը)՝ մինչև առաջին փոխանցման վերջնական դառնալը:

Հ. 20.4.1 Թույլատրվո՞ւմ են արդյոք արժեթղթերի նախնական/ պայմանական (մինչև վերջնահաշվարկի պահը) փոխանցումներ, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ գործընթացների համար են այդ պայմանական փոխանցումներն անհրաժեշտ, և արգելվա՞ծ է արդյոք այդ արժեթղթերի հետագա փոխանցումը՝ նախքան այդ փոխանցման վերջնականության պահը:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ √	ԳԳ	ԱՌ
---	----	----------	----------	----	----

Առանցքային դրույթ 5. Ներդրող ԱԿԴ-ն պետք է կապեր հաստատի թողարկող ԱԿԴ-ի հետ միայն այն դեպքում, երբ նման պայմանավորվածությունը ենթադրում է ներդրող ԱԿԴ-ի մասնակիցների իրավունքների բարձր մակարդակի պաշտպանություն:

Հ. 20.5.1 Համագործակցության ցանկացած կապերի հաստատման ժամանակ ինչպե՞ս է ներդրող ԱԿԴ-ն գնահատում, որ իր մասնակիցների իրավունքներն ունեն բարձր մակարդակի պաշտպանվածություն:

Հ. 20.5.2 Ի՞նչ հաճախականությամբ է իրականացվում ակտիվների համադրում/ստուգում այն կազմակերպությունների գծով, որոնց արժեթղթերը գտնվում են դեպոզիտարիայի պահառության ներքո:

Հ. 20.5.3 Ինչպե՞ս է ներդրող ԱԿԴ-ն ապահովում իր մասնակիցների իրավունքների բարձր մակարդակի պաշտպանությունը (ներառյալ՝ առանձնացման և տեղափոխելիության մեխանիզմները և «օմնիբուս հաշիվների» ակտիվների պաշտպանության պայմանները):

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ √	ԱՀՀ √	ԳԳ	ԱՌ
---	----	----------	----------	----	----

Առանցքային դրույթ 6. Ներդրող ԱԿԴ-ն, որը թողարկող ԱԿԴ-ի հետ կապ հաստատելու (համապետ գործունեություն իրականացնելու) համար օգտվում է միջնորդի ծառայություններից, պետք է գնահատի, հսկի և կառավարի լրացուցիչ այն ռիսկերը (ներառյալ պահառության, վարկային, իրավական և գործառնական ռիսկերը), որոնք առաջանում են այդ միջնորդի ծառայություններից օգտվելու արդյունքում:

Հ. 20.6.1 Եթե ԱԿԴ-ն օգտվում է միջնորդի ծառայություններից այլ ԱԿԴ-ի հետ համատեղ գործունեության իրականացման համար, ապա ի՞նչ չափանիշ է այն կիրառում այդ միջնորդին կամ միջնորդներին ընտրելու համար: Արդյո՞ք այդ չափանիշները հիմնված են ռիսկերի գնահատման վրա, թե՞ ոչ:

Հ. 20.6.2 Ի՞նչ համապատասխան պարտավորություններ ունեն փոխկապակցված ԱԿԴ-ները և միջնորդները:

Հ. 20.6.3 Ի՞նչ գործընթացներ են սահմանված միջնորդության հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը գնահատելու, հսկելու և կառավարելու համար:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ √	ԱՌ
---	----	-----	-----	---------	----

Առանցքային դրույթ 7. Նախքան այլ Գլխավոր գործընկերոջ հետ փոխգործունեության կապ հաստատելը՝ ԳԳ-ն պետք է բացահայտի և կառավարի փոխկապակցված ԳԳ-ի դեֆոլտի դեպքում հնարավոր ազդեցության հետևանքները: Եթե համապետ գործունեություն են իրականաց-

նում երեք կամ ավելի ԳԳ-ներ, ապա յուրաքանչյուր ԳԳ պետք է բացահայտի, գնահատի և կառավարի համարել գործունեության արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերը:

Փոխկապակցված ԳԳ-ի դեֆոլտ

Հ. 20.7.1 Նախքան համատեղ գործունեության կապ հաստատելը, ի՞նչ վերլուծություններ են իրականացվել ԳԳ-ի կողմից՝ փոխկապակցված ԳԳ-ի դեֆոլտի դեպքում հնարավոր ազդեցությունների բացահայտման և գնահատման համար:

Հ. 20.7.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն իրականացնում իր կողմից բացահայտված հնարավոր հետևանքների կառավարումը իր փոխկապակցված ԳԳ-ի դեֆոլտի դեպքում:

Խմբային կապերի կառուցվածքը (երեք և ավելի ԳԳ)

Հ. 20.7.3 Նախքան համատեղ գործունեության կապ հաստատելը, ի՞նչ վերլուծություններ են իրականացվել ԳԳ-ի կողմից՝ երեք և ավելի ԳԳ-ների հետ համագործակցության արդյունքում հնարավոր ազդեցությունների բացահայտման և գնահատման համար:

Հ. 20.7.4 Խմբային համագործակցային կապերի դեպքում ի՞նչ գործընթացներ են սահմանված ԳԳ-ի կողմից այդ խմբային համագործակցության մեխանիզմից առաջացող հնարավոր ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման համար: ԳԳ-ների փոխգործունեության դեպքում, հստակ սահմանված են արդյոք տարբեր ԳԳ-ների համապատասխան իրավասություններն ու պարտավորությունները:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
				√	

Առանցքային դրույթ 8. ԳԳ-ների համագործակցության ներքո յուրաքանչյուր ԳԳ պետք է կարողանա, առնվազն օրական մակարդակով, ամբողջությամբ և անհերքելիորեն ծածկել փոխկապակցված ԳԳ-ներից և նրանց մասնակիցներից առաջացող ներկա և հնարավոր ապագա ռիսկերը՝ առանց նվազեցնելու սեփական մասնակիցների նկատմամբ ցանկացած պահի դրույթամբ իր պարտավորությունները կատարելու կարողությունները:

Ռիսկերը և ծածկույթը

Հ. 20.8.1 Ի՞նչ գործընթացներ են առկա ԳԳ-ների միջև փոխադարձ հնարավոր ռիսկերը գնահատելու, հսկելու և կառավարելու համար:

Հ. 20.8.2 Ինչպե՞ս է ԳԳ-ն երաշխավորում, որ այն կարող է մշտապես ամբողջությամբ ծածկել իր ընթացիկ ռիսկերը:

Հ. 20.8.3 Ինչպե՞ս է ԳԳ-ն երաշխավորում, որ այն միանշանակորեն և վստահորեն ծածկում է իր հնարավոր ապագա ռիսկերը՝ առանց սեփական պարտավորությունները կատարելու իր կարողությունների վրա բացասական ազդեցության:

Ռիսկերի կառավարումը

Հ. 20.8.4 Ի՞նչ մեխանիզմներ ունեն փոխկապակցված ԳԳ-ները՝ այդ համագործակցության արդյունքում առաջացող ռիսկերի կառավարման համար (ինչպիսին են, օրինակ, դեֆոլտի առանձին/ հատուկ ֆոնդ, մարժայի նկատմամբ ավելի մեծ պահանջներ կամ միմյանց դեֆոլտի ֆոնդերում մասնակցություններ ունենալը):

Հ. 20.8.5 Եթե ԳԳ-ները մասնակցություն են ունենում միմյանց դեֆոլտի ֆոնդերում, ապա ինչպե՞ս է երաշխավորվում, որ այդ մասնակցությունը չի անդրադառնում ցանկացած պահի դրությամբ սեփական մասնակիցների նկատմամբ իրենց պարտավորությունները կատարելու կարողությունների վրա:

Մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը

Հ. 20.8.6 Ինչպե՞ս են փոխկապակցված ԳԳ-ները երաշխավորում, որ մասնակիցները տեղեկացված են այդ համագործակցության արդյունքում հնարավոր չճածկված կորուստների բաշխման և անբավարար իրացվելիության հետ կապված իրենց ռիսկերի մասին:

Հետևյալ Առանցքային դրույթը վերաբերում է	ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ √
---	----	-----	-----	----	---------

Առանցքային դրույթ 9. Առևտրի ռեպոզիտարիան պետք է ուշադիր գնահատի իր փոխադարձ կապերին առնչվող լրացուցիչ գործառնական ռիսկերը՝ երաշխավորելով SS և աջակցող/ հարակից այլ ռեսուրսների հուսալիությունն ու կարողությունների ընդլայնման հնարավորությունները:

Հ. 20.9.1 Ինչպե՞ս է ԱՌ-ն ապահովում SS և այլ հարակից միջոցների հուսալիությունն ու կարողությունների ընդլայնման հնարավորությունները և հաշվի առնում ՖՇԵ-ների հետ փոխադարձ կապի արդյունքում առաջացող հավելյալ գործառնական ռիսկերը: Ի՞նչ հաճախականությամբ է ԱՌ-ն գնահատում հուսալիության ու կարողությունների ընդլայնման իր հնարավորությունների բավարար լինելը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
√	√	√	√	√

Սկզբունք 21. Էֆեկտիվություն և արդյունավետություն

ՖՇԵ-ն պետք է լինի էֆեկտիվ և արդյունավետ՝ իր մասնակիցների և իր կողմից սպասարկվող շուկաների պահանջները բավարարելու համար:

Տվյալ սկզբունքը պետք է դիտարկվի գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի, միանալու և մասնակցության չափանիշների մասին Սկզբունք 18-ի, հաղորդակցման ընթացակարգերին ու ստանդարտներին առնչվող Սկզբունք 22-ի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է կառուցված լինի այնպես, որ բավարարի իր մասնակիցների և իր կողմից սպասարկվող շուկաների պահանջներին/կարիքներին, մասնավորապես՝ քլիրինգի և վերջնահաշվարկի մեխանիզմի ընտրության, գործառնական կառուցվածքի, քլիրինգ, վերջնահաշվարկ կամ հաշվառում իրականացվող գործիքների շրջանակի և կիրառվող տեխնոլոգիաների ու գործընթացների հետ կապված:

Հ. 21.1.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում, թե արդյոք իր կառուցվածքը (ներառյալ քլիրինգի և վերջնահաշվարկի իր մեխանիզմները, գործառնական կառուցվածքը, առաքման համակարգը և տեխնոլոգիաները և իր գործիքներն ու ծառայությունները) հաշվի է առնում իր մասնակիցների ու իր կողմից սպասարկվող շուկաների կարիքները:

Հ. 21.1.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն գնահատում, թե արդյոք այն բավարարում է իր մասնակիցների և այլ օգտվողների պահանջներն ու կարիքները, և շարունակում է համապատասխանել այդ պահանջներին՝ դրանց փոփոխմանը զուգահեռ (օրինակ՝ արձագանքման մեխանիզմների և հետադարձ կապի կիրառման միջոցով):

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ սահմանված չափելի և իրարեսական նպատակներ ու խնդիրներ, որոնք առնչվում են, օրինակ, սպասարկման նվազագույն նպատակային մակարդակին, ռիսկերի կառավարմանը և գործարար առաջնահերթություններին:

Հ. 21.2.1 Իր գործունեության արդյունավետությանն առնչվող ի՞նչ նպատակներ և խնդիրներ է իր առջև դրել ՖՇԵ-ն:

Հ. 21.2.2 Ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն երաշխավորում, որ այն հստակ սահմանել է իր նպատակներն ու խնդիրները, որոնք իրատեսական են և չափելի:

Հ. 21.2.3 Ի՞նչ չափով են սահմանված նպատակներն ու խնդիրներն ապահովվել ՖՇԵ-ի կողմից, և ի՞նչ մեխանիզմներ ունի ՖՇԵ-ն դրա գնահատման համար:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է ունենա ներդրված մեխանիզմներ՝ իր էֆեկտիվությունն ու արդյունավետությունը մշտապես վերլուծելու և գնահատելու համար:

Հ. 21.3.1 Ի՞նչ գործընթացներ ու չափանիշներ է ՖՇԵ-ն կիրառում՝ իր արդյունավետությունն ու էֆեկտիվությունը գնահատելու համար:

Հ. 21.3.2 Ի՞նչ հաճախականությամբ է ՖՇԵ-ն գնահատում իր արդյունավետությունն ու էֆեկտիվությունը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 22. Հաղորդակցման ընթացակարգեր և ստանդարտներ

ՖՇԵ-ն պետք է կիրառի միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման ընթացակարգեր և ստանդարտներ, կամ առնվազն ապահովի դրանց հետ համադրելի մեխանիզմներ՝ վճարման, քլիրինգի, վերջնահաշվարկի և հաշվառման արդյունավետ իրականացումը խթանելու համար:

Տվյալ սկզբունքը պետք է դիտարկվի գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի, արդյունավետության ու էֆեկտիվության վերաբերյալ Սկզբունք 21-ի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է կիրառի միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման ընթացակարգեր և ստանդարտներ, կամ առնվազն ապահովի դրանց հետ համադրելի մեխանիզմներ:

Հաղորդակցման ընթացակարգեր

Հ. 22.1.1 Կիրառում է արդյոք ՖՇԵ-ն փոխանցումների իրականացման համար միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման ընթացակարգեր: Եթե այո, ապա որո՞նք են դրանք, եթե ոչ, ապա ինչպես է այն ապահովում իր փոխանցման մեխանիզմների համադրելիությունը միջազգայնորեն ընդունված հաղորդակցման միջոցներին:

Հ. 22.1.2 Եթե ՖՇԵ-ն իրականացնում է նաև միջազգային փոխանցումներ, ապա ինչպե՞ս են իր գործառնական ընթացակարգերն ու համակարգերն ապահովում այդ փոխանցումների իրականացումը միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման մեխանիզմների կիրառմամբ կամ առնվազն դրանց համադրելիությամբ:

Հաղորդակցման ստանդարտներ

Հ. 22.1.3 Կիրառում է արդյոք ՖՇԵ-ն միջազգայնորեն ճանաչված ստանդարտներ փոխանցումների իրականացման համար: Եթե այո, ապա որո՞նք են դրանք, եթե ոչ, ապա ինչպես է այն ապահովում իր փոխանցման մեխանիզմների համադրելիությունը միջազգայնորեն ընդունված հաղորդակցման ստանդարտներին:

Հ. 22.1.4 Եթե ՖՇԵ-ն իրականացնում է նաև միջազգային փոխանցումներ, ապա ինչպե՞ս են իր գործառնական ընթացակարգերն ու համակարգերն ապահովում այդ փոխանցումների իրականացումը միջազգայնորեն ճանաչված հաղորդակցման ստանդարտների կիրառմամբ կամ առնվազն դրանց համադրելիությամբ:

Հ. 22.1.5 Եթե միջազգային ստանդարտ չի կիրառվում, ապա ինչպե՞ս է ՖՇԵ-ն ապահովում ազգային համապատասխան ստանդարտներին համապատասխանող և իր համակարգում կիրառվող վճարային հաղորդագրությունների ֆորմատների և տեղեկատվության փոխարկումը միջազգայնորեն ընդունված ֆորմատներին կամ հակառակը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ
✓	✓	✓	✓	✓

Սկզբունք 23. Կանոնների, հիմնական ընթացակարգերի և շուկայական տվյալների բացահայտում

ՖՇԵ-ն պետք է ունենա հստակ և համապարփակ կանոններ ու ընթացակարգեր, ինչպես նաև պետք է տրամադրի բավարար տեղեկատվություն իր մասնակիցներին՝ վերջիններիս կողմից իրենց մասնակցության արդյունքում սրանձնած ռիսկերը, միջնորդավճարները և այլ նյութական ծախքերը գնահատելու համար: Բոլոր համապատասխան կանոնները և հիմնական ընթացակարգերը պետք է լինեն հրապարակային:

Այս սկզբունքը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղեկատվությունը պետք է բացահայտվի այնքանով, որքանով այն ռիսկի չի ենթարկի ՖՇԵ-ի անվտանգությունն ու ամբողջականությունը և չի ենթադրի առևտրային կարևոր տեղեկատվության բացահայտում: Այս սկզբունքը պետք է դիտարկվի նաև հաշվարկների վերջնականությանն առնչվող Սկզբունք 8-ի, մասնակիցների կողմից պարտավորությունների չկատարման կանոններին և ընթացակարգերին առնչվող Սկզբունք 13-ի, ինչպես նաև Առևտրի ռեպոզիտարիաների կողմից շուկայական տվյալների բացահայտման մասին Սկզբունք 23-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. ՖՇԵ-ն պետք է սահմանի հստակ և ամբողջական կանոններ ու ընթացակարգեր, որոնք ամբողջությամբ հասանելի են մասնակիցների համար: Համապատասխան կանոններն ու առանցքային գործընթացները պետք է նաև լինեն հրապարակային:

Կանոններ և ընթացակարգեր

Հ. 23.1.1 Ի՞նչ փաստաթղթերի ամբողջությունն է կազմում ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը: Ինչպե՞ս են այդ փաստաթղթերը հասանելի մասնակիցներին:

Հ. 23.1.2 Ինչի՞ հիման վրա է ՖՇԵ-ն ենթադրում, որ իր կանոններն ու ընթացակարգերը հստակ են և ամբողջական:

Տեղեկատվության բացահայտում

Հ. 23.1.3 Ի՞նչ տեղեկատվություն են պարունակում ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը՝ ոչ բնականոն, բայց կանխատեսելի իրավիճակներում ՖՇԵ-ի կողմից իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Հ. 23.1.4 Ինչպե՞ս և ո՞ւմ է ՖՇԵ-ն տեղեկատվություն տրամադրում իր կանոններում և ընթացակարգերում փոփոխություններ իրականացնելու իր գործընթացների վերաբերյալ:

Հ. 23.1.5 Ինչպե՞ս ՖՇԵ-ն տեղեկատվություն տրամադրում հանրությանը՝ իր համապատասխան կանոնների և առանցքային գործընթացների վերաբերյալ:

Առանցքային դրույթ 2. ՖՇԵ-ն պետք է հստակ նկարագրված տեղեկատվություն տրամադրի իր համակարգի կառուցվածքի և իրականացվող գործառնությունների, ինչպես նաև իր և իր մասնակիցների իրավասությունների և պարտավորությունների վերաբերյալ, որպեսզի մասնակիցները կարողանան գնահատել ՖՇԵ-ում մասնակցության արդյունքում առաջացող իրենց հնարավոր ռիսկերը:

Հ. 23.2.1 Ի՞նչ փաստաթղթերում է ներկայացված տեղեկատվություն, որն առնչվում է համակարգի կառուցվածքին ու գործառնություններին: Ինչպե՞ս և ո՞ւմ է ՖՇԵ-ն տեղեկատվություն տրամադրում իր կառուցվածքի և գործառնությունների վերաբերյալ:

Հ. 23.2.2 Ինչպե՞ս և ո՞ւմ է ՖՇԵ-ն տեղեկատվություն տրամադրում, թե որքանով է այն իրավասու ինքնուրույն որոշում կայացնելու առանցքային այն դրույթների վերաբերյալ, որոնք անմիջականորեն անդրադառնում են համակարգի գործունեության վրա:

Հ. 23.2.3 Ի՞նչ տեղեկատվություն է ՖՇԵ-ն տրամադրում իր մասնակիցներին՝ կապված վերջիններիս մասնակցության արդյունքում առաջացող իրավասությունների, պարտավորությունների և հնարավոր ռիսկերի հետ:

Առանցքային դրույթ 3. ՖՇԵ-ն պետք է անհրաժեշտ համապատասխան փաստաթղթեր տրամադրի և վերապատրաստման ծրագրեր կազմակերպի իր մասնակիցների համար, որպեսզի վերջիններս հստակ պարկերացնեն ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը և կարողանան գնահատել իրենց մասնակցության արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերը:

Հ. 23.3.1 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն նպաստում, որ իր մասնակիցներին հասկանալի լինեն իր կանոններն ու ընթացակարգերը և մասնակցության հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հ. 23.3.2 Կա՞ն արդյոք հիմնավորումներ, որ վերոնշյալ միջոցները հնարավորություն են տալիս մասնակիցներին հասկանալու ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը և պատկերացնելու մասնակցության հետ կապված հնարավոր ռիսկերը:

Հ. 23.3.3 Ի՞նչ շտկող գործողություններ է իրականացնում ՖՇԵ-ն, եթե բացահայտում է, որ մասնակիցի վարքագիծը վկայում է այն մասին, որ վերջինս չի հասկանում ՖՇԵ-ի կանոններն ու ընթացակարգերը և մասնակցության հետ կապված հնարավոր ռիսկերը:

Առանցքային դրույթ 4. ՖՇԵ-ն պետք է հրապարակայնորեն բացահայտի իր կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության դիմաց գանձվող միջնորդավճարները, ինչպես նաև իր քաղաքականությունը ցանկացած գործող զեղչերի վերաբերյալ: ՖՇԵ-ն պետք է հստակ նկարագրի իր բոլոր վճարովի ծառայությունները՝ համեմատելիության ապահովման համար:

Հ. 23.4.1 Հրապարակայնորեն բացահայտում է արդյոք ՖՇԵ-ն իր կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության դիմաց գանձվող միջնորդավճարները, ինչպես նաև իր քաղաքականությունը գործող զեղչերի վերաբերյալ: Ինչպե՞ս է ապահովվում այդ տեղեկատվության հրապարակայնությունը:

Հ. 23.4.2 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ապահովում իր ծառայությունների ու սակագների փոփոխությունների մասին մասնակիցներին և հանրությանը ժամանակին տեղեկացումը:

Հ. 23.4.3 Տրամադրու՞մ է արդյոք ՖՇԵ-ն իր վճարովի ծառայությունների հստակ նկարագրություն: Արդյո՞ք այդ նկարագրությունը հնարավորություն է տալիս համեմատելու այլ ՖՇԵ-ների կողմից մատուցվող նմանատիպ ծառայությունները:

Հ. 23.4.4 Տրամադրու՞մ է արդյոք ՖՇԵ-ն տեղեկատվություն իր տեխնոլոգիաների և հեռահաղորդակցման գործընթացների, ինչպես նաև այլ գործոնների վերաբերյալ, որոնք անդրադառնում են ՖՇԵ-ի գործունեության ծախսերի վրա:

Առանցքային դրույթ 5. ՖՇԵ-ն պետք է մշտապես լրացնի և հրապարակայնորեն բացահայտի CPSS-IOSCO-ի կողմից սահմանված ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին առնչվող հրապարակման ենթակա տեղեկատվությունը: ՖՇԵ-ն պետք է առնվազն հրապարակի վճարումների քանակին և ծավալին առնչվող հիմնական տվյալները:

Հ. 23.5.1 Ե՞րբ է ՖՇԵ-ն վերջին անգամ լրացրել և հրապարակել CPSS-IOSCO-ի կողմից սահմանված ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներին առնչվող հրապարակման ենթակա տեղեկատվությունը: Ի՞նչ հաճախականությամբ է այն թարմացվում: Արդյո՞ք այդ թարմացումն իրականացվում է ՖՇԵ-ի գործունեությանը կամ շրջակա միջավայրին առնչվող ցանկացած նշանակալի փոփոխության դեպքում և առնվազն երկու տարին մեկ:

Հ. 23.5.2 Ի՞նչ քանակական տեղեկատվություն է ՖՇԵ-ն հրապարակում: Ի՞նչ հաճախականությամբ է այդ տեղեկատվությունը թարմացվում:

Հ. 23.5.3 Ի՞նչ այլ տեղեկատվություն է ՖՇԵ-ն տրամադրում հանրությանը:

Հ. 23.5.4 Ինչպե՞ս է ՖՇԵ-ն ապահովում այդ տեղեկատվության հրապարակայնությունը: Ի՞նչ լեզուներով է այն տրամադրվում հանրությանը:

ՎՀ	ԱԿԴ	ԱՀՀ	ԳԳ	ԱՌ √
----	-----	-----	----	---------

Սկզբունք 24. Առևտրի ռեպոզիտարիաների կողմից շուկայական տվյալների բացահայտում

Առևտրի ռեպոզիտարիան պետք է համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը տրամադրի իրենց պահանջներին համապատասխան արդիական և ճշգրիտ տեղեկատվություն:

Այս սկզբունքը պետք է դիտարկվի գործառնական ռիսկին առնչվող Սկզբունք 17-ի և անհրաժեշտության դեպքում՝ այլ Սկզբունքների համատեքստում:

Առանցքային դրույթ 1. Առևտրի ռեպոզիտարիան պետք է համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը տրամադրի կարգավորման ակտերով սահմանված և շուկայական սպասումներին համարժեք տվյալներ, որոնք պետք է լինեն ընդգրկուն և բավարար չափով մանրամասն, որպեսզի ապահովվի շուկայի թափանցելիությունը և նպաստի պետական քաղականության այլ խնդիրների իրականացմանը:

Հ. 24.1.1 Ի՞նչ տվյալներ են տրամադրվում Առևտրի ռեպոզիտարիայի կողմից համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը:

Հ. 24.1.2 Ինչպե՞ս է ԱՌ-ն երաշխավորում, որ հրապարակված տեղեկատվությունը արդյունավետ ձևով համապատասխանում է իրավասու մարմինների և հանրության պահանջներին:

Առանցքային դրույթ 2. Առևտրի ռեպոզիտարիան պետք է ունենա արդյունավետ գործընթացներ և մեխանիզմներ՝ համապատասխան իրավասու մարմիններին ժամանակին և պատշաճ ձևով տեղեկատվության տրամադրման համար, ինչը հնարավորություն կտա ապահովելու իրենց կարգավորմանն առնչվող գործառնությունները և այլ իրավական պարտականությունները:

Հ. 24.2.1 Ի՞նչ գործընթացներ և մեխանիզմներ է կիրառում Առևտրի ռեպոզիտարիան՝ համապատասխան իրավասու մարմիններին ժամանակին և պատշաճ ձևով տեղեկատվության տրամադրման համար, ինչը հնարավորություն կտա նրանց ապահովելու իրենց կարգավորմանն առնչվող գործառնությունները և այլ իրավական պարտականությունները:

Հ. 24.2.2 Ինչպե՞ս է Առևտրի ռեպոզիտարիան երաշխավորում, որ համապատասխան իրավասու մարմիններին տեղեկատվության տրամադրումը ապահովված է իրավական, գործընթացային, գործառնական և տեխնոլոգիական տեսանկյունից:

Առանցքային դրույթ 3. Առևտրի ռեպոզիտարիան պետք է ունենա գործուն տեղեկատվական համակարգեր, որոնք տրամադրում են ընթացիկ և պարմական ճշգրիտ տվյալների շարքեր: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի ժամանակին և այնպիսի ֆորմատով, որը հնարավորություն տա հեշտությամբ իրականացնելու վերլուծություններ:

Հ. 24.3.1 Ինչպե՞ս է Առևտրի ռեպոզիտարիան երաշխավորում տվյալների ճշգրտությունը:

Հ. 24.3.2 Ինչպե՞ս է ԱՌ-ն երաշխավորում, որ տվյալները և այլ տեղեկատվությունը տրամադրում են այնպիսի ֆորմատով, որը ընդհանուր առմամբ հասանելի է, համադրելի և հեշտ վերլուծվող: